



European Year of Languages 2001  
Ի հիշատակումս լեզուների տարազանության 2001

Council of Europe  
*Conseil de l'Europe*



# ԵՎՐԱԽՈՐՆՐԴԻ ԼԵԶՎԱԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՈՒ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

**COUNCIL OF EUROPE  
LANGUAGE POLICIES: MODERN  
LANGUAGES  
LEARNING AND TEACHING RESOURCES AND  
CONSIDERATIONS**

ԵՐԵՎԱՆ 2001

YEREVAN STATE LINGUISTIC UNIVERSITY AFTER BRUSOV  
ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



## ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՈՒ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

COUNCIL OF EUROPE  
LANGUAGE POLICIES: MODERN  
LANGUAGES  
LEARNING AND TEACHING RESOURCES AND  
CONSIDERATIONS

«ԼԻՆԳՎԱ» ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2001

ԴՏՅ 800  
ԳՄԴ 81.2  
Ժ - 214

Ժ - 214 Ժամանակակից լեզուների ուսուցման ու դասավանդման  
վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի ժողովածու:  
Երևան: ԵՊԼՅ, Լինգվա 2001, 73 էջ

Ժողովածուում ընդգրկված են ժամանակակից լեզուների ուսուցման ու  
դասավանդման վերաբերյալ փաստաթղթեր և նյութեր:

Խմբագիրներ՝ Ս.Տ.Զոլյան, Մ.Գ.Աստվածատրյան, Ֆ.Յ.Խլղաթյան

#  
#  
/ #  $\frac{4602000000}{0134 (01) - 2001}$  5334

ԳՄԴ 81.2

Թարգմանիչներ՝ Է. Թադևոսյան  
Յ.Յովհաննիսյան  
Գ.Մակարյան  
Յ.Ոչտունի  
Ա.Զրադացյանյան

ISBN 99930-841- 6 - 6

© «Լինգվա» հրատ. 2001թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### COUNCIL OF EUROPE (MEMBERSHIP)

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ /ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ/ .....4

### THE MODERN LANGUAGES PROJECTS (AIMS)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԼՊԱՏԱԿՆԵՐԸ/ .....5

Message from the Secretary General of the Council of Europe .....6

### THE COUNCIL OF EUROPE/ MODERN LANGUAGES (GRAZ)

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ / ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐԱԿԵՆՏՐՈՆ /ԳՐԱՑ/ .....7

### COUNCIL OF EUROPE / COMMITTEE OF MINISTERS

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ / ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ.....20

### COUNCIL FOR CULTURAL CO-OPERATION /EDUC.COM./ "LANGUAGE

POLICIES FOR A MULTILINGUAL AND MULTICULTURAL EUROPE"

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ /ԿՐԹ. ԿՈՄ./

«ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԵՎ ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒՅԹ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ» .....27

### MODERN LANGUAGES: LEARNING, TEACHING, ASSESSMENT.

(A COMMON EUROPEAN FRAMEWORK OF REFERENCE)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ՝ ՈՒՄՈՒՑՈՒՄ, ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ

/ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ/.....37

# COUNCIL OF EUROPE

## AIMS:

- to protect human rights and strengthen pluralist democracy
- to enhance European identity
- seek out solutions to the major problems of our time  
(minorities, intolerance, drugs, environment, etc.)

## ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ

### *Նպատակները*

- պաշտպանել մարդու իրավունքները և ուժեղացնել ժողովրդավարությունը
- ուժեղացնել եվրոպական ինքնությունը
- փնտրել մեր ժամանակի կարևորագույն խնդիրների լուծումներ /փոքրամասնություններ, անհանդուրժողականություն, թմրանյութեր, շրջակա միջավայր և այլն/

# THE MODERN LANGUAGES PROJECTS (SINCE 1962)

## AIMS:

- to protect and develop the rich heritage of linguistic and cultural diversity as a source of mutual enrichment
- to facilitate the mobility of people and the exchange of ideas
- to promote the personal development of the individual as a learner and user of a language
- to make the process of learning more democratic and learner centred
- to improve the quality of communication.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ /1962թ.-ից/

### Նպատակները

- Պաշտպանել և զարգացնել լեզվական ու մշակութային բազմազանության հարուստ ժառանգությունը՝ որպես փոխադարձ հարստացման աղբյուր:
- Հեշտացնել ժողովրդի շարժունակությունը և գաղափարների փոխանակումը:
- Օժանդակել անձի՝ որպես լեզու ուսումնասիրողի և օգտագործողի անհատական զարգացմանը:
- Ուսման գործընթացը դարձնել ավելի ժողովրդավարական և սովորողին նպատակաուղղված:
- Բարելավել հաղորդակցման և ռազմավարության որակը:

## Message from the Secretary General of the Council of Europe

Ես շատ ուրախ եմ, որ Հայաստանը սկսում է իր միջոցառումների շարքը Լեզուների Եվրապական Տարվա առնչությամբ: Եվրախորհրդի և Եվրամիության կողմից կազմակերպված այս յուրահատուկ տարին ներգրավում է 45 պետություններ՝ տեղական, ազգային և եվրոպական մի շարք նախաձեռնություններով:


Մեր նպատակն է խրախուսել մարդկանց սովորել որքան հնարավոր է շատ Լեզուներ: Այսօր Լեզվական հմտություններն անհրաժեշտ են բոլորին: Երբեք ուշ չէ Լեզու ուսումնասիրելը, և ես հուսով եմ, որ Հայաստանում շատերը ցանկություն կհայտնեն 2001 թվականին մի նոր Լեզու ուսումնասիրել:

“Լեզուները՝ բաց դռներ” ահա մեր կարգախոսներից մեկը. դռներ, որոնք աշխատանքի, ուսման և ճանապարհորդելու հնարավորություններ են ընձեռում: Բայց Լեզվի ուսումնասիրությունը նպաստում է ավելիին: Այն առաջարկում է մեզ ներթափանցել այլ հասարակություններ և մշակույթներ, մտածել և գործել այլ կերպ: Այն օգնում է մեզ դրական կողմից ճանաչել այն բազմազանությունը, որն անհրաժեշտ է մեր բազմալեզու և բազմամշակույթ հասարակություններում՝ համերաշխ ապրելու և աշխատելու համար:

2001 թվականին մենք առանձնահատուկ ձևով ենք տոնում Եվրոպայի Լեզվաբանական և մշակութային բազմազանությունը: Մեր մյուս կարգախոսը՝ “Եվրոպան՝ Լեզուների լիություն”, մեզ հիշեցնում է, որ այս բազմազանությունը պետք է դիտել ավելի շուտ որպես հարստացման արժեքավոր աղբյուր, քան հաղորդակցման և համագործակցման հնարավոր խոչընդոտ: Եվրախորհուրդը նպատակ ունի պաշտպանել մեր հարուստ Լեզվական ժառանգությունը և օժանդակել վերջինիս՝ ռեգիոնալ կամ փոքրամասնությունների Լեզուների խարտիայի միջոցով, և մենք անհամբեր սպասում ենք այս խարտիային դեռ չմիացած երկրների կողմից լրացուցիչ վավերացումների՝ 2001 թվականին:

Արդեն երեք տասնամյակ է, ինչ աշխատում ենք և զգալի հաջողություններ ունենք ժամանակակից Լեզուների դասավանդման մոտեցումները բարելավելու գործում: Այս տարի մենք սկսում ենք Լեզուների համաեվրոպական ծրագիր, որպեսզի նպաստենք չափորոշիչների և գնահատման չափանիշների հաստատմանը: Մենք սկսում ենք նաև Լեզուների Եվրոպական անձնագրի ներկայացման գործընթացը մեր անդամ երկրներում: Սա անձին տրվող մի փաստաթուղթ է, որը կաջակցի անհատներին Լեզու ուսումնասիրելու ընթացքում և կօգնի գիտակցել իրենց Լեզվագիտական և միջմշակութային փորձը բոլոր մակարդակներում:

Ես շնորհակալ եմ ձեր մասնակցության համար և մաղթում եմ, որ տարին հաջող և հաճելի լինի:



Վալտեր Շվիներ

# Եվրախորհուրդ

Մշակութային համագործակցության խորհուրդ

Ժամանակակից լեզուների բաժին\*

THE COUNCIL OF EUROPE / MODERN LANGUAGES (GRAZ)

\*\*\*

Եվրախորհուրդը հիմնադրվել է 1949թ. մայիսի 5-ին՝ Եվրոպական պետությունների ժողովրդավարացման պայմաններում: Նրա նստավայրը Ստրասբուրգում է (Ֆրանսիա):

Ունենալով համագործակցության ճկուն համակարգ կառավարությունների, պառլամենտի անդամների և փորձագետների միջև՝ Եվրախորհուրդը փորձում է պաշտպանել և զարգացնել մարդկային իրավունքներն ու ժողովրդավարությունը, ներդաշնակել իր 43 անդամ-երկրների տարբեր ոլորտների քաղաքականությունը, այդ թվում նաև կրթական, մշակութային, հասարակական բարելավման, առողջապահական, միջավայրի, տեղական կառավարման և իրավական բնագավառներում:

Ժամանակակից լեզուների եվրակենտրոնը (ԺԼԵԿ), որը գտնվում է Գրաց քաղաքում, Ավստրիայի, Եվրախորհրդի շրջանակներում ղեկավարում է միայն մշակութային և կրթական համագործակցությունը:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐԱԿԵՆՏՐՈՆ (ԳՐԱՑ) EUROPEAN CENTRE FOR MODERN LANGUAGES (Graz) ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ժամանակակից լեզուների եվրակենտրոնը եվրոպական հաստատության խորհուրդ է, որի նպատակն է աջակցել Եվրոպայում ժամանակակից լեզուների ուսումնասիրմանն ու դասավանդմանը: Այն ստեղծվել է 1994թ. Ավստրիայի և Նիդերլանդների առաջարկով:

Եվրախորհրդի տեղեկատուի համաձայն մասնակի պայմանագիրը (ՄՊ) բնորոշվում է հետևյալ կերպ. համագործակցության մի տեսակ, որը թույլ է տալիս զբաղվելու Եվրախորհրդի ոչ բոլոր երկիր-անդամների կողմից ընդունվող որոշակի գործունեությամբ: Յետևաբար, այդ ծրագրին մասնակցում են միայն հետաքրքրություն ցուցաբերող անդամ-երկրները, որոնք էլ հոգում են ծրագրի հետ կապված ծախսերը: Մասնակի պայմանագրերը նախապես հաստատվել են ՄՊ-ի վերաբերյալ օրենքով սահմանված որոշմամբ (51/62)՝ ընդունված 1951թ. օգոստոսի 2-ին Մինիստրների Կոմիտեի կողմից: Այդ որոշումը վերափոխվել է մասնակի և ընդլայնված պայմանագրերի օրենքով սահմանված որոշմամբ, որն ընդունվել է 1993թ. մայիսի 14-ին դարձյալ Նախարարների Կոմիտեի կողմից:

\* Թարգմանությունը՝ Council of Europe. European Centre for Modern Languages. Graz.



Պայմանագիրը կոչվում է «ընդլայնված», քանի որ ցանկացած ժամանակ նրան կարող են միանալ նոր պետություններ:

Ժամանակակից լեզուների եվրակենտրոնի հիմնադիրները հետևյալ 8 պետություններն են. Ավստրիա, Ֆրանսիա, Յունաստան, Լիխտենշտեյն, Մալթա, Նիդերլանդներ, Սլովենիա և Շվեյցարիա:

Հատկանշական է այն փաստը, որ այդ ութ պետություններին միացել են նաև Նորվեգիան, Խորվաթիան, Էստոնիան, Լյուքսեմբուրգը, Չեխիան, Բուլղարիան, Հունգարիան, Սլովակիան, Անդորրան, Կիպրոսը, Լեհաստանը, Ռումինիան, Լատվիան, Ֆինլանդիան, նախկին Հարավսլավիան և Իսլանդիան: Եվ, այսպիսով, ԺԼԵԿ անդամ-պետությունների թիվը 1998թ. հունվարի 1-ի դրությամբ 24 էր: Սուտ ժամանակներս ՄԴ-ին կմիանան նաև այլ պետություններ, և անդամների թիվը կհասնի Եվրախորհրդի բոլոր անդամ- պետությունների մոտ 2/3-ին:

Եվրոպական մշակութային կոնվենցիայի մեջ մտնող 47 երկրները մեծ հետաքրքրություն ունեն ԺԼԵԿ-ի գործունեության նկատմամբ: Իսկ այդ պետություններից 34-ը այժմ մասնակցում են նրա գործունեությանը (24 անդամ-պետություններ և 10 պետություն Կենտրոնական, Արևելյան ու Անդրկովկասյան Եվրոպայից՝ Ադրբեջան, Ալբանիա, Բելառուս, Բոսնիա, Լիտվա, Հայաստան\*, Հերցեգովինա, Սլովովա, Ռուսաստան և Ուկրաինա:

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԺԼԵԿ-ի գործունեության քաղաքական համակարգը նույնն է, ինչ Եվրախորհրդինը: Վերջինս հաստատվել է ստեղծելու համար մեծ միություն իր անդամների միջև՝ այն իդեալների և սկզբունքների պաշտպանության ու իրագործման նպատակով, որոնք համարվում են նրանց ընդհանուր ժառանգությունը և խթանում տնտեսական ու սոցիալական առաջընթացը: Այդ նպատակին կարելի է հասնել ընդհանուր խնդիրների քննարկումների, պայմանագրերի, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, իրավական և վարչական ոլորտներում համատեղ աշխատանքներ կատարելու, ինչպես նաև ազատության ու մարդկային իրավունքների պաշտպանության միջոցով:

Եվրախորհրդի առաջնային խնդիրներից է համարվում ժամանակակից լեզուների տարածումը: Եվրոպական ինտեգրացմանը հասնելու համար անհրաժեշտ են այն կարևոր նախապայմանները, որոնք հնարավոր են դարձնում հաղորդակցման բոլոր ձևերի իրականացումը անդամ-պետությունների և քաղաքացիների միջև, որոնց լեզվական և մշակութային ավանդույթները հանդիսանում են փոխհարստացման աղբյուր:

Ժամանակակից լեզուների Եվրակենտրոնն ամբողջական մասնակցություն ունի այդ քաղաքականությանը:

---

\* ՀՀ ԱԺ-ը ծրագրել է այս տարվա ընթացքում վավերացնել մասնակի ընդլայնված համաձայնագիր, որի արդյունքում Հայաստանը դառնալու է ԺԼԵԿ-ի պետություն-անդամ:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԵՎՐԱԿԵՆՏՐՈՆԻ (ԺԼԵԿ) ԴԵՐՈ

1998թ. հուլիսի 2-ին Մինիստրների Կոմիտեի կողմից ընդունված որոշմամբ (98) 11, ԺԼԵԿ-ի խնդիրն է.

- լեզվի դասընթացների կազմակերպում,
- աջակցություն ժամանակակից լեզուների ուսումնասիրման և դասավանդման նորարարական մեթոդների ներդրման հարցերում:

Կենտրոնի ռազմավարական նպատակներն են.

- կենտրոնանալ ժամանակակից լեզուների ուսումնասիրման և դասավանդման գործնական խնդիրների վրա,
- աջակցել մասնակիցների փոխհարաբերությանն ու փոխանակմանը,
- օժանդակել ծրագրի հետ կապված ցանցերի և հետազոտությունների նախագծերին:

## ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ /INTERVENTION METHODS/

Գրաց քաղաքում գտնվող Կենտրոնի հիմնական նպատակն է միջազգային սեմինարների, ինչպես նաև խորհրդակցությունների միջոցով որոշակի ծրագիր և հանդիպման վայր տրամադրել լեզվի դասընթացների պատասխանատու անձանց, դիդակտիկայի մասնագետներին, ուսուցիչներին, վերապատրաստողներին, դասագրքերի հեղինակներին:

Կենտրոնն իր խնդիրն է համարում խրախուսել լեզվի դասընթացների և նորարարությունների իրականացումը, լեզվի դասավանդման և ուսումնասիրման հարցերում արդյունավետ պրակտիկայի ներդրումը, ինչպես նաև լեզվական տարբերությունների համալրումը բազմալեզու, բազմամշակութային, դեմոկրատական և հանդուրժողական Եվրոպայում:

1996 թվականից Կենտրոնի գործունեությունն ընդլայնվել է և համապատասխանաբար դարձել ավելի բազմազան: Այն այժմ ներառում է.

- հատուկ ապակենտրոնացված գործունեության կարիք ունեցող երկրների համար /Բոսնիա և Հերցեգովինա, Ալբանիա, նախկին Հարավսլավիա և այլն/,
- մոտավարապես 15 միջազգային սեմինար Գրացում,
- համատեղ ֆինանսավորված սեմինարներ /Գրացում և այլուր/ և հայրենիքում անցկացվող սեմինարներ /այլ հաստատությունների մասնակցությամբ/,
- խորհրդակցություններ և կոնֆերանսներ կարևոր թեմաների շուրջ /միայն հրավերով/,
- ուսումնասիրություններ սեմինարի կամ զրույցի/կոնֆերանսի հետ կապված, հատուկ թեմաների վերաբերյալ,
- հետազոտությունների ծրագրեր,
- փորձագետների խորհրդակցություններ և հանդիպումներ,
- նախապատրաստական և հաջորդող սեմինարներ:

Կենտրոնի գործունեությունը լիովին ընդգրկում է կրթության բոլոր մակարդակները՝ տարրականից մինչև բարձրագույնը, և նրա դռները բաց են

Եվրոպայի մշակութային ու լեզվական կրթական ցանցերի առջև: Կենտրոնը հատուկ ուշադրություն է դարձնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին:

ԺԼԵԿ-ը, որի քարտուղարությունն այժմ ունի 6 պրոֆեսիոնալ մասնագետ, գործում է 1995թ. մայիսից: 1997թ-ից Կենտրոնի գործունեությունն իրականացվում է Մինիստրների Կոմիտեի կողմից ընդունած որոշման համաձայն (98) 11:

## **ՋԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Իր ինքնությունը հաստատելու և Եվրոպայում ճանաչված ու բարձրորակ կենտրոն դառնալու համար ժամանակակից լեզուների եվրակենտրոնը /ԺԼԵԿ/ հետապնդում է հատուկ նպատակներ: Դրանք սահմանվել են առաջին ժողովի ժամանակ՝ 1995թ. դեկտեմբերին: Այդ նպատակներն են.

- ինքնավար ուսումնասիրում և վերապատրաստում ժամանակակից լեզուների տարածքում,
- լրատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների իրականացում,
- միջմշակութայնություն և վավերականություն,
- լեզվի ծրագրի հատուկ և հայեցակերպեր,
- ուսուցիչների վերապատրաստում և ուսումնական պլանի բարեփոխում,
- արդյունավետ պրակտիկայի ներդրումը սեմինարի ղեկավարման հարցում, ինչպես նաև արդյունքների կիրառում:

## **ԺԼԵԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՄՅԻՆ /ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ/ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԵՎ**

Ավելորդ ջանքերից և ռեսուրսների կորստից խուսափելու համար Գրացի Կենտրոնի և մշակութային համագործակցության խորհրդի /ՄՅԻՆ/ միջև կատարված է աշխատանքի բաժանում:

Աշխատանքի բաժանման հիմքում ընկած գործառույթները հետևյալն են.

## **ԺԼԵԿ**

- փոխհարաբերության և փոխանակման աջակցություն,
- մասնակիցների վերապատրաստում. ծրագրի իրականացման և նորարարության գործնական ասպեկտներ, հատուկ աջակցություն կարիք ունեցող երկրներին,
- հետազոտական նախագծեր առաջնային թեմաների վերաբերյալ (ԺԼԵԿ-ի կամ ՄՅԻՆ-ի կողմից կազմակերպված սեմինարներով),
- ցանցային կամ հաջորդող սեմինարի գործունեություն՝ արդյունավետ պրակտիկայի ներդրմանն աջակցելու նպատակով,
- տեղեկատվական գործառույթություն. փաստաթղթերի կենտրոն, ինտերնետ էջ, զեկույցներ՝ Եվրոպայում տեղեկություն մատակարարողների վերաբերյալ:

## ՄՅԽ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ /ՍՏՐԱՍԲՈՒՐԳ/

- ուսումնասիրման, դասավանդման, գնահատման ծրագրավորում և բարելավում լեզվի ուսումնասիրման հարցում, ընթացիկ մեթոդների ու նախաձեռնությունների մշակում /կառուցվածք, հայեցակարգ և այլն/,
- լեզվի ծրագրային միջոցներ. հանձնարարականներ և ուղեցույցներ, ծրագրի փորձարկում և վերլուծություն կրթական ու լեզվական օրենսդրության վերաբերյալ,
- իրազեկության ուժեղացում. գործնական միջոցների կիրառում լեզուներ ուսումնասիրելու կարևորությունը շեշտելու նպատակով /օրինակ՝ լեզուների եվրոպական տարի/,
- աջակցություն նորարարությանը, հետազոտական ուսումնասիրություններ նոր գաղափարների քննարկումները զարգացնելու և խրախուսելու վերաբերյալ:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի ՄՅԽ-ի հետ ունեցած կապերից, ԺԼԵԿ-ը զարգացնում է իր համագործակցությունը նաև այլ հաստատությունների հետ.

- եվրոպական հանձնաժողով /կրթության, վերապատրաստման և երիտասարդության/,
- համատեղ գրույցների կազմակերպում և ֆինանսավորում,
- մասնակցություն լեզվի ուսուցման բնագավառում՝ որպես մասնագիտական վերապատրաստական մասի,
- միջազգային այլ կազմակերպություններ. Linguapax (UNESCO), Համաշխարհային բանկ, վերապատրաստման եվրոպական հիմնադրամ և այլն,
- լեզուները և նրանց աջակցությունը խաղաղության գործին,
- մասնակցություն Tempus ծրագրերին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում,
- CILT (Լեզվի ուսուցման և հետազոտման ինֆորմացիոն կենտրոն /Լոնդոն/),
- իրական միջոցների ստեղծում,
- երկկողմ համագործակցություն ժամանակակից լեզուների բնագավառում /լեզվական և կրթական համագործակցության գրասենյակներ, Գյոթեի ինստիտուտ, Բրիտանական Խորհուրդ, լեզվի և մշակույթի կենտրոններ Ավստրիայում և այլն/,
- կապեր բազմակողմ և երկկողմ համագործակցությունների միջև,
- ոչ պետական կազմակերպություններ կամ հիմնադրամներ.
- համագործակցության ծրագրեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում (ծրագրերի բարեփոխումներ, ուսուցիչների վերապատրաստում, հատուկ աջակցողական ծրագրեր):

## ԺԼԵԿ-Ի ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ժամանակակից լեզուների եվրակենտրոնը, արդյունավետ համագործակցելով այլ հաստատությունների հետ, աջակցություն է ցուցաբերում Եվրոպայում ժամանակակից լեզուների և բազմալեզվության ասպարեզում:

Հետագայում ժԼԵԿ-ը կփոխի իր պահանջները անդամ-երկրների նկատմամբ: Նա կշարունակի զարգացնել ընկերակցությունը ՄՅԽ-ի և այլ հաստատությունների հետ եռամյա գործունեության շրջանակներում:

Լեզվի նորարարական ուսուցմանն ու վերապատրաստմանն աջակցելու միջոցով ժԼԵԿ-ը հետագայում էլ կաշխատի Եվրոպական քաղաքակրթության զարգացման ուղղությամբ, որն ավելի ակտիվ է, պատասխանատու, բազմալեզու և դյուրագրգաց Եվրոպական մշակույթի բազմազանության նկատմամբ:

## Ինֆորմացիա

Ժամանակակից լեզուների Եվրակենտրոն

A-8010 Graz

Mozarthof, Schubertstraße 29

e-mail: [ecml@via.at](mailto:ecml@via.at)

Tel ++43 (0) 316 / 32 35 54

Fax ++43 (0) 316 / 32 21 57

Internet:

<http://culture.coe.fr/ecml>

<http://www.ecml.at>

կամ

/ավստրիական ասոցիացիա/

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

/Ստրասբուրգ/\*

Կրթության և մշակույթի բնագավառի աշխատանքները Եվրախորհրդում կատարվում են մշակութային համագործակցության խորհրդի /ՄՅԽ/ Council for Cultural Co-operation (CDCC) հովանու տակ, որի կազմի մեջ մտնում են 47 երկրներ (43 անդամ-երկրներ՝ Ալբանիա, Անդորրա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիա, Ղանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լիխտենստայն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոլդովա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստան, Սան-Մարինո, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, Շվեյցարիա, Սակեդոնիա, Թուրքիա, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան և անդամության հայտ ներկայացրած 4 երկրներ՝ Բոսնիա-Հերցեգովինա, Բելառուս, Սոնակո, Վատիկան): ՄՅԽ-ի գործունեության հիմնական նպատակն է Եվրոպայում զարգացնել կրթության այնպիսի համակարգ, որ Եվրոպացիներին հնարավորություն կտա պահպանելու ինքնության զգացումը և զարգացնելու կրթության ու մշակութային փոխհարաբերությունները:

Ժամանակակից լեզուների սերտաճման բնագավառում ՄՅԽ-ն իր նպատակն է համարում աջակցել անդամ-երկրներին արդյունավետ միջոցների ձեռքբերման հարցում, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան փոխըմբռնման նպատակով ուսումնասիրել լեզուներ: Այս նպատակներն ուղղված են օգնելու իրականացնել ռեֆորմներ և աջակցել ու հովանավորել լեզուների

\* Թարգմանությունը՝ Council of Europe and Modern Languages. Modern Languages Projects. Strasbourg.

դասավանդման և ուսուցիչների վերապատրաստման նորամուծություններին: Աջակցել լեզվի ուսուցմանը, հաշվի առնելով սովորողների պահանջները և հակումները, մոտիվացիան, ինչպես նաև եվրոպական հասարակության արագ փոփոխությունները՝ պատրաստելով ուսուցիչներ և ուսուցիչներ վերապատրաստողներ:

ՄՀԽ-ն իր նպատակները փորձում է իրականացնել լեզվի ուսուցմամբ, հիմնվելով սովորողի կարիքների և մոտիվացիայի վրա, և պայմաններ ստեղծել ուսուցիչների ու ուսուցիչ վերապատրաստողների համար իրենց դերը խաղալու եվրոպական հասարակության արագ փոփոխությունների մեջ /ընթացքում և վերելքում/:

### **ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Եվրախորհուրդը կարևորում է երկիր-անդամների բազմալեզվության և մշակույթների զարգացումը: Խորհրդի գործունեությունը նպատակամղված է աջակցելու բազմալեզվությունը՝ բարելավելով անհատների միջև հաղորդակցումը և փոխըմբռնումը:

Եվրոպան կա և կմնա բազմալեզու: Ուստի Եվրախորհուրդը մշակութային համագործակցության խորհրդի ժամանակակից լեզվական մի շարք հաջող ծրագրերի միջոցով զարգացնում է լեզվաքաղաքականությունը հետևյալ նպատակներով.

- Պահպանել և զարգացնել լեզվական ժառանգությունը և Եվրոպայի մշակութային բազմազանությունը՝ որպես փոխըմբռնման զարգացման աղբյուր և այդպիսով հնարավորություն ընձեռել եվրոպացիներին ընդունելու, հասկանալու և հարգելու այլոց տեսակետները, զգացմունքները, հավատքն ու սովորույթները:
- Այդ նպատակներին հասնելու նկատառումով Եվրախորհուրդը կազմել է տարածաշրջանային փոքրամաս լեզուների հրովարտակ: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին կոնվենցիան նույնպես նպաստում է այդ նպատակների իրականացմանը՝ հեշտացնել մարդկանց գաղափարների տեղաշարժերը՝ նպաստելով տարբեր լեզուներում հաղորդակցման կարողության զարգացմանը, ինչը հնարավոր է դարձնում անհատների արդյունավետ աշխատանքը:
- Ներդաշնակ մոտեցում զարգացնել լեզուների ուսուցման ասպարեզում, որը հիմնված է միջազգային համագործակցության գաղափարի, անդամ-երկրների փորձի և այդ ասպարեզում կատարված հետազոտությունների վրա: Սրա նպատակն է աջակցել աշակերտ-անձին ուղղված լեզուների մատուցմանը՝ միաձուլելով փորձը և գնահատման չափանիշները:
- Աջակցել լայնամասշտաբ բազմալեզվությանը՝ ներգրավելով անդամ-երկրներին:
- Խրախուսել բոլոր եվրոպացիներին հասնելու հաղորդակցման շեմին՝ շարունակելով լեզվի ուսումնասիրությունը իրենց ամբողջ կյանքում (lifelong learning):
- Ընդլայնել լեզուների առաջարկված ցուցակը և ճշտել յուրաքանչյուր լեզվի համապատասխան խնդիրները:
- Զարգացնել առավել ճկուն մոտեցումներ լեզուների բազմազանության պայմաններում (օրինակ՝ մոդուլային ուսուցման տարբեր մակարդակները արտացոլող ընդհանուր լեզվի տիրապետումը) :

- Կիրառել համաեվրոպական մոտեցումներ՝ բարելավելով լեզվի ուսուցման և դասավանդման որակը:
- Հետազոտել ինտերակտիվ եվրոպայում լեզվաքաղաքականությունը ընդլայնող սկզբունքները:

Բազմալեզվության զարգացումը անհրաժեշտ է համաձայնության արժեքների ընկալման, զարգացման և միջազգային համագործակցության շարժունության համար:

### **ՃԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐՈՇ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ**

Եվրախորհրդի երկրների ակտիվ աջակցությամբ հաջող ծրագրեր ընդունվեցին լեզուների ուսուցման խնդիրների և սկզբունքների որոշման վերաբերյալ:

Լեզուների ուսուցումն այսօր եվրոպայում բնակվող յուրաքանչյուր քաղաքացու համար պահանջ է և իրավունք, հետևաբար այն պետք է հիմնված լինի սովորողների բազմատեսակ պահանջների և հետաքրքրությունների վրա:

Գործնական հաղորդակցման կարողությունների զարգացումը էական է և դրանք հետագայում պետք է զարգացվեն ու զանազանվեն ամբողջ կյանքի ընթացքում:

Ստորև տրված են մի քանի հիմնական ասպարեզներ, ուր ժամանակակից լեզուների ծրագրերը հատկապես ընդունելի են:

- իրագործելի, հասանելի խնդիրների հատկորոշում, ուսուցման և դասավանդման շեմային մակարդակ (threshold level),
- սովորողին ուղղված հաղորդակցման մեթոդական աջակցում,
- լեզվի միջնաշակութային զարգացում ուսուցման/դասավանդման ասպարեզում,
- միջազգային սեմինարների և աշխատանքային այլ ցանցերի օգնությամբ ուսուցիչների բարձրորակ վերապատրաստում,
- համագործակցություն ազգային լեզվի ուսուցողական ծրագրերի բարեփոխումների հետ:

Սկզբնական ծրագրերը (յուրաքանչյուր ծրագիր իրենից ներկայացնում է միջժամկետ-մեդիում (medium-term) ծրագիր՝ իր առանձնահատուկ խմբերով, թեմայով, առաջարկություններով և աշխատանքային մեթոդներով) ուղղված են միջազգային համագործակցության կառույցների ստեղծմանը: Հետագա ծրագրերը զարգացնում են հիմնական լեզվական և կրթական սկզբունքները, որոնք հետագայում պետք է ներմուծվեն դպրոցներ:

### **ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ (1990-1996)**

Սա նոր ծրագիր է, որը ենթարկվում է նորացող, արագ ծավալվող եվրոպայի պահանջներին և որն իր հերթին ուղղված է հետևյալ առաջնային բնագավառներին.

- սոցիալ-մշակութային և սովորեցնել սովորելու (learning to learn) տարբեր մակարդակներում ուսուցման նպատակների նոր և լայն շրջանակներ,
- հիմնադրույթներ կրթության վերաբերյալ, փորձի փոխանակում և միավորում լեզու դասավանդելու և սովորելու գործընթացում,

- երկլեզու գոտիներում երկլեզվության պայմաններում, այդ թվում նաև դպրոցներում, որտեղ օտար լեզուն կիրառվում է այլ առարկաների ուսուցման համար, ուսուցման մեթոդների փոփոխություններ և նրանց արմատավորումը դասավանդման և ուսուցման տեխնոլոգիայում,
- սովորեցնել սովորելու համար (աջակցել՝ ցուցաբերելով իրենց վերաբերմունքը, գիտելիքները, ստրատեգիաները՝ շարունակելով ուսուցումը իրենց կյանքի ընթացքում),
- տիրապետող լեզվի մակարդակի գնահատում:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ**

Անդամ-երկրներում անցկացվել են 31 միջազգային սեմինարներ՝ իրենց մշակութային և ուսուցողական լայն համատեքստով: Դրանք վկայում են Եվրոպայի մշակութային համագործակցության խորհրդի անդամ-երկրների ավելի քան 2000 մասնակիցների մեծ փորձի մասին:

Այդ սեմինարները պայմանավորել են եվրոպական համաձայնություն տարբեր ասպեկտներում, զարգացնում են նոր մոտեցումներ և նմուշներ պրակտիկայում, դրանք նույնպես օժանդակում են ուսուցիչների վերապատրաստմանը և նոր ուսումնական նյութերի ու մեթոդների զարգացմանը:

## **ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՆՈՐԱՆԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ**

Նորանկախ դեմոկրատիայի համար արագորեն մշակվեցին հատուկ ծրագրեր՝ ընդգրկելով միջազգային սեմինարներ՝ դրա հետ կապված՝ փոխներգործություն (interaction) աշխատանքային ցանցերով: Այդ սեմինարները պայմանավորված են եվրոպական համաձայնագրի տարբեր հայեցակերպերով, զարգացնում են նոր մոտեցումներ և նմուշներ լավ պրակտիկայում, դրանք նույնպես նշանակալիորեն օժանդակում են ուսուցիչների վերապատրաստմանը, ուսումնական նյութերի և մեթոդների զարգացմանը: Բացի դրանից, հատուկ աշխատանքային ծրագրեր են մշակվել, որոնք վերաբերվում են բազմալեզու հասարակության լեզվաքաղաքականության զարգացմանը, հատկապես լեզվաօրենսդրությանը, էթնիկական փոքրամասնությունների կարգավիճակին: Այս համատեքստում Եվրախորհրդի և Եվրամիության միջև միացյալ ծրագիրը իրականացվում է՝ հեշտացնելով ժողովուրդների ինտեգրացիան Լիտվայում և Էստոնիայում:

## **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Սերտ համագործակցությունը, կապված Գրացի Ժամանակակից լեզուների Եվրակենտրոնի գործունեության, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների և այդ բնագավառում այլ համագործակիցների հետ:



## ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

(ԱՊՐԻԼ 1997, ԱՏՐԱՍԲՈՒՐԳ)

Վերջին նախագիծն ավարտվեց միջկառավարական կոնֆերանսով, որին մասնակից էին 300 անդամներ երկրներից՝ ամփոփելով և զնահատելով արդյունքները և երաշխավորելով պետությունների ապագա գործունեությունը լեզուների ուսուցման վերաբերյալ (տե՛ս կոնֆերանսի և ծրագրի վերջնական զեկույցը):

### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Լույս տեսան մի շարք նախագծեր, որոնք ամփոփում էին հիմնական արդյունքները: Դրանցից մի քանիսը տպագրվեցին այնպիսի հրատարակչությունների կողմից, ինչպիսիք են, Hachette/Le Francais dans le Monde, Cambridge University Press (զեկույց-ամփոփագրերը 31 սեմինարների յուրաքանչյուրի մասին տե՛ս նյութերի ցանկը):

**ԾՐԱԳԻՐ**  
**ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԵՎ ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ**  
**ՀԱՄԱՐ (1997-2000)**

Այս նոր միջին ծրագրի նպատակներն են.

- Օգնել ազգային իշխանություններին աջակցելու բազմալեզվության և մշակույթների զարգացմանը՝ բարձրացնելով հասարակական գիտակցությունը լեզվի դերի վերաբերյալ:
- Ջարգացնել գաղափարներ, ստրատեգիաներ, մոտեցումներ՝ աջակցելու լեզվի տարածմանը և բարձրացնելու լեզվի դասավանդման և ուսուցման մակարդակը:
- Աջակցել լեզվի ուսուցմանը և դասավանդմանը սկզբնական փուլերից սկսած՝ յուրաքանչյուր աշակերտի ներգրավելով եվրոպական մշակույթի և լեզվագիտության ասպարեզ:
- Ջարգացնել և կիրառել համաեվրոպական մեթոդներ, որոնք կալանավորեն և կհիմնավորեն լեզվի ուսուցումը քաղաքականության զուգակցությամբ:
- Ջարգացնել մեթոդներ և աշխատանքային ցանցեր մոդուլային դասընթացների իրականացման համար :
- Ջարգացնել հետագա միջմշակութային կապերը լեզվի ուսուցման և դասավանդման ասպարեզում:
- Հրապարակել ծրագրի արդյունքները (հրատարակությունների, սեմինարների, ինտերնետից վերցրած տվյալների և այլնի միջոցով):

**ՇԵՄԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ (THRESHOLD LEVEL)**

Շեմային մակարդակը ապահովում է գործնական կաղապարներ, որոնց օգնությամբ սովորողները պետք է ի վիճակի լինեն օգտագործելու լեզուն ամենօրյա կյանքում:

Այս գործնական գույքացուցակը օգտագործվել է շեմային մակարդակներում նույնացնելու գիտելիքը և հմտությունը, որն անհրաժեշտ է հաղորդակցման նպատակով: Շեմային ստորին և վերին մակարդակների նույնպիսի նկարագրություններն արդեն պատրաստ են: Գիտելիքների և հմտությունների երեք մակարդակային համակարգերն այժմ միաձուլվել են արդեն եղած լեզվի տիրապետման համընդհանուր ուղեցույցի նկարագրություններում, և այն օգտագործվում է համաեվրոպական և ազգային կառույցներում որպես հիմք իրենց լեզուն ուսուցանող ծրագրերում և դիպլոմային աշխատանքներում (օրինակ Լեզվական տեստավորողների միությունը Եվրոպայում):

**ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Տարբեր երկրներում կրթական համակարգերի միջև գոյություն ունեն սերտ կապեր: Շարժունակությունն աճում է, և մարդիկ շարունակում են լեզուներ սովորել իրենց կյանքի ամբողջ ընթացքում: Դրա հետևանքով յուրաքանչյուրն ի վիճակի կլինի ընկալելու տարբեր ազգային համակարգեր և հատկապես ազգային առանձնահատկությունները: Շփումը առաջ է բերում թափանցիկության և պարզության պահանջ: Համաեվրոպական հայեցակարգն օգնում է իրականաց-

նելու այդ պահանջը: Հայեցակարգի հիմնակետերն են ընթացակարգը և հասանելիությունը:

Հայեցակարգն իրենից ներկայացնում է պլանավորող ծրագիր լեզվի ուսուցման ասպարեզում՝ ապահովելով գնահատականների, մեթոդների և խնդիրների նկարագրությունը: Դրանից բացի, ընդհանուր ծրագիրը երաշխավորում և գնահատում է լեզվի ուսուցման հմտությունները, արտահայտելով այն տերմիններով, որոնք բոլորը համապատասխանում են նկարագրությանը և մատչելի ու արդյունավետ են դարձնում դասավանդողների, դաստիարակների, քննողների, ուսուցողական ծրագրեր կազմողների և դասագրքերի հեղինակների համար:

Սրանից բացի, ստեղծվել է համընդհանուր մի ուղեցույց, որը փորձարկվում է ժամանակակից լեզուների եվրակենտրոնի հետ այդ գործընթացում: Անցկացվում են տարբեր սեմինարներ Գրաց քաղաքում մուլտիպլիկատորների համար:

### **ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (Portfolio)**

Սույն ծրագիրը /պորտֆոլիո/ իրենից ներկայացնում է մի փաստաթուղթ, որում սովորողները կարող են նշել իրենց որակավորումը և առաջադիմությունը, ինչպես նաև այլ կարևոր լեզվագիտական և մշակութային հմտություններ: Եվրոպական լեզվի՝ ներկայացվող պորտֆոլիոյի նպատակն այն է, որ նա իր ներուժն օգտագործի եվրոպայում բնակվող քաղաքացիների եվրոպական դեմոկրատական համագործակցության և շարժունակության գործընթացում և դրա հետ միասին լեզվի ուսուցման գնահատման համար ստեղծել մի համակարգ:

Սույն պորտֆոլիոն բաղկացած է 3 մասից. ա) ձևական որակավորումների գրանցման անձնագիր, բ) լեզվական ինքնակենսագրություն, որում նկարագրվում է լեզվի տիրապետման ունակությունը և ուսուցման փորձը, գ) հաշվետվություն, որում կարող է տեղ գտնել սովորողի անձնական աշխատանքը:

Պորտֆոլիոյի ժամկետը չի նշվում, քանի որ լեզվի ուսուցումն անդադար պետք է շարունակվի և զարգանա:

Այդ ծրագիրն ունի 2 հիմնական նպատակ.

- 1) սովորողներին դրդել ընդունելու իրենց փորձը, ընդարձակելու և տարածելու իրենց լեզվական հմտությունները բոլոր մակարդակներում և իրենց կյանքի ամբողջ ընթացքում,
- 2) ապահովել նրանց կողմից ձեռք բերված լեզվագիտական և մշակութային հմտություններն ու կարողությունները:

Սերտ կապեր գոյություն ունեն համաեվրոպական նախագծի և եվրոպական լեզվի պորտֆոլիոյի միջև:

### **ՍՈՂՈՒԼԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համատեքստերի, ուղեցույցների և այլ նյութերի ապահովումը մոդուլային արդյունավետ իրականացումը գործնական ծրագրերում հիմք են ծառայում մոդուլային դասընթացների կազմակերպման համար: Նման դասընթացներ

կազմակերպվում են այն անձանց համար, ովքեր օտար լեզու են սովորում ոչ մասնագիտական նկատառումներով:

### ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԻ

Լեզուների եվրոպական տարի է հայտարարված 2001 թվականը: Սրա կարևորությունն այն է, որ նպատակ ունի լեզվի ուսուցումն ընդգրկել Եվրոպայի բազմալեզու և բազմամշակութային հանրության բոլոր ոլորտներում՝ ուսման, աշխատանքի, ազատ ժամանցի՝ նպաստելով համագործակցությանը և փոխըմբռնմանը:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ

Ժամանակակից լեզուների բաժնում  
Կրթության, մշակույթի և սպորտի բաժին  
Եվրախորհուրդ  
F- 67075 Ստրասբուրգ  
Հեռ: +33 (0) 3 88 41 32 48 / 26 25  
Ֆաքս: +33 (0) 3 88 41 27 06 / 41 27 88  
Internet sites:  
[http:// culture.coe.fr](http://culture.coe.fr) (Education) : homepage  
<http:// culture.coe. fr/lang>

**COUNCIL OF EUROPE  
COMMITTEE OF MINISTERS**

RECOMMENDATION No (98) 6

**OF THE COMMITTEE OF MINISTERS TO MEMBER STATES  
CONCERNING MODERN LANGUAGES**

(Adopted by the Committee of Ministers on 17 March 1998

at the 623<sup>rd</sup> meeting of the Ministers' Deputies)

**ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ**

**ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N R (98) 6**

**ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

/ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից 1998թ. մարտի 17-ին  
նախարարների ներկայացուցիչների 623-րդ ժողովում/

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ R(98)6 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ (17 մարտի 1998թ.) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ\*

Նախարարների կոմիտեն Եվրախորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի պայմանների համաձայն առաջարկում է՝

- ◆ Հաշվի առնելով, որ Եվրախորհրդի նպատակն է հասնել իր անդամների ավելի հզոր միաբանության և, որ այս նպատակը հատկապես անհրաժեշտ է մշակույթի ասպարեզում,
- ◆ նկատի ունենալով Եվրոպական մշակութային դաշնագիրը, որ ստորագրվել է 1954թ. դեկտեմբերի 19-ին Փարիզում,
- ◆ գնահատելով անդամ-պետությունների առաջընթացը ժամանակակից լեզուների վերաբերյալ N R(82) 18 հանձնարարականի ընդունման պահից, որի սկզբունքներն այսօր կարևոր և տեղին են, քան երբևէ,
- ◆ նկատի ունենալով մշակութային համագործակցության խորհրդի ժամանակակից լեզուների ծրագրող խմբի «Կրթությունը Եվրոպայի քաղաքացիության համար» նախագծի վերաբերյալ և «Լեզուների ուսումնասիրությունը նոր Եվրոպայի համար» եզրափակիչ կոնֆերանսի (15-18 ապրիլի 1997թ., Ստրասբուրգ) արդյունքները,
- ◆ նկատի ունենալով լեզուների ուսումնասիրության ասպարեզում Եվրախորհրդի նվաճումների /ինչպիսիք են «Սկզբնական մակարդակ» տիպի դասակարգումները, հաղորդակցական մեթոդաբանությունը և ուսուցիչների կատարելագործված պատրաստումը / օգտակարությունը անդամ պետությունների համար,
- ◆ շեշտելով ներկայում և ապագայում գործունեության հատուկ բնագավառների զարգացման քաղաքական կարևորությունը, ինչպես, օրինակ, լեզուների ուսումնասիրության ուժեղացումը և տարբերակումը համաեվրոպական համատեքստում բազմալեզվությանը նպաստելու համար, փոխանակումների և կապերի հետագա զարգացումը և հաղորդակցական ու տեղեկատվական նոր տեխնոլոգիաների շահագործումը,
- ◆ գիտակցելով ոչ միայն կրթության, մշակույթի և գիտության, այլև առևտրի ու արդյունաբերության բնագավառում սերտ համագործակցության և միջազգային շփման մեծացման համար բոլոր եվրոպացիներին գիտելիքներով զինելու աճող անհրաժեշտությունը,
- ◆ ցանկանալով միջազգային ավելի արդյունավետ հաղորդակցության միջոցով օժանդակել փոխընթերցմանը և հանդուրժողականությանը և հարգել մշակութային ընդհանուր նմանություններն ու տարբերությունները,
- ◆ ցանկանալով պահպանել և հետագայում զարգացնել եվրոպական մշակութային կյանքի հարստությունը և բազմազանությունը ազգային ու տարածաշրջանային լեզուների փոխադարձ առավել խոր իմացության միջոցով, այդ թվում և նրանց, որոնք ավելի քիչ են գործածվում,
- ◆ հաշվի առնելով, որ բազմալեզու և բազմամշակույթ Եվրոպայի պահանջները կարող են բավարարվել միայն եվրոպացիների՝ լեզվի և մշակույթի բնագավառում միմյանց հետ հաղորդակցվելու զգալիորեն աճող ունակությամբ, և որ դա պահանջում է շարունակական ու երկարատև ջանքեր, որոնք իրավասու մարմինների կողմից պետք է խրախուսվեն, կազմակերպված հիմքերի վրա դրվեն և ֆինանսավորվեն կրթության բոլոր մակարդակներում,

- ◆ գիտակցելով ինտերակտիվ Եվրոպայում հաղորդակցվելու համար անհրաժեշտ հմտություններ չունեցողների սահմանազատման վտանգավոր հետևանքները,
- ◆ հաշվի առնելով, որ լեզվի ասպարեզում կրթության և մշակութային քաղաքականության ձևավորումն ու ներդրումը կարող է հեշտացվել եվրոպական մակարդակով համաձայնագրի միջոցով և անդամ պետությունների ու նրանց կրթական հաստատությունների, ինչպես նաև դրանց ղեկավարների միջև սերտ համագործակցություն ապահովելու ճանապարհով, հանձնարարել անդամ պետությունների կառավարություններին՝
  - իրենց սահմանադրական կառուցվածքին, ազգային կամ տեղական պայմաններին և կրթական համակարգերին համապատասխան օգտագործել առկա բոլոր միջոցները, իրենց կրթական և մշակութային քաղաքականությունն իրագործելիս կիրառել հավելվածում շարադրված միջոցառումները,
  - սույն հանձնարարականը և նրա հիմքը կազմող փաստաթղթերն ազգային տեղեկատվության համապատասխան միջոցներով ներկայացնել անդամ երկրներում այդ գործի հետ առնչություն ունեցող հանրության և անհատների ուշադրությունը:

Խնդրվում է Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի եվրոպական մշակութային կոնվենցիայում սույն հանձնարարականը ներկայացնել այն պետությունների կազմակերպություններին, որոնք Եվրախորհրդի անդամ չեն:

**N R (98) 6 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵՁՈՒՆԵՐ ՍՈՎՈՐԵԼՈՒՄ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

**Ա. Ընդհանուր միջոցառումներ և սկզբունքներ**

1. Հետևեցեք կրթության քաղաքականությանը, որը՝
  - 1.1. բոլոր եվրոպացիներին հնարավորություն է տալիս հաղորդակցվելու այլ մայրենի լեզուներով խոսողների հետ՝ այդպիսով զարգացնելով մտահորիզոնը, հեշտացնելով մարդկանց ազատ շարժումը և տեղեկատվության փոխանակումը և բարելավելով միջազգային համագործակցությունը,
  - 1.2. մեծացնում է սովորողների հարգանքը դեպի այլ կենսակերպը, միջմշակութային հաղորդակցման համար նրանց գինում գիտելիքներով, հատկապես ուղիղ կապերի և անհատական փորձի միջոցով,
  - 1.3. ապահովում է ժամանակակից լեզուների բարձրակարգ ուսուցման ընթացքում համապատասխան ռեսուրսների /մարդկային և նյութական/ առկայությունը կրթական համակարգում, որպեսզի բավարարվեն միջազգային հաղորդակցության և ընթերցման աճող պահանջները,
2. Օժանդակեցեք լայն տարածում ունեցող բազմալեզվությանը՝
  - 2.1. խրախուսելով բոլոր եվրոպացիներին՝ հասնելու մի քանի լեզուներով հաղորդակցվելու որոշակի աստիճանի,
  - 2.2. տարբերակելով լեզուներն ըստ առաջարկի և յուրաքանչյուր լեզվին համապատասխան նպատակներ առաջադրելով,
  - 2.3. խրախուսելով ճկուն մոտեցում դրսևորող ուսումնական ծրագրերը բոլոր մակարդակների համար, ներառյալ մոդուլայինը, ինչպես նաև մասնակի կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացները, և

- դրանց համապատասխան գնահատական տալով ազգային որակավորման համակարգերում, մասնավորապես հրապարակային քննարկումներում,
- 2.4. խրախուսելով օտար լեզուների գործածումը ոչ լեզվական առարկաների դասավանդման ժամանակ /օրինակ՝ պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա/ և բարենպաստ պայմաններ ստեղծելով այդպիսի ուսուցման համար,
  - 2.5. նպաստելով հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը՝ եվրոպական բոլոր ազգային կամ տարածաշրջանային լեզուների դասավանդման և ուսուցման նյութերը տարածելու համար,
  - 2.6. նպաստելով այլ երկրներում կրթության բոլոր մակարդակներում հաստատությունների միջև կապերի զարգացմանը և մարդկանց փոխանակմանը, որպեսզի մյուսների լեզվի և մշակույթի բնագավառում իսկական փորձ ձեռք բերելու հնարավորություն տրվի,
  - 2.7. հեշտացնելով լեզվի տևական ուսուցումը համապատասխան ռեսուրսների նախապատրաստման միջոցով:

#### Բ. Լեզվի վաղ ուսուցում /մինջև 11 տարեկան/

3. Ապահովել, որ ուսումնառության հենց սկզբից /կամ որքան հնարավոր է վաղ/ յուրաքանչյուր աշակերտ իրագել դառնա Եվրոպայի լեզվական և մշակութային բազմազանությանը:
4. Խրախուսել և օժանդակել բոլոր երեխաների համար ժամանակակից լեզուների վաղ ուսուցումը ազգային և տեղական պայմաններին համապատասխան եղանակներով և որտեղ հանգամանքները թույլ են տալիս:
5. Ապահովել կրթական մի փուլից մյուսին անցնելիս աշակերտների կողմից լեզուների ուսումնասիրության համակարգային հաջորդականություն:
6. Ջարգացնել լեզուների վաղ ուսուցման գնահատման համապատասխան ձևեր:
7. Ստեղծել համապատասխան քաղաքականություն և մեթոդներ՝ հիմնված այն արդյունքների վերլուծության և համեմատության վրա, որոնց հասել են պատանի սովորողների համար ժամանակակից լեզուների ծրագրերը:

#### Գ. Միջնակարգ կրթություն

8. Շարունակել բարձրացնել հաղորդակցման ստանդարտը, որին պիտի հասնեն աշակերտները, որպեսզի կարողանան ուսումնասիրված լեզուն օգտագործել այդ լեզվով խոսողների հետ առօրյայում արդյունավետ հաղորդակցվելու համար, կառուցելու հասարակական և անձնական հարաբերություններ, սովորել հասկանալ ու հարգել այդ ժողովուրդների մշակույթը և փորձը:
9. Աշակերտներին հնարավորություններ ընձեռել՝ մեկից ավելի եվրոպական կամ այլ լեզուներ սովորելու:
10. Ծրագրի մեջ ընդգրկել մի շարք լեզուներ և կրթական մակարդակներ:
11. Ապահովել, որ միջնակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտները կարողանան շարունակել սովորել ժամանակակից լեզուներ, բարձրացնեն ցածր դասարաններում սովորած լեզվի օգտագործման մակարդակը և հաստատեն իրենց միջմշակութային ըմբռնումը:
12. Աջակցել միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում եվրոպական կամ այլ լեզուների հետագա ուսուցմանը՝ զարգացնելով մասնակի իրագելությունը, նպատակահարմարության դեպքում, որը պետք է հետագայում հանրագումարի բերվի և պաշտոնապես ընդունվի:



13. Խրախուսել իշխանություններին և հաստատություններին՝ միանալու միջազգային ցանցերին և օժանդակել կառավարիչների, մանկավարժների, ուսուցիչների և աշակերտների միջև համագործակցությանը, հատկապես այնպիսի հեռանկարով, որ ձեռնարկվեն միասնական նախագծեր կամ փոխանակվեն փորձեր, մտքեր և նյութեր:
14. Խրախուսել բոլոր մակարդակների կրթական հաստատություններին՝ նպաստելու ուսանողի ինքնավարության զարգացմանը, այսինքն՝ ավելի արդյունավետ և անկախ սովորելու ընդունակությանը՝ որպես կյանքի գոյության հիմք, զարգացում և լեզվական ունակությունների տարբերակում՝ գործնական և մշակութային կարիքների փոփոխության համաձայն:
15. Համապատասխան աստիճանում նպատակամղել աշակերտներին գնահատելու լեզուների դերը առօրյա կյանքում և պատրաստել նրանց մասնագիտական հանդիպումներին՝ իրենց ընտրած ասպարեզում:

Դ. Նեղ մասնագիտական լեզվական ուսուցում

16. Ուսուցումից աշխատանքային կյանքին անցնելու ժամանակահատվածում և մասնագիտական նախապատրաստման բոլոր աստիճաններում երիտասարդներին առաջարկել լեզվական դասընթացներ, ընդլայնել տեղեկատվության մատչելիության հնարավորությունը, զինել նրանց գիտելիքներով, որ մասնակցեն միջազգային նախագծերին, պատրաստել նրանց, որպեսզի աշխատանք ձեռնարկեն և բարձրացնեն իրենց մասնագիտական մակարդակը:
17. Ապահովել հավասարություն մասնագիտական, մշակութային և անձնական զարգացման միջև՝ առաջարկելով լեզվական դասընթացներ, որոնք միավորում են մասնագիտական և ընդհանուր բաղադրիչները:
18. Ապահովել ճկուն մոտեցում /օրինակ մոդուլների/ անցկացվող ուսումնական դասընթացներին՝ բավարարելու համար մասնագիտական հատուկ պահանջները, այնպես որ համապատասխան միավորները տրվեն իրազեկության հիմնումից հետո:

Ե. Մեծահասակների ուսուցում

19. Խրախուսել համապատասխան միջոցների զարգացմանը /հնարավորություն տալ մեծերին պահպանելու և հետագայում զարգացնելու իրենց լեզվական կարողությունները/ և լեզվական ուսուցման քիչ կամ նախնական ոչ մի փորձ չունեցողներին ձեռք բերելու օտար լեզուն հաղորդակցական նպատակներով:
20. Օժանդակել մեծահասակ սովորողների ընդհանուր և մասնագիտական լեզվական ունակությունների անձնական զարգացմանը, հեշտացնել միջմշակութային ըմբռնումը, շարժունությունը և բոլոր մակարդակներում միջազգային համագործակցությունը:
21. Օժանդակել ազգային և միջազգային կառույցների նախապատրաստմանը, որպեսզի ապահովվի միջոցների ամենալայն առկայությունը հեռակա կրթության համար /ներառյալ հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը/ օժանդակել տարբերակված հաղորդակցական ունակությունների զարգացմանը:

Զ. Երկլեզու ուսուցումը երկլեզու կամ բազմալեզու տարածքներում

22. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, հատկապես /թեև ոչ միայն/ երկլեզու կամ բազմալեզու տարածքներում ապահովելու, որ՝

- 22.1. Հաշվի առնվեն տարածքային կամ փոքրամասնություն կազմող լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայի և ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար ընդհանուր կոնվենցիայի կամ մշակույթների զարգացման քաղաքականության անհրաժեշտ պահանջները:
- 22.2. Ներգրված բոլոր լեզուների և մշակույթների միջև լինի գնահատման հավասարություն, այնպես որ յուրաքանչյուր համայնքի երեխա հնարավորություն ունենա զարգացնելու գրագիտությունը և բանահյուսությունը իր սեփական համայնքի լեզվով, ինչպես նաև հասկանալ ու գնահատել մյուսների լեզուն և մշակույթը:
- 23. Շարունակել օժանդակել երկլեզվությունը վերաբնակեցված կամ հարևան տարածքներում և աջակցել ներգաղթյալներին իրենց բնակված տարածքի լեզուն սովորելու գործում:
- 24. Հեշտացնել և օժանդակել սահմանային գոտիներում հարևան պետությունների լեզուները սովորելուն:

**Է.Նպատակների հատկորոշումներ և գնահատում**

- 25. Եվրոպայի բոլոր ազգային և տարածաշրջանային լեզուների համար զարգացնել սովորելու իրական և գործուն նպատակներ /ինչպիսիք կարելի է գտնել Եվրախորհրդի կողմից զարգացրած «շենային մակարդակ» տիպի հատկորոշման մեջ/, որպեսզի նպատակների կապակցվածության և թափանցիկության միջոցով ապահովվի լեզու սովորելու և դասավանդելու որակը:
- 26. Խթանել հաստատություններին՝ օգտագործելու Եվրախորհրդի հանձնարարականի ընդհանուր եվրոպական ծրագիրը, որպեսզի պլանավորվի լեզվի ուսուցումը կապակցված և թափանցիկ ձևով՝ հօգուտ միջազգային մակարդակով ավելի լավ կոորդինացման և լեզուների ավելի բազմազան ուսումնասիրման:
- 27. Խթանել սովորողների անձնական քարտի կիրառումը կրթական բոլոր բաժիններում /Եվրոպական լեզուների պորտֆոլիո/, որտեղ նրանք կարող են թափանցիկ ձևով արձանագրել իրենց որակավորումները և ձեռք բերած այլ կարևոր լեզվական ու մշակութային փորձը՝ միջազգայնորեն, դրանով դրդելով և ընդունելով սովորողների ջանքերը՝ ընդլայնելու և բազմազանելու իրենց լեզվի ուսումնասիրությունը բոլոր մակարդակներում:
- 28. Օժանդակել գնահատման և վավերացման գործում զբաղված հաստատություններին /հատկապես նրանց, որոնք ընդունված որակավորում են տալիս և՛ թեկնածուներին, և՛ ուսուցիչներին համաձայնեցնելու իրենց նպատակները, չափանիշներն ու ընթացակարգը՝ դրանով հեշտացնելով եվրոպական շարժունությունը և որակավորումների համեմատելիությունը:
- 29. Օժանդակել գնահատման տարբեր ձևերի և բազմալեզու կարողությունների զարգացմանը, որոնք հաշվի են առնում կարիքների զգալի բազմազանությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մասնակի ունակությունների համար նպատակների սահմանմանը և դրանց ձեռքբերման գնահատմանը:
- 30. Օժանդակել ու հեշտացնել դիպլոմների և վկայականների հանձնումը մեկից ավելի լեզվի ուսումնասիրության դասընթացի ավարտին:

**Ը. Ուսուցիչների վերապատրաստում**

- 31. Միջոցներ ձեռնարկեցեք բոլոր մակարդակներում ապահովելու լեզվի լավ պատրաստված ուսուցիչների բավարար քանակության առկայություն, այնպես

որ, որտեղ նպատակահարմար է հնարավոր լինի դասավանդել մի շարք լեզուներ:

32. Ժամանակակից լեզուների ապագա բոլոր ուսուցիչներին ապահովել բարձրակարգ մանկավարժական գիտելիքներով, որն ըստ պատշաճին հավասարեցնում է ակադեմիական առարկաների ուսումնասիրությունը և մասնագիտական նախապատրաստումը:
33. Միջոցներ ձեռնարկել ապագա ուսուցիչների նախապատրաստման գործում կրթական իշխանությունների, համալսարանների, գիտահետազոտական կենտրոնների և դպրոցների միջև սերտ համագործակցություն ապահովելու համար:
34. Օժանդակել /ուսուցիչների նախապատրաստական դասընթացների նախագծում/ ճշգրիտ և կապակցված նպատակների կատարելագործմանը հիմնական իրազեկությունների անվանացանկով, որը ներառում է լեզվաբանական, միջմշակութային, կրթական և հոգեբանական բաղադրիչներ:
35. Երկլեզու կամ բազմալեզու համաձայնությունների միջոցով նախատեսված ուսուցիչներին հնարավորություն տալ իրենց դասընթացների մասն անցկացնել այն պետությունում, որտեղ նրանց դասավանդելիք լեզուն խոսվում է առօրյայում:
36. Նախնական և հետագա նախապատրաստման համար պատասխանատու հաստատություններին հանձնարարել, որ դասընթացները հաշվի առնեն՝
  - 36.1. Մշակութային բաղադրիչի հատուկ կարևորությունը մշակութային տարբերությունների նկատմամբ իրազեկություն և հարգանք ստեղծելու մեջ:
  - 36.2. «Սովորեցնել սովորելու» (learning to learn) գործունեությունը, որն աջակցում է բազմալեզվության տևական զարգացման:
  - 36.3. Ժամանակակից տեխնոլոգիաների այնպիսի օգտագործումը, որ ուսուցիչները ձեռք բերեն անհրաժեշտ վստահություն և ունակություն՝ դրանք հմուտ ձևով օգտագործելու իրենց ամենօրյա դասարանային պրակտիկայում և մասնագիտական կյանքում:
  - 36.4. Լեզվի տեստավորման և գնահատման սկզբունքներն ու պրակտիկան՝ ներառյալ սովորողի ինքնագնահատումը:
37. Ժամանակակից լեզուներ դասավանդող ուսուցիչներին առաջարկեցեք զբաղվել ինքնուսուցմամբ, այնպես որ նրանք
  - 37.1. պահպանեն լեզվական կարողությունների և դասավանդման ունակությունների բարձր մակարդակ,
  - 37.2. համընթաց պահեն մեթոդաբանական առաջխաղացումները /ինչպիսին է նոր տեխնոլոգիաների օգտագործումը/,
  - 37.3. ընդլայնեն և խորացնեն իրենց փորձն ու գիտելիքներն այն պետության մշակույթի մեջ, որի լեզուն նրանք դասավանդում են /հատկապես այդ պետությունում անցկացրած ժամանակ/,
  - 37.4. ստեղծել և զարգացնել միջազգային փոխներգործման ցանցեր՝ փորձն ու փորձագիտությունը միավորելու համար,
  - 37.5. ամբողջովին նպաստել կրթության մեջ Եվրոպական գործունեության արձատավորմանը:

Council of Europe  
Conseil de l'Europe



Strasbourg, December 1997

CC-LANG (98) 1

## COUNCIL FOR CULTURAL CO-OPERATION

Education Committee

"Language policies for a multilingual and multicultural Europe"

Modern Languages: Learning, teaching, Assessment  
A common European Framework of Reference

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԵՎ ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒՅԹ  
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ»

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ

Prepared by

J.L.M. TRIM

## ՆԱԽԱԲԱՆ \*

Համընդհանուր եվրոպական ծրագիրը նախատեսում է.

ա/ ոգևորել ժամանակակից լեզուների ուսուցման, դասավանդման և գնահատման ոլորտում ընդգրկված գործող մասնագետներին, որոնք տարբեր մակարդակներում որոշումներ կայացնելիս կունենան ազատ ընտրության իրավունք,

բ/ հնարավորություն տալ նրանց առավել մանրամասն ու արդյունավետ տեղեկացնելու գործող այլ մասնագետների իրենց կողմից առաջարկված նյութերի ու ծառայությունների մասին:

Ենթադրում ենք, որ բոլոր գործող մասնագետները կցանկանան քննարկել և բացահայտել, թե ուսուցման ինչ նպատակներ ենք առաջադրում:

Ծրագրի նախագիծը մի փորձ է նախ՝ նույնացնելու հաղորդակցման այն բազմազան տեսանկյունները, որ անհրաժեշտ են սովորողներին լեզվին կատարելապես տիրապետելու համար, և հետո՝ նկարագրելու այն դժվարությունները, որոնք ակնկալվում են հաղթահարել լեզուն սովորելու ընթացքում: Անխուսափելիորեն դա տանում է մի կառույցի ստեղծմանը, որն ավելի բարդ ու մանրամասն կնկարագրի ուսուցման նպատակները:

Մյուս կողմից, բացի ուսուցման նպատակներից և ընդհանուր դասավանդման մեթոդիկայից, կան այլ մասնակի խնդիրներ ևս, որոնց մասնագետները պետք է ուշադրություն դարձնեն:

Անհրաժեշտ է, որ դասընթացներ ծրագրողները մտածեն դասերի քանակի և հաճախականության, բովանդակության հաջորդականության մասին, քննողները՝ ստուգման ձևերի, պայմանների և այլնի մասին:

Ծրագիրը, որը կփորձի նկարագրել նման տեղեկություն, կդառնա ծայրաստիճան մեծածավալ: Ուստի մենք որոշել ենք այն սահմանափակել միայն վիճելի հարցերով, որ գործող մասնագետները կարող են ունենալ և դրան զուգահեռ ստեղծել օգտագործողի 10 ուղեցույցների մի շարք՝ մասնագիտացված առանձնահատուկ խմբերի համար: Ուղեցույցների դերն այն է, որ հեշտացնի յուրաքանչյուր ծրագրի օգտագործումը:

ա/ հնարավորին չափ ամբողջական տեսքով հայտնի դարձնել այն առանձնահատուկ ընտրությունները, որոնք գործող մասնագետները պետք է հաշվի առնեն և հնարավորին չափ հասկանալի ձևով տեղեկացնեն իրենց գործընկերներին ու սովորողներին,

բ/ օգնել մասնագետներին լավագույնս օգտագործելու ծրագրի առաջարկած նկարագրական կառույցը:

Ծրագրի առաջարկված երկրորդ նախագիծը քննարկման էր ներկայացված 1997թ. ապրիլ ամսին կայացած «Ժամանակակից լեզուների ծրագիր» ավարտական գիտաժողովում և համապատասխան ատյաններում լիովին հավանության արժանանալով՝ այժմ գործում է անդամ - երկրներում ուղեցույցի հետ միասին:

---

\* Թարգմանությունը՝ Council of Europe. Strasbourg, December 1997. COUNCIL FOR CULTURAL CO-OPERATION. Education Committee. "Language policies for a multilingual and multicultural Europe" Modern Languages: Learning, teaching, Assessment. A common European Framework of Reference A GENERAL GUIDE FOR USERS (Draft 1). Prepared by J.L.M. TRIM

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ

### ՀԱՄԸԴՅԱՆՈՒՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ (ՀԵՂԻՆԱԿ՝ Զ. Լ. Ա. ԹՐԻՄ)

#### *1. Հաղորդակցվելու հնտություններ ունենալու անհրաժեշտության մեծացումը*

Հասարակությունն ամբողջ աշխարհում կրում է խոր փոփոխություններ: Գիտական հայտնագործությունները մեզ ավելի խորը և մանրամասն պատկերացումներ են տալիս մեր աշխարհի մասին, և դրանց հիման վրա ստեղծված արդյունաբերության ճյուղերը արագորեն ներդնում են այդ գիտելիքները կյանքի բոլոր բնագավառներում: Հատկապես արագ են զարգանում հաղորդակցման հետ կապված ճյուղերը:

Էլեկտրոնիկայի և տեղեկատվության շնորհիվ գաղափարների տեղաշարժը իրականում կարող է լինել վայրկենական, զերծ աշխարհագրական սահմաններից: Փոխակերպությունը հեռու է կատարյալ լինելուց: Անշուշտ մենք, կարող ենք դատել դրա արդյունքների մասին: Մինչդեռ ամենուր անհատները կոչ են անում հարմարեցնել իրենց գաղափարները, հնտությունները և գործունեությունը փոփոխվող և փոփոխված միջավայրին:

Այդպես են վարվում նաև բոլոր հասարակական, տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ հաստատությունները, որոնք կատարվող փոփոխությունների հետ անհամատեղելի են համարում իրենց ավանդական կառուցվածքներն ու գործունեության ձևերը: Կրթական աշխարհը ևս զերծ չի նման ճնշումից: Ամենից շատ ուսուցիչներն են պատասխանատու՝ երիտասարդ սերնդին գիտելիքներով ապահովելու հարցում, նրանք պիտի պատրաստ լինեն օգտագործելու 21-րդ դարի առաջարկած հնարավորությունները և փորձեն դրանք կանխատեսել: Եթե ներկայիս միտումը շարունակվի, մենք անկնկալում ենք, որ այն կներառի հետևյալ գործոնները:

#### **1. Անհատական ակտիվության աճը**

Աշխատանքի բնագավառում, աշխատողների ավելացող համամասնությունը ակնկալում է, որ հնարավոր է աշխատատեղ գտնել բազմազգ կորպորացիաներում, առևտրական կազմակերպություններում: Աշխատողներին կոչ է արվում կիրառել տվյալ կորպորացիայի լեզուն կամ աշխատանքի բերումով որոշ ժամանակ աշխատել մեկ այլ երկրում: Եթե նրանք անկարող են դա անել, ապա նրանց մասնագիտական գործունեությունը կսահմանափակվի: Եթե անգամ նրանցից չի պահանջվում ճանապարհորդել, մասնագիտական առումով պահանջվում է գործակցել օտարերկրյա գործընկերների հետ: Ավելին՝ միջազգային առևտուրը և ֆինանսները ներառնում են միջազգային շուկաները, և կապիտալի շարժումը ավելի ընդգրկում չափերով հաղթահարում է ազգային և լեզվական սահմանները՝ պահանջելով վայրկենական պատասխան էլեկտրոնիկայի միջոցով:

Ծնողների մասնագիտական շարժունակության պատճառով երեխաների զգալի մեծամասնությունը ստիպված է կրթությունը շարունակել օտար երկրների ուսումնական հաստատություններում: Այդ պատճառով շատ դպրոցներ, քոլեջներ և համալսարաններ իրենց բնույթով և գործունեությամբ դառնում են բազմալեզու:

## **2. Տեղեկատվությունից օգտվելու հնարավորություն**

Գիտական և տեխնոլոգիական առաջադիմությունը նպաստում է գիտելիքների զգալի աճին: Տարբեր երկրներում, ինչպես նշված, այնպես էլ այլ մասնագիտությունների ոլորտներում, մարդիկ միևնույն խնդիրներով են զբաղված: Նույնիսկ երբ նրանք մրցակցության մեջ են, նրանց համար հիմնականը տեղեկատվության արագ հոսքն ապահովելն է: Արագությունը այսօրվա հրամայականն է: Մասնագետները ստեղծում են փոխհաղորդակցման ցանցեր, և նրանք, ովքեր չեն հաղորդակցվում մյուսների հետ, շուտով ետ են մնում: Բոլոր բնագավառներին վերաբերող միջազգային գիտաժողովները, կոնգրեսները, խորհրդակցությունները, սեմինարները չափազանց կարևոր են և ներգրավում են տարբեր երկրներից մասնակիցների, որոնցից միայն քչերն են կարող նպաստել գիտությանը՝ կիրառելով իրենց մայրենի լեզուն: Նույնիսկ ավարտական կուրսի մակարդակին համապատասխանող դասագրքերը սահմանափակ կյանք ունեն: Դասագրքերը բնագրով կարդալու անհրաժեշտություն է առաջանում, քանի որ թարգմանված տարբերակները ուշացումով են հայտնվում: Հետևաբար տեղեկատվության ամբողջ հոսքն ընթանում է արագ և հիմնովին՝ շնորհիվ էլեկտրոնային հեղափոխության և համակարգչային դարի: Էլեկտրոնային տվյալները (database), որոնք կապված են ամենուր հանդիպող խնդիրների հետ, դառնում են վաղանցիկ կամ հաճախակի նորացում պահանջող տեղեկատվության պահանջ նպաստավոր ձև: Անձնական համակարգիչ ունեցող յուրաքանչյուր ոք, առանց տնից դուրս գալու կարող է փնտրել և գտնել որևէ մասնակի ոլորտում ցանկացած տեղեկատվություն, որ մատչելի են դարձնում աշխարհի տարբեր մասնագետներ: Փոփոխությունների ընթացքն այնպիսին է, որ ոչ ոք չի կարող կանխատեսել առավելագույն արդյունքը, ամենայն հավանականությամբ այն, ինչ թվում է խիստ առաջավոր, կարճ ժամանակամիջոցում կարող է դառնալ սովորական և պարզունակ:

## **3. Փոխադարձ ընթրնումը և հանդուրժողականությունը**

Նման փոփոխություններն անդրադառնում են բազում մարդկանց կյանքի վրա: Հատկապես եվրոպայում, որտեղ ապրում է ժողովուրդների մի խճճված բազմազանություն՝ իրենց մշակույթով և բազմալեզվությամբ: Շատերի համար ընդլայնվող հասարակական հարաբերությունները լուրջ ծրագրեր են առաջարկում: Նրանք, ովքեր չեն հասկանում տեղի ունեցող փոփոխությունները և «զինված» չեն դրանց հակահարված տալու համար, իրենց կյանքն ու ազգային առանձնահատկությունները՝ կողմնակի ուժերից սպասվող սպառնալիքի տակ են դնում և անկարող են կառավարելու այդ գործընթացը: Նրանք զգում են, որ իրենց բնակավայրեր են մուտք գործում օտար սովորույթներ և որ իրենց հաստատուն և հավասարակշռված համայնքի միասնությունը խարխլվում է: Նման հանգամանքներից ելնելով՝ մարդիկ, որոնք քիչ պատկերացում ունեն արտաքին աշխարհի մասին, շատ հաճախ ստիպված են իրենց դժվարությունների պատճառը փնտրել օտարերկրացիների մեջ: Բացասական կաղապարները կարող են պատճառ դառնալ անսկզբունքային և վտանգավոր, ինչպես նաև տհաճ միջհամայնքային անվստահության ու ատելության առաջացման, որը կարող է վերածվել անզուսպ քննադատության՝ ուղղված հարևան եվրոպական և համաաշխարհային համագործակցության դեմ:

Ցեղամոլության և օտարամոլության բոլոր նման դրսևորումներից կարելի է խուսափել՝ օտարերկրյա իրականության, բարելավված կյանքի և հաղորդակցվել կարողանալու մասին գիտելիքների և ուղղակի փորձ ունենալով:

## *II. Բազմալեզվության անհրաժեշտությունը*

Ցանկացած եվրոպացի, որն ուզում է ընդլայնել իր լեզվական ընդունակությունները, իր լեզվական միջավայրից դուրս հանդիպում է լեզուների մի մեծ բազմազանության /50-ից ավելի լեզուներ ընդունած կարգավիճակ ունեն մշակութային համագործակցության խորհրդում՝ չխոսելով Ռուսաստանի Դաշնության լեզուների մասին/: Ինչպես կարելի է հաղթահարել նման լեզվական խոչընդոտները: Շատերը ցանկանում են քանդել այդ հանգույցը՝ ընդունելով մեկ ընդհանուր լեզու, որպես միջազգային հաղորդակցման միջոց: Սարդկանց մի մասը ցանկանում է, որ այդ նպատակին ծառայի էսպերանտոն: Բայց պատմական և տնտեսական ուժերը բարենպաստ այդ դիրքերին են մղել անգլերենը: Անգլերենը դարձել է առաջին օտար լեզուն շատ կրթական համակարգերում՝ դրանով իսկ ամրացնելով իր դիրքերը: Շատ ծնողներ արդեն զգացել են, որ եթե իրենց երեխաները դպրոցում հնարավորություն չեն ունեցել ազատ տիրապետելու անգլերերին, հայտնվում են անբարենպաստ պայմաններում: Կրթական համակարգի որոշ ծրագրավորողներ անգլերենը համարում են մի լեզու, որը և՛ անհրաժեշտ է, և՛ հիմնական: Այլ օտար լեզուները ծրագրից դուրս թողնելը գերազնահատում է անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցման լեզվի արդյունավետությունը, կամ էլ պարզապես ցանկանալով նվազեցնել ժամանակակից օտար լեզուների դերը՝ դպրոցական ծրագրերում ավելի մեծ տեղ են հատկացնում մաթեմատիկային, գիտությանը, տեխնոլոգիային և մայրենի լեզվի զարգացմանը:

Եվրոպական հիմնարկությունների վարած քաղաքականությունը հաստատապես պաշտպանում է բազմալեզվության շահերը: Սակայն անգլերենի լայնածավալ գործածությունը ոչնչով չի նպաստել Միացյալ Թագավորության հարստության, հզորության ավելացմանը և չի մեծացրել նրա ազդեցությունը եվրոպական գործերում: Իհարկե, որոշ անգլիացիների լեզվի կատարյալ գործածումը կարող է քաղաքական և տնտեսական ազդեցություն ունենալ միջազգային կապերում: Եվրոպական հասարակության բազմալեզու բնույթն է առաջ քաշում մեկից ավելի օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը: Կարճ ասած՝ մարդիկ ի վիճակի են իրենց հուզող հարցերն արտահայտել՝ մայրենի լեզվի բոլոր միջոցներն օգտագործելով:

Ընկալողական-յուրացնողական հմտությունները, որոնք պահանջում են լեզվի ճանաչում և կարող են օգտագործվել որպես խելացի եզրահանգում, աջակցում են ավելի շահավետորեն ուսուցման գորընթացին, քան արդյունավետ հմտությունները, որոնք պահանջում են հիշել և՛ լեզուն, և՛ այդ լեզվի քերականական և գործնական միջոցները, որոնցով կարելի է արտահայտել նպատակաուղղված միտք:

Լեզվի ուսուցման համար սահմանափակ ժամանակն ու միջոցները լավագույնս օգտագործելու հարցը մնում է լեզվի ծրագրման հիմնական վիճելի հարցը: Եվրոպայի մշտական խորհրդի ծրագրերը այն համոզմունքի վրա են հիմնված, որ գերագույն կարևորություն են ներկայացնում տեղին և հավանական նպատակներ սահմանել, որոնք համապատասխանում են հասարակության անհատների հաղորդակցման պահանջներին: Քանի որ նման կարիքներն առաջ են քաշում չափահասները, ուստի լեզվի ուսուցումը պետք է կազմակերպել ավելի ճկուն, երկարաժամկետ ծրագրով: Դպրոցում լեզվի ուսուցումը պետք է դիտվի որպես լեզվի հետագա ուսուցման և օգտագործման համար հիմքեր դնող գործունեություն: Ինչպես Պրոչերն է /Procher 1980/ ցույց տվել, դպրոցը՝ որպես հաստատություն, մեծապես սահմանափակում է այն, ինչ կարելի է անել անհատի կյանքի այդ փուլում: Լեզվի ուսուցումը ավելի հասուն տարիքում չպետք է դիտվի



որպես լրացուցիչ կամ սիրողական հետաքրքրություն, այլ որպես հիմնական սոցիալական նախապատրաստում, որը ծառայելու է ազգային շահերին: Տեղին է ասել, որ նշված մակարդակներում լեզվի ուսուցման պահանջը շատ ավելի սերտ է հարաբերվում կարիքին և շատ է տարբերվում դպրոցական մակարդակից: Սա այն դեպքը չէ, երբ չափահաս անհատը պարզապես ցանկանում է բարելավել լեզվի իր բավականաչափ լավ իմացությունը: Ընդհանրապես նրանք նախընտրում են ընդլայնել ավելի շատ լեզուներ յուրացնելու իրենց կարողությունը ոչ միայն համեստ վերարտադրման հմտություններ ունենալու, այլ նաև եվրոպացիներին լսելու և հասկանալու համար:

Որպես օրինակ բերենք ԲԻ-ԲԻ-ՍԻ -ի հեռուստատեսային դասընթացները, որոնք, հիմնված լինելով այս սկզբունքի վրա, հրապուրել են մեծ թվով ունկնդիրների, որոնք յուրացնելով մեկ լեզվի ներածական դասընթացն անցնում են մեկ այլ, ավելի դժվար լեզվի: Մինչդեռ նույն լեզուն ուսումնասիրող ավելի բարձր մակարդակ ունեցող ունկնդիրները ցույց են տվել առաջադիմություն, որը նման է բրգածն նեղացման: Իհարկե, ժամանակակից տեխնոլոգիան ի վիճակի է ապահովել բարձր որակի արտադրանք՝ մատչելի գներով: Նոր տեխնոլոգիաները սովորողներին տալիս են ընտրության ավելի մեծ հնարավորություն: Մենք վստահ ենք, որ շնորհիվ այն բանի, որ ինֆորմացիայի տարբեր աղբյուրների միաժամանակյա օգտագործման հնարավորությունները գնալով զարգանում, հանրության համար ավելի մատչելի և հասկանալի են դառնում, լեզվի ուսուցումը բոլոր մակարդակներում կդառնա ավելի բազմազան և ապակենտրոնացված: Նման զարգացման հետևանքներից մեկն էլ կլինի այն, որ սովորողներն իրենք կունենան լեզվի ուսուցման, դասավանդման և գնահատման նպատակների և մեթոդների ոլորտում ընտրություն կատարելու և որոշում կայացնելու հնարավորություն: Մասնագիտական և կրթական փոփոխունակությունը նրանց համար անհրաժեշտություն կստեղծի իրենց նպատակներով և նվաճումներով հաղորդակցվել մյուսների հետ՝ թույլ տալով նրանց կատարել ոչ-պաշտոնական ընտրություն, ինչպես նաև փորձի փոխանակմամբ բարձրացնել աշխատանքի ընդհանուր մակարդակը:

### *Ի՞նչ է հանընդհանուր եվրոպական ծրագիրը /նախագիծը/*

Հանընդհանուր եվրոպական ծրագիրը եվրոպայում լեզվական ծրագրերի, ուսումնական պլանների, ուղեցույցների, քննությունների, դասագրքերի և այլնի մշակման համար **ընդհանուր հիմք** է ապահովում: Այն **հասկանալի** և **մատչելի** նկարագրում է այն ամենը, ինչ **պետք է անեն** լեզուն սովորողները, որպեսզի այն օգտագործեն որպես հաղորդակցման միջոց, և թե նրանց ինչ **գիտելիքներ** և **հմտություններ** են պետք, որպեսզի նրանք լեզուն արդյունավետ օգտագործեն: Նախագիծը ներառում է նաև **մշակութային խոսքաշարը**, որտեղ այն ձևակերպվել է, սահմանում է փորձի այն շրջանակները, որոնք թույլ են տալիս որոշելու սովորողների **առաջադիմության մակարդակը** ուսուցման յուրաքանչյուր փուլում և այն էլ երկարաժամկետ հիմքով:

Հանընդհանուր նախագիծը նպատակ ունի **հաղթահարելու** օտար լեզուների բնագավառում մասնագետների միջև **հաղորդակցման արգելքները**, որոնք առաջանում են եվրոպայի տարբեր կրթական համակարգերի տարբերությունների հետևանքով: Այն միջոցներ է ապահովում կրթական ղեկավարների կառավարիչների, դասընթացներ ծրագրողների, ուսուցիչների, քննող մարմինների և այլոց համար՝ խորհելու իրենց ընթացիկ գործունեության մասին, իրենց

ջանքերը համաձայնեցնելու և վստահ լինելու, որ կբավարարեն սովորողների պահանջները:

Ապահովելով համընդհանուր հիմք **նպատակների, բովանդակության և մեթոդների ճշգրիտ նկարագրության** համար՝ նախագիծը կմեծացնի դասընթացների, ծրագրերի և որակավորումների **թափանցիկությունը**, որով և կնպաստի ժամանակակից միջազգային համագործակցությանը:

Լեզվական հմտության նկարագրության չափանիշ գտնելը կհեշտացնի լեզվի ուսումնասիրության տարբեր համակարգերում, տարակարգերում **որակավորումների փոխադարձ ճանաչումը** և ըստ այդմ եվրոպական շարժունակությունը: Նախագիծը ներառում է նաև **մասնակի որակավորումների** նկարագրություն /երբ լեզվի ավելի սահմանափակ իմացություն է պահանջվում, օր.՝ ավելի շատ հասկանալ քան խոսել/: Այսպիսով՝ նման կարողությունների գնահատումը եվրոպական տարբեր լեզուների ուսումնասիրության միջոցով կնպաստի **բազմալեզվությանը**:

## **ԳԼՈՒԽ Լ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Այս գլուխը նախատեսված է նախնական ընթերցման համար: Այստեղ ընթերցողը կգտնի Եվրախորհրդի հիմնական քաղաքական նպատակները, որոնք ուղղված են խթանելու ժամանակակից լեզուների ուսումնասիրությունն ու դասավանդումը և, նրանց ենթադրությունները այդ ոլորտի շուրջ: Այնուհետև կտրվի Շվեյցարիայում կայացած միջազգային խորհրդաժողովի եզրակացությունների համառոտ շարադրանքը, որը երաշխավորեց Համընդհանուր Եվրոպական նախագծի զարգացումը: Ձեռք բերվեց համաձայնություն, որ նախագիծը պետք է լինի **նկարագրական**, ոչ թե հրահանգչական: Մենք ցանկանում ենք, որ գործնական մասնագետները նախ խորհեն և հետո ասեն, թե ինչ են նրանք անում, որոնք են նրանց նպատակները և մեթոդները, և ոչ թե հակառակը, այսինքն՝ ինչ ենք մենք ուզում, որ նրանք անեն: Անշուշտ խորհուրդն իր տեսակետն ունի, բայց այն չպետք է սահմանի կամ աղճատի նկարագրական նախագիծը: Այս տեսակետը, լինելով հիմնականը, միշտ չէ, որ հասկացվել է:

Նախագիծը նպատակ ունի լինել **հասկանալի**, ոչ թե ընտրական: Գոյություն ունեցող ուսուցման և դասավանդման բազմաթիվ տեսակներից մենք ծրագրի սահմաններում պետք է տեղ գտնենք և ի վիճակի լինենք նկարագրելու դրանց միջոցները:

Քանի որ մենք չենք կարող նախապես իմանալ ամեն ինչ, նախագիծը համեմայն դեպս պետք է փորձի լինել **թափանցիկ**, որպեսզի օգտագործողները՝ և՛ իրենց նպատակներն ու մեթոդները, և՛ նկարագրություններն ընկալողները, և՛ նկարագրություններն ընդունողները ի վիճակի լինեն պարզ հասկանալու այն, ինչ առաջարկվում է՝ խուսափելով անորոշությունից: Նախագիծը պետք է լինի **հաջորդական** /հետևողական/, զերծ ներքին հակասություններից և երկիմաստությունից, պետք է լինի **բազմանպատակ**, օգտագործելի տարբեր եղանակներով՝ օգտագործողի կարիքներին համապատասխան, և **հարաշարժ**(dynamic), որպեսզի թերությունների հայտնաբերման դեպքում հնարավոր լինի այն հետագայում լրացնել և զարգացնել: Այն չպետք է լինի **անառարկելի**(non-dogmatic), ընդհակառակը, պետք է ողջունի բոլոր նոր տեսակետներն ու մոտեցումները: Այն **օգտագործման համար հաճելի**(user-friendly) պետք է լինի, խուսափի ավելորդ բարդացումներից ու ժարգոնային բառապաշարից, թերևս չափից դուրս պարզեցումը նույնպես վտանգավոր է:

Օգտագործողի համար օգտակար կլինի մտածել, թե ինչքանով են համատեղելի այդ չափանիշները սեփական նպատակների, մեթոդների հետ: Վերցնենք օրինակ՝ «**հասկանալիության**» չափանիշը: Մենք չենք ուզում ասել, որ յուրաքանչյուր օգտագործող պետք է ջանա կիրառել այն ամենը, ինչ նկարագրված է նախագծում: Նախագիծը պետք է հասկանալի լինի այն իմաստով, որ հարմարեցնի այն ամենը, ինչը որ օգտագործողը կցանկանա մատնանշել: Եթե օգտագործողները գտնում են, որ նախագծում կան հարցեր, որ կցանկանային առանձնացնել, սակայն դա չի արվել, կնշանակի նախագիծը դեռևս չունի այդ չափանիշը: Այդ դեպքում նրանք պետք է կատարեն իրենց սեփական դասակարգումը և տեղեկացնեն մեզ՝ հետագա զարգացումն ապահովելու համար: Միայն թե ինչ պետք է հասկանալ բաց և հարաշարժ նախագիծ ասելով: Մյուս կողմից՝ օգտագործողները կարող են գտնել, որ նախագծի բովանդակությունը կիրառելի չէ իրենց համար, չի համապատասխանում իրենց սովորողների կարիքներին, հարմար չէ, կամ էլ նշվածը չի կարելի ընդունել որպես ճշմարտություն: Ինչ վերաբերում է **թափանցիկությանը**, **հետևողականությանը**, ապա դրանք նույն են թե՛ նախագծի և թե՛ նկարագրության համար, արդյո՞ք հեղինակը բավարար հստակ, հասկանալի լեզվով է նկարագրել ներկայացվածը, թե՛ ոչ: Ինչ վերաբերում է **ճկունությանը**, ապա այստեղ հաշվի են առնվում այն բոլոր պարագաները, որոնցում ծրագիրն օգտագործվում է: Եվ, ի վերջո, որպես **տեղեկագրի** նախագիծ՝ այն պետք է լինի նկարագրական և ոչ թե հրահանգչական:

Պատմական հիմքը մեզ պատկերացում է տալիս ժամանակակից լեզուների բնագավառում Եվրախորհրդի աշխատանքում տեղ գտած արժեքների, վերաբերմունքների մասին:

Նախագիծը ինքնին հեռու է **անառարկելի** լինելուց, այն հնարավորություն է տալիս բոլոր օգտագործողներին իրենց որոշումները հաղորդելու ուրիշներին:

## **ԳԼՈՒԽ II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

Նախ և առաջ այն մեկ անգամ ևս պարզաբանում է, որ համընդհանուր նախագիծը գոյություն ունի ոչ թե միատեսակությանը նպաստելու համար, այլ հաղորդակցությունը բարելավելու համար՝ քաջալերելով բազմազանությունը: Այն ընդունում է, որ համընդհանուր նախագիծը զարգացնելու որոշումն ինքնին քաղաքական որոշում է: XIX դարում և ավելի ուշ, շատ ազգային պետություններ սկսեցին ստեղծել կամ ուժեղացնել ազգային միասնությունը հրամայական, երբեմն նույնիսկ դաժան ձևով միասնական ազգային ծրագրեր, որակավորումներ, դասագրքեր, դասարանական մեթոդներ սահմանելով՝ ոտնատակ էին տալիս տարբեր դրույթներ, որոնք ընդգծում էին այն այլասեռ տարրերը, ինչից որ ստեղծվել էին:

Այսօր հավանաբար անհանգստություն կա որոշ տեղերում, որ Եվրոպական միասնությունը ազգային ինքնությունների կորստի պատճառ կարող է դառնալ:

Սակայն պետք է ասել, որ մայրցամաքային միասնությանն աջակցելը, միևնույն ժամանակ հարգելը, ուսուցմանը ժողովրդավարական ձևով մոտենալը, փոխադարձ տեղեկատվության ձեռք բերումը հեշտացնելը և ներգրավված շատ մասնագետների միջև ընդհանուր մոտեցում գտնելուն նպաստելը վստահության գործ է:

Երկրորդ գլուխը պարզաբանում է նախագծի դերն այդ նպատակին աջակցելու գործում և կոչ է անում բոլոր օգտագործողներին արձագանքել ըստ իրենց փորձառության:

Հավանաբար լեզվի ուսուցման և դասավանդման գործընթացի տարբեր մասնակիցներն ունեն իրենց առանձնահատուկ հոգսերը, որոնք դեռ արտահայտված չեն:

Տաս մասնագիտությունների գծով ուղեցույցների շարքը լիազորվում է օգտագործողների տարբեր կարգերի համար և դրանցից յուրաքանչյուրը ներառում է՝


ա/ օգտագործման եղանակները, բ/ նրանց կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկատվություն:

Մասնագիտացված ուղեցույցներն են՝

1. Ուղեցույց կրթական քաղաքականության մեջ որոշումներ կայացնողների համար.
2. Ուղեցույց քննություն ընդունողների համար.
3. Ուղեցույց մեծահասակների կրթությամբ զբաղվողների համար.
4. Ուղեցույց մեծահասակ սովորողների համար.
5. Ուղեցույց ուսուցիչների համար.
6. Ուղեցույց մանկավարժ կրթողների համար.
7. Ուղեցույց բարձրագույն միջնակարգ հաստատությունում սովորողների համար.
8. Ուղեցույց ծրագիր մշակողների համար.
9. Ուղեցույց դասագրքեր և ձեռնարկներ կազմողների համար.
10. Ուղեցույց միջնակարգ կրթության ուսուցիչներ պատրաստողների համար.

Խնդրվում է բոլոր օգտագործողներին Եվրախորհուրդ ուղարկել ուղեցույցներին առնչվող ցանկացած դիտողություն և առաջարկություն:

# Նախագիծ «Լեզվաքաղաքականությունը բազմալեզու և բազմամշակույթ Եվրոպայի համար»





# **Modern Languages: Learning, Teaching, Assessment. A Common European Framework of reference.**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ՝  
ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԸՆԴՐԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ  
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Modern Languages*

Council for Cultural Co-operation  
Education committee

Strasbourg 1998

## Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն\*

Այս ծանոթության նպատակն է օգնել ավելի արդյունավետ օգտագործելու եվրոպական Համընդհանուր Ծրագիրը/Նախագիծը՝ լեզուն սովորելու, սովորեցնելու և գնահատելու համար: Սույն նախաբանի նպատակն է իր բոլոր կիրառողներին ծանոթացնել ծրագրին/նախագծին, որը գրվել է հետապնդելով երկու գլխավոր նպատակ՝

1. օգնել լեզվական ոլորտի բոլոր սովորողներին, ներառյալ լեզուն ինքնուրույն սովորողները, անդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են.

- ի՞նչ ենք մենք գործնականում անում, երբ հաղորդակցվում ենք իրար հետ (գրավոր կամ բանավոր).

- ի՞նչն է հնարավորություն տալիս մեզ այդպես գործելու.

- որքա՞ն ժամանակ է մեզ հարկավոր սովորելու համար.

- ինչպիսի՞ նպատակաուղղվածություն ունենք և ինչպե՞ս հասնել առաջխաղացման՝ ընդհանուր անհրազեկությունից՝ կատարյալ վարպետության հասնելու համար.

- ինչպե՞ս է ընթանում լեզվի ուսուցումը.

- ինչպե՞ս մենք կարող ենք օգնել մարդկանց՝ լեզուն ավելի լավ սովորելու համար:

2. Միասնական չափանիշների հիման վրա դասավանդման ընթացքի բոլոր մասնակիցների համար ստեղծել պայմաններ միմյանց տեղեկացնելու տվյալ գործընթացի և արդյունքների մասին:

Մի բան պետք է շատ պարզ լինի. մենք այս ամենը շարադրում ենք՝ չպարտադրելով կիրառողներին այս կամ այն ձևով օգտագործել այս ծրագիրը/նախագիծը: Մենք հարցեր ենք բարձրացնում, բայց չենք պատասխանում դրանց: Եվրոպական Համընդհանուր Ծրագրի/Նախագծի գործառույթների մեջ չեն մտնում այնպիսի նպատակներ, որ օգտագործողներն ընդօրինակեն կամ մեթոդները կիրառեն: Դա չի նշանակում, որ Եվրախորհուրդն անտարբեր է այդ խնդիրների նկատմամբ: Իրոք, Եվրախորհրդի անդամ երկրների՝ ժամանակակից լեզուների նախագծերում իրար հետ աշխատող գործընկերների կողմից տարիներ ի վեր շատ մեծ մտահոլացումներ են իրականացվել և աշխատանքներ են տարվել այս սկզբունքների և լեզվի ուսուցման պրակտիկայում սովորելու, սովորեցնելու և գնահատելու գործում:

Դուք կգտնեք հիմնական սկզբունքները և դրանց գործնական արդյունքները, որոնք շարադրված են Նախարարների Խորհրդի (82)18 հանձնարարականում /գլուխ I, էջ 1-2/: Դուք կտեսնեք, որ Խորհուրդը մտահոգված է՝ տարբեր լեզուներ և մշակույթ ունեցող եվրոպացիների միջև հաստատելու որակյալ հաղորդակցություն: Ազատ հաղորդակցությունը շփումների և ուղղակի կապի գրավականն է, որը տանում է փոխըմբռնման և ավելի մոտ համագործակցության: Խորհուրդը խրախուսում է սովորելու և սովորեցնելու հետ կապված այն մեթոդները, որոնք երիտասարդներին օգնում են ձեռք բերելու գիտելիքներ և հմտություններ, որոնք նրանց հարկավոր են իրենց մտքերի և գործունեության մեջ ավելի անկախ լինելու համար և ավելի պատասխանատու և համագործակցող մարդկանց հետ ունեցած հարաբերություններում: Այս հիմնական նպատակները /տես՝ Հանձնարարական R(82)18, Ընդհանուր Չափանիշներ 2 /էջ 1-2//, խրախու-

\*Թարգմանությունը՝ Council of Europe Modern Languages: Learning, Teaching, Assessment. A Common European Framework of reference. Draft 2 of a Framework proposal. Strasbourg 1998. /էջ V-X, 6-17/

սում են բոլոր նրանց, ովքեր կապված են լեզուն սովորեցնող կազմակերպության հետ, հիմնում են իրենց աշխատանքը սովորողների կարիքների, շարժառիթների բնավորությունների և այլ գործոնների վրա: Սա նշանակում է տալ այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝

- ի՞նչ պետք է սովորողները ձեռքի տակ ունենան լեզուն սովորելու համար.
- ի՞նչ է հարկավոր նրանց սովորեցնել, որպեսզի կարողանան լեզուն օգտագործել իրենց առջև դրված խնդիրները կատարելու համար.
- ի՞նչն է նրանց ստիպում սովորել.
- ի՞նչ տիպի մարդիկ են նրանք (տարիքը, սեռը, հասարակական և կրթական նախադրյալները և այլն).
- ինչպիսի՞ գիտելիքներ, հմտություններ և փորձ ունեն նրանց ուսուցիչները.
- ինչպե՞ս են նրանք օգտագործում և յուրացնում դասագրքերը, տեղեկագրերը (բառարաններ, քերականական գրքեր), լսատեսողական օժանդակ միջոցները, համակարգչային ծրագրերը և այլ միջոցներ.
- որքա՞ն ժամանակ նրանք կարող են տրամադրել /ցանկություն կամ հնարավորություն ունեն/:

Սովորելու/սովորեցնելու ժամանակ հիմնականում շատ կարևոր են այն նպատակները, որոնք արժեքավոր են և իրագործվում են լեզուն սովորողների ուսուցման ընթացքում: Կազմակերպված լեզվի ուսուցման հետ առնչություն ունեն ոչ միայն ուսուցիչները և սովորողները դասարանում, այլև կրթական լիազորություն ունեցողները, քննողները, դասագիրք գրողները, հրատարակողները և այլն: Եթե նրանք համաձայն են այս խնդիրներին, ապա կարող են աշխատել ընդհանուր կամ անհատական՝ օգնելով սովորողներին հաղթահարելու դժվարությունները: Նրանք աշխատում են իրենց նպատակները և մեթոդները դարձնել պարզ և հստակ այդ աշխատություններից օգտագործողների համար:

Ինչպես բացատրվում է II գլխում, սա խթան է հանդիսացել Եվրոպական Հանրնդհանուր Ծրագրի/Նախագծերի զարգացմանը: Ներկայացնելով դրա գործունեությունը՝ ասենք, որ այն պետք է բավարարի որոշակի չափանիշների այն պետք է լինի հետևողական, հատուկ և համակողմանի: Այս չափանիշները մանրամասնորեն շարադրված և բացատրված են III գլխում: Սա պարզապես նշանակում է, որ դրա մեջ դուք կարող եք գտնել այն ամենը ինչ ուզում եք՝ ձեր արդյունքներն ամփոփելու համար:

III գլխում բացատրված /ավելի հստակ ներկայացված է Գ-րդ էջում/ և IV գլխում ներկայացված չափանիշների, կարգերի օրինակների համակարգը տրված են՝ իրազեկության, գիտելիքների, հմտությունների և դիրքորոշումների հստակ պատկեր ներկայացնելու համար, որոնք սովորողները ձեռք են բերում լեզուն օգտագործելու իրենց փորձառության հիման վրա, որով հնարավորություն է ստեղծվում լեզվամշակութային շփումներ ունենալ /այսինքն՝ բարեհաջող իրականացնելու հաղորդակցման պահանջները և գործունեություն ծավալել հասարակական կյանքի տարբեր բնագավառներում/:

Ենթադրելով, որ լեզուն դասավանդելիս սովորողներին փորձառու և իրազեկ դարձնելու նպատակով անհրաժեշտ է պարզ և համակողմանի ներկայացնել նպատակները: Դուք կտեսնեք, որ այս գծագիրն իր մեջ պարունակում է շատ ավելին, քան դուք դրա կարիքը կունենաք: Սկսած IV գլխից՝ ամեն պարբերության վերջում դուք կգտնեք մի շարք նպատակաուղղված հարցեր, որոնց միջոցով կարող եք իմանալ, թե արդյոք այդ պարբերությունը որևէ առնչություն ունի՞ ձեր նպատակների և արդյունքների նկարագրության հետ: Հավանաբար, դուք կորոշեք, որ դա հարմար չէ, կամ միգուցե դա չի համապատասխանում այն սովորողների պահանջներին, որոնց դուք նկատի ունեք կամ եթե նույնիսկ դա նրանց համար օգտակար է, առաջնային չի կարելի համարել դրա համար



սահմանված ժամանակը և այլ ռեսուրսներ: Այդ դեպքում դուք կարող եք անտեսել պարբերությունը: Եթե, այնուամենայնիվ, դա հարմար գտնեք (և տեսնելով դա համատեքստում՝ ձեր ուշադրությունը կենտրոնանա դրա վրա), ծրագրի/նախագծի IV գլուխը մի քանի օրինակներով ձեզ կտա անուններ՝ մի շարք չափանիշներ և կատեգորիաներ օգտագործելու համար:

Ո՛չ կարգերը, ո՛չ էլ օրինակները վերջնական չեն: Եթե դուք ուզում եք նկարագրել մի մասնագիտացված ոլորտ, ապա պահանջից ելնելով՝ կարող եք դա ենթադասակարգել: Օրինակները միայն առաջարկվում են: Ցանկության դեպքում դուք կարող եք դրանք պահպանել, ժխտել դրանցից մի քանիսը և ավելացնել ձեր իմացածը: Դուք ամենևին չպետք է կաշկանդվեք այդ անելիս, քանի որ նպատակների և արդյունքների հետ կապված որոշումներ կայացնողը դուք եք: Հաշվի առեք այն, որ ինչը դուք համարեք ոչ այնքան անհրաժեշտ, մեկ ուրիշի համար կարող է կարևոր լինել: Օրինակ, դպրոցի ուսուցիչը կարող է ձայնային աստիճաններն ամենևին էլ հաշվի չառնել, բայց ավիաուղիների օդաչուների ուսուցիչը, որին չի հաջողվել 100%-ով վարժեցնել նրանց գետնա-օդային հաղորդակցությունում չափազանց աղմկոտ դայգիսթներն (digits) անտեսելու դեպքում կարող է նրանց և ուղևորներին դատապարտել մահվան: Մյուս կողմից այն լրացուցիչ կարգերը և նմուշները, որոնք կավելացնեք, օգտակար կլինեն նաև ուրիշ կիրառողների համար: Այս պատճառով, տաքսոնոմիկ գծագիրը, ներկայացված ծրագրի/նախագծի IV գլխում, չի համարվում փակ համակարգ, այլ բաց է՝ արդյունավետ փորձառության հետագա զարգացման համար: Այս սկզբունքը կիրառվում է նաև հմտությունների մակարդակների նկարագրման համար: VIII գլուխը հստակ բացատրում է, որ մակարդակները, որոնցով կիրառողը ցանկանում է զանազանություններ մտցնել՝ արդյունքը տարբերակելով և այդ նպատակի համար տեղեկատվություն օգտագործելով: Իրականում, գոյություն ունեցող մակարդակները չպետք է ավելացվեն հետագա անհրաժեշտության դեպքում: «Հիպերտեքստային» ճյուղավորված սկզբունքները հնարավորություն են տալիս սովորողներին արտացոլելու ընդհանուր կամ մեղ մակարդակներ, իրենց պահանջներին զուգահեռ կատարելու վերջնական տարբերակում սովորողների միջավայրում: Հնարավոր է զանազանել և կատարել նպատակների պայմանական մակարդակների աստիճանական տարբերակում: Հիմնականում VIII և IX գլուխներում և հավելվածում օգտագործված վեց մակարդակային կառուցվածքները հիմնված են հասարակական քննող մարմինների փորձի հիման վրա: Նկարագրողները հիմնվել են նրանց վրա, ովքեր «անկեղծ, օգտակար են եղել և եղել են օտար և մայրենի լեզվով խոսողներ տարբեր կրթական մակարդակներով, տարբեր մասնագիտություններով»:

Որպես կիրառող՝ ձեզ առաջարկվում է օգտագործել սանդղակային սիստեմը և քննադատել այն նկարագրողներին: Եվրախորհրդի ժամանակակից լեզուների բաժանմունքը ուրախ կլինի ստանալու ձեր կարծիքը ուսուցման մեջ օգտագործելու նպատակով: Նկատի ունեցեք, որ սանդղակային համակարգը նախատեսված է ոչ միայն գլոբալ փորձառության համար, այլ նաև IV գլխում շարադրված է լեզվի փորձառությունը՝ սանդղակային յուրաքանչյուր չափանիշի համար: Սա հնարավորություն է տալիս տարբերակել մասնաճյուղերը՝ կոնկրետ սովորողների համար:

VII գլուխը քննարկում է ուսումնական ծրագրի նախագիծը՝ ներգրավելով լեզուն սովորելու նպատակների տարբերակումը, հատկապես խոսքաշարերի կառուցումը՝ հաշվի առնելով անհատների բազմալեզվությունը և բազմամշակութային իրազեկությունը, նպաստավոր պայմաններ ստեղծել՝ բազմալեզու և բազմամշակութային Եվրոպայի հետ հաղորդակցվելու համար: Այդ գլուխը տալիս է սերտ ուսուցում նրանց համար, ովքեր առաջնորդվում են ուսումնական պլանով,

որը ներառում է մի շարք լեզուներ, և ենթադրում է սովորողների համար ընտրության հնարավորություն:

VI-րդ գլխում ուշադրություն է դարձվում մեթոդական հարցերին: Ինչպե՞ս է տվյալ օտար լեզուն ուսուցանվում և յուրացվում: Մենք ի՞նչ կարող ենք անել սովորելու ձեռքբերումների գործընթացը հեշտացնելու համար: Այստեղ նույնպես, ծրագրի/նախագծի նպատակը չէ թելադրել կամ նույնիսկ երաշխավորել մեկ կոնկրետ մեթոդ, այլ ընտրության, հնարավորություն տալ, արտացոլելով ձեր ունեցած պրակտիկան, համապատասխանաբար որոշումներ կայացնելով և ներկայացնելով գործնականում ձեր կատարածը: Անշուշտ խորհելով ձեր նպատակների մասին՝ կարող էինք ձեզ խրախուսել, երաշխավորել՝ հաշվի առնելով, որ խորհրդի կողմից առաջարկվող նախագծի նպատակն է ձեզ աջակցելը:

## **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՈՒՆԵՐ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՍԸՆԴՅԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

I գլուխը ներկայացնում է ծրագրի պատմական նախադրյալը, մասնավորապես Նախարարների կոմիտեի և այլ եվրոպական խորհրդատու մարմինների, ինչպես նաև 1991թ. շվեյցարական Ռյուշլիկոն քաղաքում անցկացրած միջկառավարական գիտաժողովի կողմից ներկայացված մի շարք որոշումներն ու առաջարկությունները:

Այդ մարմինները միաձայն որոշեցին հաստատել կառուցվածքի նպատակները և գործառնությունները, ընդունեցին այն չափանիշները, որոնց այդ կառուցվածքը պետք է բավարարի:

II գլուխը շարադրում է կառուցվածքի գործառնությունները՝ գիտության բնագավառում գոյություն ունեցող լեզվամշակութային բազմազանության շրջանակներում: Այսպիսով՝ այդ կառուցվածքը ոչ թե որևէ առանձին լեզվի ուսուցման որևէ առանձին համակարգման փորձ է, այլ մի կուռ կառուցվածք է, որը կօգնի լեզուն ուսումնասիրողներին /սովորողներին, ուսուցիչներին, ապագա ուսուցիչներ պատրաստողներին, դասընթացների հեղինակներին, գնահատող մասնագետներին, ադմինիստրատորներին, ծնողներին, ձեռնարկատերերին և այլն/՝ զետեղելու և ընտրելու վարժություններ ու համապատասխանաբար պարզ և կապակցված տեղեկություն տալու միմյանց:

III գլուխը բացատրում է ընդհանուր մոտեցումը: Նրա հիմքն է լեզվի կիրառման վերլուծությունը այն ռազմավարական պայմաններում, որ սովորողներն օգտագործում են ընդհանուր և հաղորդակցական հմտություններն ակտիվացնելու համար, որպեսզի առանձին թեմաներին վերաբերող տեքստերի օգտագործման և յուրացման ժամանակ կիրառվող միջոցներն ու մեթոդները կարողանան օգտագործել: Դա սովորողներին հնարավորություն կտա կատարելու առաջադրանքներն այն իրադարձությունների շրջանակներում, որոնք գոյանում են հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Այս ընդգծված բառերը մատնանշում են լեզվի կիրառման և սովորողի՝ լեզուն կիրառելու ընդունակության նկարագրման չափանիշները: Ապա լեզվի ուսումնասիրության առաջադիմությունը կարելի է աստիճանավորել գիտելիքների մակարդակների մի ճկուն շարքի տեսքով, որը կսահմանեն հատուկ մասնագետները: Այս ապարատը պետք է այնքան հարուստ լինի, որ մատակարարի սովորողների կարիքների ամբողջ ոլորտը և, այդպիսով, նաև տարբեր մատակարարողների նպատակները կամ լեզվական որակավորման թեկնածուների կարիքները:

IV գլուխը որոշ /բայց ոչ սպառիչ կամ վերջնական/ մանրամասներով սահմանում են այն կարգերը, որոնք ընդունված չափանիշների համաձայն հարկավոր են լեզվի գործունեությունը և լեզուն սովորողին ներկայացնելու համար: Նրանք ընդգրկված են հետևյալ հերթականությամբ՝ ա) լեզվի կիրառման համար խոսքաշարը ապահովող ոլորտները և իրադրությունները, բ) հաղորդակցման խնդիրները, նպատակները և թեմաները, գ) հաղորդակցման գործունեություններն ու մեթոդները, դ) տեքստը և սովորողի ընդհանուր ու հաղորդակցական հմտությունները և ռազմավարությունը:

V գլուխը մանրամասնորեն քննարկում է առաջադրանքների և մատուցվող նյութերի դերը լեզվի իմացության և կիրառման բնագավառում:

VI գլուխը քննարկում է լեզու սովորելու և յուրացնելու գործընթացները, որոնք կապված են գիտելիքների ձեռքբերման, ուսման հետ, ինչպես նաև ընդհանուր և յուրահատուկ մեթոդների ընտրությունների հետ:

VII գլուխը առնչվում է ուսումնական ծրագրի նախագծի լեզվաբանական զանազանության եզրակացությունների հետ, քննարկում է հետևյալ հարցերը. բազմալեզվություն և բազմամշակութայնություն, տարբերակված ուսումնական նպատակներ, ուսումնական ծրագրի նախագծի հիմունքեր, ուսումնական ծրագրերի սցենարներ, լեզվի անընդմեջ ուսուցում, մոդելավորում և մասնակի հմտություններ:

VIII գլուխը սկզբունքորեն վերաբերում է լեզվի երկարաժամկետ ուսուցման դեկավարմանը սանդղակներ և մակարդակներ հաստատելու միջոցով՝ նախ քննարկելով «ուղղահայաց» չափանիշի կարիքը, ապա ձևակերպող նկարագրողների սանդղակավորման և պահանջների մեթոդներն ու չափանիշները: Այնուհետև ներկայացվում է մի «ճյուղային» մոտեցում, որը կապահովի տարբեր տեսակի համակարգերում մակարդակներ ձևավորելու և ճկունություն, և՛ համեմատելիություն: Քննարկվում են նվաճման մակարդակների նկարագրման ընտրությունները՝ նկատի առնելով IV-րդ գլխում և այլուր ներկայացված չափանիշներն ու կարգերը:

IX գլուխը քննարկում է գնահատման տարբեր նպատակները, գնահատման համապատասխան տեսակները՝ հաշվի առնելով բազմակողմանիության, ճշգրտության, կիրառական կատարելության մրցակցող չափանիշները համաձայնեցնելու կարիքը:

Հավելվածը, որը հիմնված է Շվեյցարական Ազգային Գիտահետազոտական Խորհրդի Նախագծի նախնական արդյունքների վրա, ներկայացնում է IV-րդ գլխի նկարագրման չափանիշների պարզաբանված սանդղակների մի ընդարձակ ժողովածու:

## Գ Լ Ու Խ II

### ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

#### 2.1. Նախագծի նշանակությունը և նպատակները

Եվրոպայում ժամանակակից լեզուներ սովորելու նպատակները, դասավանդման պրակտիկան և մոտեցումները չափազանց տարբեր են և չեն կարող այդպիսիք չլինել: Լեզուն սովորելու և սովորեցնելու մեթոդների բազմազանությունը շատ կարևոր է: Դա կապված է ուսման համատեքստի, հիմունքների, ինչպես նաև ուսման հետ առնչվող խմբերի ու անհատների հետ: Քարացած համակարգերի ժամանակն արդեն անցյալ է:

Բայց այն բազմազանությունը, որն այժմ բնորոշ է լեզվի դասավանդմանը, ընդհանուր առմամբ պետք է ճանաչվի և նկարագրվի ոչ միայն տեղեկատվության և դասակարգման նպատակներով, այլ այն պատճառով, որ խոսողների մեծամասնությանը ընտրություն կատարելու համար հարկավոր են նշաններ և հանձնատվության հատկանիշներ:

Սովորողները, դասընթացների հեղինակները, ուսուցիչ պատրաստողները, դասընթացներ նախագծողները, ձեռնարկներ ստեղծողները և գնահատող մասնագետները կարող են կատարել իրենց ընտրությունը և դրանք մեկը մյուսին բացատրել (որն անհրաժեշտ է անել) միայն այն դեպքում, եթե նրանք ընդհանուր կամ համատեղելի մանրամասներ ունեն, որոնք կօգնեն նրանց հաշվի առնելու այդ բազմազանությունը և մշակելու այն: Այն ժամանակ, երբ լեզվի ուսուցումը եվրոպայում կատարվում է մասամբ մարդկանց և ապրանքների (ճանապարհորդություն, կարիերայի զարգացում, ինֆորմացիայի և արտադրանքի շրջանառություն) շարժունակությամբ, ուսման ուղիները և նրանց տարբեր փուլերը պետք է հարմարեցվեն պարզ ու հաջորդական նկարագրությամբ: Այս նպատակով նախագծի զարգացումը, տարածումը և սիստեմատիկ նոր տվյալներ հավաքելը ոչ միայն տրամաբանական է, այլև անհրաժեշտ: Այս աշխատության գլխավոր նպատակը տաքսոնոմիա ներկայացնելն է, որը ցույց կտա նկարագրական կարգերի և ենթակարգերի հարաբերությունը, հեշտացնելով ուսման և ուսուցման նպատակների ու բովանդակության նկարագրությունը, ինչպես նաև ստացված արդյունքների և նվաճված մակարդակների, լեզվի ուսուցման ուղիների տարբեր հատվածների և փուլերի նկարագրությունը: Այս ամենի համար աշխատությունը կրկնակի դեր պետք է ունենա՝

- օգնել կիրառողներին ընտրություն կատարելու,
- օգնել իրար տեղեկություններ հայտնող բոլոր խոսակիցներին:

Եվրոպայում, որն ինքնանցման շրջանի մեջ է գտնվում, որտեղ տարբեր կրթական ավանդույթներն ընդլայնում են լեզվական ուսման/ուսուցման բնագավառում նկատված բազմազանությունը, ավելի է անհրաժեշտ կազմել մի ընդհանուր ծրագիր, որը պայմանավորված չի լինի որևէ առանձին տեսական կամ գաղափարախոսական կաղապարով, բայց որը կարող է համաձայնեցնել տարբեր մոտեցումներն ու իրադրությունները: Մյուս կողմից՝ որոշ չափով անմիտ կլինի պատկերացնել, որ ցանկացած ձևի դասակարգումը կարող է ներկայացվել որպես բացառապես չեզոք, անկողմնակալ և միանգամայն նկարագրական: Պարզ է, որ եվրոպայի «Ժամանակակից լեզուների» նախագիծը, որն ավելի լայն իմաստով միջազգային մի կազմակերպություն է, կկատարի իր բարձրագույն դերը. լեզվի ուսուցումն իր բազմազանությամբ պետք է առաջին հերթին նպաստի մարդկանց անձնական և մասնագիտական զարգացմանը, մարդկանց հաղորդակցությանը և միջմշակութային ու միջազգային փոխհարաբերությունների ընդլայնմանը: Հետևաբար, լեզվի ուսուցման/ուսման և գնահատման եվրոպական ծրագրի ներկայացումը պետք է հաշվի առնի այս ամենը՝ գործադրելով բազմազան ուղիներ և միջոցներ:

Ոյուշլիկոնի գիտաժողովի եզրակացությունների համաձայն, կարևոր ընդհանուր նպատակը լեզվական խոչընդոտների հաղթահարումն է: Անհրաժեշտ է՝

- ավելացնել անձնական շարժականությունը,
- բարձրացնել միջազգային համագործակցության արդյունավետությունը,
- ուշադրությունը կենտրոնացնել ճանաչողական և մշակութային բազմազանության վրա,
- ավելի մատչելի դարձնել տեղեկատվությունը,
- ակտիվացնել անձնական փոխներգործությունը,
- բարելավել աշխատանքային հարաբերությունները,

- հասնել ավելի խոր փոխընթացման:

Այս ծրագրի ծանոթացման ընդհանուր շրջանակներում ցանկացած առաջարկություն միտում ունի շեշտելու նրա դիմամիկ բնույթը և կապ ստեղծելու ուսման և ուսուցման, հաղորդակցման միջև, սովորողի և այն իրադարձությունների միջև, որոնց շրջանակներում նրանք կկիրառեն տվյալ լեզուն:

## 2.2.Ծրագրի (Framework) ֆունկցիաները

Կիրառողների հեշտ ընտրություն կատարելուց բացի, ընդհանուր ծրագրի/նախագծի մեկ այլ կարևոր դերն այն է, որ լեզվական ուսուցման և ուսման գործընթացի բոլոր մասնակիցներին հնարավորություն կտա հնարավորին չափ պարզ տեղեկացնել իրենց նպատակների մասին, գլխավորապես այն մասին, թե ինչ մակարդակի են ուզում հասցնել սովորողներին կիրառվող մեթոդների և ստացված արդյունքների շնորհիվ: Այս տեղեկատվությունը շատ մեծ արժեք կունենա ինտերակտիվ եվրոպայում և տարբեր գրուցակիցների հնարավորություն կտա հեշտացնել կրթական, մասնագիտական և որակավորման բարձրացումը, ինչպես նաև անձնական շարժականությունը աշխարհամասում, որտեղ աստիճանաբար վերանում են շարժման, հաղորդակցման և համագործակցության արհեստական խոչընդոտները:

Հնարավոր չէ լեզվին տիրապետել ամբողջությամբ, այն էլ այնպես, որ սովորողը կարողանա խոսակցի հետ արդյունավետ հաղորդակցվել ցանկացած թեմայի շուրջ: Այնուամենայնիվ, լեզվի ոչ մի ոլորտ չի կարելի անուշադրության մատնել՝ համարելով սովորողի կարողությունների շրջանակից դուրս: Գիտությունը, տեխնոլոգիաները միջազգային են: Տերմինները կամ վարժություններն այնքան խրթին չեն, որ չհետաքրքրեն գոնե նույն բնագավառի արտասահմանյան մասնագետներին: Տարամասնությունը, էքսոգամիան /տարամուսնություն/, ընտանիքի հաղորդակցման լեզուն մի կարևոր հոգս է դարձնում նրանց համար, ովքեր ունեն երկլեզու ընտանիք: Հետևաբար դասավանդման ընդհանուր կառուցվածքը պետք է լինի սպառիչ, այսինքն՝ պետք է ներկայացվեն լեզվի ուսման և ուսուցման բոլոր ձևերն ու ուղղությունները: Իհարկե, համակարգը չի կարող լինել սպառիչ այն իմաստով, որ մանրամասնորեն նկարագրի բոլոր այն լեզուները, որոնք որևէ մեկը երբևիցե կցանկանար սովորել կամ սովորեցնել: Դա միանգամայն անիրագործելի է: Ակտիվ զարգացող հասարակության մեջ դա տեսականորեն անհնարին է: Լեզուն գտնվում է անընդհատ փոփոխության մեջ: Ուրեմն, նախագիծը պետք է ներկայացնի նկարագրության համար անհրաժեշտ չափանիշներ, իսկ առավել բարձր կատեգորիաները թողնի, որ կիրառողներն իրենք մատակարարեն կոնկրետ տարրերը՝ անհրաժեշտ մանրամասներով: Ընդհանուր կառուցվածքի սահմաններում դա կարող է նրանց ոգևորել՝ խորհելու սովորողների հմտությունների և կարողությունների մասին, որոնց նախապես ուշադրություն չեն դարձրել: Սովորողներին կարելի է նաև օգնել զարգացնելու գիտելիքները և ուսմանն ավելի համակարգված տեսք տալ:

Նախագիծը կիրառողներին այս փաստաթղթի 4-9 գլուխներում մի շարք հարցեր են ուղղված: Նրանց նպատակն է օգնել կիրառողներին խորհելու ընթացիկ գործունեության մասին և, եթե հարկ կլինի, վերանայելու այն: Այս հարցերի պատասխանները բոլորովին էլ սպառիչ չեն: Անկասկած, փորձառու կիրառողները կհետաքրքրվեն մի քանի հարցերով, և հնարավոր է, որ շարադրված տարբերակներից ոչ մեկը նրանց չբավարարի: Բազմաթիվ դեպքերում դրանք կարող են չափազանց թերի թվալ՝ արտահայտելու համար մի

իրադարձություն, որն ավելի նրբերանգային է կամ արժանի է ավելի լուրջ վերաբերմունքի:

Ծրագրի/նախագծի բոլոր սովորողներին խնդրվում է մասնակցել նրա հետագա զարգացմանը՝ ավելացնելով նրա նկարագրական ուժը: Հարցերի վերաձևակերպումը, ինչպես նաև ընտրության ընդլայնումը և նրա բովանդակության հարստացումը ցանկալի են:

Գնահատելի են նաև բացասական և դրական փորձի հաշվետվությունները՝ կապված առանձին մեթոդաբանական տարբերակների հետ: Ինչպես արդեն շատ անգամ ասվել է, ծրագրի/նախագծի նպատակների մեջ չի մտնում որևէ տարբերակի բացառում, եթե նույնիսկ այն կարող է անհամատեղելի թվալ լեզվի տիրապետման, ուսման և ուսուցման ընթացիկ տեսական մոտեցումների կամ հենց եվրախորհրդի ժամանակակից լեզուների ծրագրի հետ: Եվրոպական խորհուրդը կողմնակից է ոչ թե դոգմատիզմին, այլ երկխոսությանը, և բոլոր նրանք, ովքեր անկեղծորեն ընդգրկված են երիտասարդների ու մեծահասակների լեզվամշակութային կրթության մեջ, անգնահատելի դեր են կատարում այս մայր ցամաքի բարդ, բազմաբնույթ մտքերի և փորձի փոխանակման գործում:

### **Գ Լ Ու Խ III ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ**

- 3.1. Գործունեության վրա հիմնված մոտեցում**
- 3.2. Ենթակարգեր**
  - 3.2.1. Անձի ընդհանուր ունակություններ**
  - 3.2.2. Հաղորդակցման լեզվական ունակություն**
  - 3.2.3. Լեզվական գործունեություն**
  - 3.2.4. Բնագավառներ**
  - 3.2.5. Առաջադրանքներ, ռազմավարություններ և տեքստեր**

#### **3.1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ**

Ծրագրի/նախագծի կառուցվածքը պետք է առնչվի լեզվի կիրառման և ուսուցման/ուսման մի ընդհանուր, շատ կարևոր տեսակետի հետ: Ընդհանուր առմամբ այստեղ ընդունված է գործունեության կողմնորոշմամբ մի մոտեցում, քանի որ տեսակետներ կիրառողները և լեզու սովորողները նախ և առաջ հասարակության անդամներ են, որոնք ունեն խնդիրներ /բացառապես լեզվի հետ կապված/ և դրանք պետք է կատարեն որոշակի հանգամանքներում, մի առանձին միջավայրում և գործունեության մի յուրահատուկ բնագավառում: Չնայած խոսքային ակտերը տեղի են ունենում լեզվի գործածության ժամանակ, այդ գործունեությունները կազմում են մի ավելի ընդարձակ կայուն խոսքաշարի մաս և միայն այդ խոսքաշարը կարող է բացահայտել նրանց իմաստն ամբողջությամբ:

Առաջադրանքի մասին խոսելը տրամաբանական է, քանի որ գործողությունը կատարվում է մեկ կամ մի քանի անձանց կողմից, որոնք օպերատիվորեն օգտագործում են իրենց յուրատիպ կարողությունները՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Հետևաբար, գործունեությամբ կողմնորոշված մոտեցումը հաշվի է առնում նաև իմացական, զգացմունքային ու կամային աղբյուրներն ու ընդունակությունների ամբողջ շարքը, որը կիրառվում է անձի՝ որպես հասարակական գործչի կողմից և հատուկ է նրան: Հետևաբար, լեզվի ուսման և կիրառման ցանկացած ձև կարելի է այսպես նկարագրել. լեզվի կիրառումը և ուսումը այնպիսի գործունեություն է, որը կատարում է հասարակական

գործակալը և որպես անհատականություն, ունի ընդհանուր ունակություններ և, մասնավորապես, անձին հատուկ հաղորդակցման լեզվական ունակություններ: Նա այդ կարողությունները բացահայտում է լեզվագործունեության տարբեր տեսակների ժամանակ՝ առանձին բնագավառների հետ կապված նյութը մշակելիս, ակտիվացնելով այն ռազմավարությունը, որ առավել հարմար է առանձին առաջադրանքները կատարելու համար: Ընդհանուր և մասնավոր հաղորդակցական ունակությունների այս իրադրական կիրառումը հետադարձ կապ է ապահովում, որն իր հերթին հանգեցնում է նրանց ձևափոխմանը:

Յուրաքանչյուր հասարակական գործչի *ընդհանուր ունակությունը* գիտելիքների, հմտությունների և առանձնահատկությունների միացություն են, որոնք հնարավորություն են տալիս այդ գործչին գործունեություն ծավալելու:

*Հաղորդակցման լեզվական ունակությունները* հնարավորություն են տալիս հասարակական գործչին գործելու լեզվական միջոցներ կիրառելով:

Որևէ առանձին բնագավառում *լեզվագործունեությունը* գործածողի հաղորդակցման լեզվական ունակությունների դրսևորումն է՝ մեկ կամ ավելի տեքստեր մշակելու որևիցե առաջադրանք կատարելու համար:

*Տեքստը* որևէ բնագավառին վերաբերող վերարտադրված կամ գրված ցանկացած հաջորդականություն կամ խոսակցությունն է, որն առաջադրանք կատարելու ընթացքում դառնում է լեզվական գործունեության մի պարագա՝ լինի այն միջոց, թե նպատակ, արդյունք, թե գործընթաց:

*Բնագավառը* հասարակական կյանքի այն ընդարձակ բաժիններից է, որտեղ գործում են հասարակական գործակալները: Այստեղ ընդունված է ավելի բարձր մակարդակի դասակարգում, որի մեջ ընդգրկված են գլխավոր դասեր՝ կապված լեզվի ուսուցման և կիրառման հետ. կրթական, պրոֆեսիոնալ, հասարակական և անձնական բնագավառներ.

*Ռազմավարությունը* կազմակերպված, նպատակային և կանոնավորված գործունեության ցանկացած ուղղություն է, որն անհատն ընտրել է, որպեսզի կատարի իր առջև դրված առաջադրանքը:


*Առաջադրանքը* սահմանվում է որպես նպատակային գործողություն, որն անձի համար խիստ անհրաժեշտ է, որպեսզի նա հասնի որոշակի նպատակի՝ պրոբլեմ լուծելիս, պարտականություն կատարելիս: Այս սահմանումը ընդգրկում է գործողությունների մի մեծ շարք, օր.՝ զգեստապահարան շարժելը, գիրք գրելը, պայմանագրի վերաբերյալ բանակցություններ վարելը, թղթախաղով զբաղվելը, ռեստորանում ուտելիք պատվիրելը, օտար լեզվով տեքստ թարգմանելը կամ կոլեկտիվ աշխատանքի միջոցով դասարանային թերթ պատրաստելը: Եթե ընդունենք, որ վերը թվարկված տարբեր չափանիշները փոխկապակցված են լեզվի կիրառման և ուսման բոլոր ձևերում, ապա լեզվի ուսման կամ ուսուցման գործողությունը յուրաքանչյուրի հետ որոշ չափով կապված է հետևյալ չափանիշներով՝ ստրատեգիաներ, առաջադրանքներ, նյութեր, անձի ընդհանուր ունակություններ, հաղորդակցման լեզվական ունակություններ, լեզվական գործունեություններ և բնագավառներ: Միևնույն ժամանակ, ուսման և ուսուցման մեջ նույնպես հնարավոր է, որ նպատակը և, հետևաբար, գնահատումը, մի որոշակի բաղադրիչի կամ ենթաբաղադրիչի վրա կենտրոնացված լինեն (իսկ մնացած բոլոր բաղադրիչները համարվեն ուղղակի նպատակին հասնելու միջոցներ կամ այնպիսի հայեցակերպեր, որոնց այլ ժամանակ պետք է ուշադրություն դարձվի, կամ որոնք ուղղակի տվյալ պարագայի հետ կապված չեն): Սովորողները, սովորեցնողները, դասընթաց նախագծողները, ուսուցման նյութերի հեղինակները և քննական հարցատոմսեր պատրաստողները այս գործընթացում անխուսափելիորեն կենտրոնանում են մի առանձին չափանիշի վրա՝ որոշելու այն աստիճանը, ըստ որի պետք է ուշադրություն դարձնել այլ չափանիշներին և դրանք

հաշվի առնելով՝ ուղիներ որոնել գործընթացում: Դա պարզաբանված է ներքոհիշյալ օրինակներով:

Այսուամենայնիվ, միանգամայն պարզ է, որ ուսուցման/ուսման ծրագրի նպատակը հաղորդակցման հմտությունների զարգացումն է /միգուցե այն պատճառով, որ դա մեթոդաբանական մոտեցման ամենաբնորոշ նպատակն է/: Իրականում որոշակի ծրագրեր ձգտում են որակական կամ քանակական զարգացման հասնել օտար լեզվով ընթացող լեզվական գործունեություններում, մի շարք ծրագրեր որոշակի բնագավառների գործողություն են շեշտում, մի շարք ծրագրեր էլ հատուկ շեշտում են ընդհանուր ունակությունների զարգացումը, իսկ մյուսները հիմնականում զբաղված են ռազմավարությունը կատարելագործելով: Այն հանդուժունքը, որ «ամեն ինչ փոխկապակցված է», չի նշանակում, որ նպատակները չեն զանազանվում:

Այժմ վերը նշվածը կպատկերվի դիտավորյալ պարզեցված հետևյալ գծագրով.

Գծագիր 1: Ընդհանուր դասեր




### 3.2.ԵՆԹԱԿԱՐԳԵՐ

#### 3.2.1.Անձի ընդհանուր ունակությունները

Լեզուն սովորողի կամ կիրառողի ընդհանուր ունակությունները բաղկացած են մասնավորապես գիտելիքից, հմտություններից և առկա ունակությունից (savoir-etre տե՛ս գլուխ IV, բաժին 4.7.1.3), որոնց տիրապետում է տվյալ անձնավորությունը, ինչպես նաև սովորելու կարողությունից.

Գծագիր 1.1 Անձի ընդհանուր ունակություններ



*Առկա ունակությունները (savoir-etre)* կարող են դիտվել որպես անձի առանձնահատկություններ, անհատական գծեր և դիրքեր, որոնք վերաբերում են, օրինակ՝ ինքնաարտահայտմանը և ուրիշների մասին կարծիք ստեղծելուն, իր ներքին և արտաքին աշխարհի վրա կենտրոնացմանը՝ սոցիալական փոխազդեցության սահմաններում: Ունակությունների այս տեսակը պարզապես անձի



անփոփոխ առանձնահատկությունն չէ, այլ ներառում է փոփոխության ենթակա գործոններ:

Ի դեպ, այս անհատական բնավորության գծերը, դիրքերը և խառնվածքները, հաճախ են հաշվի առնվում լեզվի ուսման և ուսուցման գործընթացում:

Ինքնավստահությունը /իրական կամ թվացյալ/ ընդհանրապես դրական գործոն է համարվում, և կարող է իբրև լրացուցիչ գործոն նպաստել առաջադիմությանը որևէ լեզու սովորելու ժամանակ:

Ըստ ուսուցման բազմաթիվ մոտեցումների՝ զուսպ և հանգիստ վերաբերմունքը կհեշտացնի նոր ինֆորմացիայի ընկալումը և յուրացումը: Մյուս կողմից համարվում է, որ լեզուն սովորելը ավելի դժվար է նրանց համար, ովքեր խուսափում են անծանոթներից կամ այդքան էլ հակված չեն օտարազգիների հետ որևէ հարաբերություն հաստատելու: Ամեն դեպքում (այժմ ժամանակը չէ առանձին դեպքերի պնդման, քննարկման համար) անձնավորության իրական կամ ենթադրելի անհատական հատկանիշները անկասկած ավելի հաճախ կապված են լինում լեզվի ուսման, քան որևէ այլ գիտելիքի ձեռքբերման բնագավառի հետ: Չետևաբար, չնայած դժվար է տալ նրանց սահմանումը, բայց նրանք պետք է ընդգրկվեն ծանոթության ընդհանուր կառուցվածքի մեջ, նամանավանդ, եթե համարվում են անձի ընդհանուր ունակությունների մաս և, հետևաբար նրա կարողությունների ասպեկտ: Նշենք նաև, որ դրանք կարող են ուսման ընթացքում լեզվի միջոցով ձեռք բերվել կամ ձևափոխվել: Դրանց ներառումը նախագծի ընդհանուր կառուցվածքի մեջ նույնիսկ ավելի անհրաժեշտ է, ինչպես շատ անգամ ասվել է, այդ հմտությունները կապված են մշակույթի հետ և հետևաբար հանդիսանում են միջմշակութային իմացության և հարաբերությունների ճշգրիտ բնագավառներ: Այն ձևը, որի միջոցով մի առանձին մշակույթի պատկանող մարդ բարյացակամություն կամ հետաքրքրություն է արտահայտում, կարող է այլ մշակույթի ներկայացուցչի կողմից ընկալվել ագրեսիվ կամ վիրավորական:

*Դեկլարատիվ գիտելիքը (savoir)* հասկացվում է որպես հասարակական փորձից բխող (փորձային) և ավելի կանոնավոր, հիմնական ուսումնից ձեռք բերված (ակադեմիական) գիտելիք: Սա չի նշանակում կանխորոշել այս գիտության ճշգրտությունը կամ փորձառությամբ նվաճված մակարդակը. կարևորն այն է, որ ցանկացած մարդու համար հնարավոր է, որ այս գիտելիքը տարիներ շարունակ բազմիցս կվերակարգվի:

Ինչ վերաբերում է լեզվի կիրառմանը և ուսուցմանը, ապա այստեղ գործող գիտելիքը բացարձակապես, ուղղակիորեն կապված չէ լեզվի և մշակույթի հետ: Գիտական կամ տեխնիկական կրթական բնագավառի ակադեմիական գիտելիքները և մասնագիտական բնագավառի ակադեմիական կամ էմպիրիկ գիտելիքները անկասկած գլխավոր դեր են կատարում այդ բնագավառներին վերաբերող օտար լեզվով գրված տեքստերի ընկալման և հասկացման գործում: Բայց էմպիրիկ գիտելիքը, որը կապված է անհատի կամ հասարակական ոլորտների առօրյա կյանքի հետ /օրվա կազմակերպում, ուտելու ժամեր, տրանսպորտային միջոցներ, հաղորդակցում և տեղեկատվություն/ նույնքան կարևոր է՝ օտար լեզվով լեզվական գործողությունները ղեկավարելու համար: Ուսուցման և ուսման մեթոդները ենթադրում են աշխարհի այս իմացությունը, գիտելիքի այս բազմաթիվ բնագավառները, որոնք տարբեր անձերի մոտ տարբեր են, որը կարող է հատուկ լինել որևէ մշակույթի, բայց ավելի ընդհանուր հաստատուն մեծությունների հետ կապված:

Եթե ընդունենք, որ ցանկացած նոր գիտելիք ուղղակիորեն չի գումարվում արդեն եղած գիտելիքներին, այլ պայմանավորված է նախնական գիտելիքների բնույթով, նրանց հարստությամբ և կառուցվածքով, ժառայում է նաև վերջինս

մասամբ փոփոխելու և վերահամակարգելու համար, ապա պարզ է, որ արդեն ձեռք բերված գիտելիքն ուղղակիորեն կապված է սկզբնական ուսման հետ:

Դեռ ավելին՝ հատուկ իրադրություններում /խորացված այնպիսի մի դպրոց կամ համալսարան հաճախելը, ուր ուսուցանվող լեզուն սովորողի մայրենի լեզուն չէ/ լեզվի ուսումը, կարևոր լինելով հանդերձ, կարող է երկրորդական լինել լեզվաբանությունից բացի այլ բնագավառներում նույնպես գիտելիք ձեռք բերելու նպատակով: Այստեղ կրկին, երբ միաժամանակ ու կապակցված տեղի է ունենում լեզվաբանական այլ գիտելիքի հարստացում, հարկավոր է ուշադրություն դարձնել գիտելիքի և հաղորդակցական ունակության փոխհարաբերությանը:

Կարողություններն ու հմտությունները (savoir-faire)՝ լինի դա ավտոմեքենա վարել, ջութակ նվագել, թե ժողով դեկավարել, ավելի շատ կախված են ընթացիկ հմտություններից, քան դեկլարատիվ գիտելիքներից: Այդ հմտությունները կարող են «մոռացվող» գիտելիքի պահանջ լինել կամ ուղեկցվել էկզիստենցիալ կարողությամբ /օրինակ՝ «հանգիստ վերաբերմունք կամ լարվածություն» առաջադրանքը կատարելիս/:

Վերը նշված օրինակը մեքենա վարելու մասին, որը կրկնության և փորձի միջոցով դառնում է գրեթե ավտոմատ գործընթացների մի շարք /անջատում, շարժիչի դիրքի փոխելը/, նախապես պահանջում է գիտակցական և արտասանական գործողությունների ճշգրիտ կատարում /Դանդաղ թո՛ղ սեղմիչ ոտնակը, անցի՛ր երրորդ արագության և այլն/ և հատուկ փաստերի իմացություն /մեքենան ունի երեք ոտնակ/, որոնց մասին անպայման չէ գիտակցաբար մտածել, երբ մարդ արդեն գիտի մեքենա վարել: Մեքենա վարել սովորելիս մարդուն սովորաբար անհրաժեշտ է կենտրոնացման բարձր մակարդակ և ուժեղացված ինքնագիտակցում, քանի որ մարդու սեփական ինքնապատկերումը առանձնապես խոցելի է /պարտվելու վտանգը, ոչ հնուտ լինելու տպավորություն թողնելը/: Երբ վարորդն ունենա այդ հմտությունները, նա կլինի շատ ավելի հանգիստ և ինքնավստահ, այլապես դա կանհամապատասխան ուղևորներին և մյուս վարորդներին: Պարզ է, որ դժվար չի լինի զուգահեռներ անցկացնել լեզվի ուսման տարբեր ասպեկտների միջև:

Վերը ներկայացված գծագրում *սովորելու ընդունակությունը* պատկերված է որպես առկա ունակություն, դեկլարատիվ գիտելիքների և կարողությունների մոբիլիզացում, որոնք ենթադրում են, որ սովորելու ունակությունը կապված է այլ ունակությունների հետ: Այս առումով սովորելու կարողությունը հարկավոր է բառափոխել որպես «իմանալ ինչպես» կամ հակված լինել «այլը» հայտնաբերելու, այսինքն՝ մյուսը այլ լեզու է, այլ մշակույթ, այլ ազգ և գիտելիքների նոր բնագավառ:

Չնայած սովորելու կարողությունը հատկապես առնչվում է լեզվի ուսման հետ, այն նաև վերաբերում է ընդհանուր առմամբ այն ունակություններին, որոնք կապված են՝

- առկա ունակությունների հետ. օրինակ՝ միմյանց հետ հաղորդակցվելու ժամանակ առաջին քայլն անելու կամ նույնիսկ ռիսկի դիմելու պատրաստակամություն, որպեսզի ձեռք բերեն խոսելու հնարավորություն, խոսակիցներից կարողանան աջակցություն խնդրել, օրինակ՝ խնդրել նրանց ասածը ավելի պարզ բառերով կրկնել և այլն, նաև լսողական հմտություններ՝ ասվածի հանդեպ ուշադրություն, միմյանց հետ շփվելիս մշակութային թյուրիմացության վտանգի բարձր գիտակցություն.

- դեկլարատիվ գիտելիքների հետ, օրինակ, իմանալ, թե որևէ կոնկրետ լեզվի հոլովման համակարգին ինչ ձևաբանական և շարահյուսական հարաբերություններ են համապատասխանում կամ գիտակցել, որ կարող են լինել արգելք կամ հատուկ ծեսեր՝ կապված դիետայի կամ որոշ մշակույթների սեռային գործու-

նեության հետ, կամ որ նրանք կարող են լրացուցիչ կրոնական իմաստներ ունենալ.

- Կարողությունների և հմտությունների հետ, օրինակ բառարանից օգտվելու ունակություն կամ փաստաթղթերի վերաբերյալ հեշտությամբ կողմնորոշվելու կարողություն, իմանալ, թե ինչպես կարելի է լսատեսողական կամ համակարգչային միջոցները հմտորեն օգտագործել որպես ուսման աղբյուր:

Տվյալ սովորողներից կախված՝ սովորելու ընդունակությունը կարող է ընդգրկել առկա ունակությունների տարբեր աստիճաններ և կապակցություններ, դա նկատվում է և՛ դեկլարատիվ գիտելիքների, և՛ հմտությունների դեպքում: Այսպիսի փոփոխությունները պետք է դիտվեն «ուսման ոճերի» և «ուսման պրոֆիլների» կողքին, մինչդեռ վերջիններս ընդմիշտ անփոփոխ չեն: Միևնույն անձնավորության համար հմտությունների, կարողությունների և անձանոթների հետ շփվելու ունակության կիրառման պրոցեսում կարող են կատարվել.


- հանգամանքների հետ կապված փոփոխություններ՝ կախված այն բանից, երբ անձը շփվում է նոր մարդկանց, գիտելիքների բացարձակապես անձանոթ բնագավառի, անձանոթ մշակույթի, օտար լեզվի հետ,
- կոնտեքստի հետ կապված փոփոխություններ՝ միևնույն դեպքի հետ կապված՝ (օրինակ՝ ծնող/երեխա հարաբերությունները տվյալ համայնքում), հայտնագործություն և իմաստ փնտրելու գործընթացները անկասկած տարբեր կլինեն ազգախոսի, զբոսաշրջիկի, միսիոների, լրագրողի, կրթողի կամ բժշկի համար, որոնցից յուրաքանչյուրը գործում է իր գիտաճյուղի կամ մտահորիզոնի համաձայն,
- գերիշխող հանգամանքների և անցած փորձի հետ կապված փոփոխություններ՝ միանգամայն հնարավոր է, որ հինգերորդ օտար լեզուն սովորելիս կիրառվող ունակությունները տարբերվեն նրանցից, որոնք կիրառվում են առաջին օտար լեզուն սովորելու ժամանակ:

Ուսումնական նպատակներով անհատի ընտրած ստրատեգիաները՝ ուղղված տվյալ առաջադրանքի կատարմանը, պայմանավորվում են սովորողների բազմության կարողություններով: Սակայն անհատն իր ուսման ընդունակությունը զարգացնում է նաև ուսման փորձերի բազմազանության շնորհիվ, եթե նրանք բաժանված կամ խիստ կրկնվող չեն:

### 3.2.2. Հաղորդակցման լեզվական ունակություններ

Կարելի է կարծել, որ անհատի բոլոր ընդհանուր ունակություններից այստեղ միտումնավոր առանձնացված հաղորդակցման լեզվական ունակություններն ընդգրկում են մի քանի բաղադրիչներ՝ *լեզվաբանական, հանրալեզվաբանական և կիրառական*: Այս բաղադրիչներից յուրաքանչյուրը նույնպես ընկնում է անհատի ընդհանուր ունակությունների կատեգորիաների տակ և, անկասկած, բաղկացած է մասնավորապես գիտելիքներից, հմտություններից և կարողություններից:

Գծագիր 1.2. Հաղորդակցման ուսումնական լեզվական ունակություններ



Որպես հաղորդակցման լեզվական ունակություններ ձևավորող ներկայացված այս բաղադրիչը միայն մեկ ընտրություն է մյուս ընտրությունների թվում, որոնք օգտագործվում են մասնագիտական գրականության մեջ այս գաղափարը սահմանելու համար: Այսպիսի մի դասակարգումը հետագա պարզաբանում է պահանջում:

Վերոհիշյալ դասակարգման մեջ հասարակական լեզվամշակութային կիրառման պայմաններին վերաբերող *հանրալեզվաբանական բաղադրիչը* գծագրում ներկայացված է սխեմայի ձախ կողմում՝ որոշ չափով կապ հաստատելով հաղորդակցական այլ ունակությունների միջև: Այս դասակարգումը կատարված է, որպեսզի ցույց տրվի մշակութային չափանիշի կարևորությունը հաղորդակցական հմտությունների զարգացման գործում: Քանի որ հանրալեզվաբանական բաղադրիչը հասարակական սովորույթների հանդեպ շատ զգայուն է /քաղաքավարության օրենքներ, սերունդների հարաբերությունները ղեկավարող նորմեր, սեռեր, դասեր և հասարակական խմբեր, համայնքի գործունեության որոշ հիմնական ծեսերի լեզվաբանական ծածկագրում/, այն ուժեղ ազդեցություն է գործում տարբեր մշակույթների ներկայացուցիչների լեզվական հաղորդակցման վրա, նույնիսկ, եթե հաղորդակցվողները դրա ազդեցությունը չեն գիտակցում:

*Լեզվաբանական բաղադրիչը* վերաբերում է լեզվի համակարգի բառապաշարային, հնչյունաբանական, շարահյուսական գիտելիքներին և ունակություններին, ինչպես նաև լեզվական այլ չափանիշներին՝ կազմված անկախ համակարգի փոփոխությունների հանրալեզվաբանական արժեքից և նրա կիրառական ֆունկցիաներից: Ելնելով անհատի հաղորդակցման լեզվական ունակություններից՝ այս բաղադրիչը վերաբերում է ոչ միայն գիտելիքի քանակին և որակին /օր.՝ հնչյունական առանձնահատկություններին կամ բառապաշարի չափին ու ճշգրտությանը/, այլ նաև ճանաչողության կազմակերպմանը և գիտելիքի հարստացման ուղուն /օր.՝ այն բազմաթիվ ասոցիատիվ ցանցերին, որտեղ խոսողը կիրառում է բառապաշարի միավորը/ և գիտելիքի մատչելիությանը /ակտիվացում, ավարտի ազդանիշ և օգտակարություն/: Գիտելիքը կարող է լինել հեշտությամբ արտահայտելի կամ ոչ /օր.՝ կրկին հնչույթային համակարգի տիրապետման վերաբերյալ/ նրա կազմակերպումը և մատչելիությունը յուրաքանչյուր անհատի մոտ տարբեր է, անգամ միևնույն անձի մոտ կարող է տարբեր լինել /օր.՝ բազմալեզու անձնավորության համար կախված է նրան հատուկ ունակությունների բազմազանությունից/: Կարելի է ասել, որ բառապաշարի ճանաչողական կազմակերպումը և արտահայտությունների ձեռքբերումը և այլն կախված են այն համայնքի կամ համայնքների մշակութային առանձնահատկություններից, որտեղ ապրել և ուսում է ստացել այդ անձնավորությունը:

*Գործաբանական /պրազմատիկ/ բաղադրիչն* ընդգրկում է գիտելիքները (savoirs), առկա ունակությունները (savoir-etre), հմտությունները և նույն-հաուն (savoir-faire) ու կապված է լեզվական համակարգի, նրա հանրալեզվաբանական տարբերակների, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում ժեստերի, միմիկայի կիրառման հետ: Նրանց տեսողական և գրաֆիկական օգտագործման միջոցով հնարավոր է դառնում կատարել լեզվի և հաղորդակցման մեջ լեզվական աղբյուրների գործնական կիրառում /լեզվական գործառնությունների, խոսքային ակտերի արտաբերում, միջազգային փոխանակումների, սցենարների և նոտագրերի օգտագործում, խոսակցության համախմբակցության և կապակցված խոսքի վարպետություն, տեքստերի, տեսակների և ձևերի ճանաչում, ծաղրանք, պարոդիա/: Այս բաղադրիչի վերաբերյալ հազիվ թե անհրաժեշտ է շեշտել մշակութային փոխազդեցությունների գլխավոր նշանակությունը, որոնց շրջանակում ստեղծվում են այսպիսի կարողություններ:


Այս բաղադրիչներից յուրաքանչյուրն ավելի մանրամասն քննության կենթարկվի VI-րդ գլխում: Ինչպես բոլոր դասակարգումների դեպքում, նրանց թիվը և գործունեության շրջանակը ներկա առաջարկում, որոնք, ի դեպ, մասամբ համընկնում են գոյություն ունեցող այլ մոդելների հետ, ենթակա են քննարկման: Այստեղ պարզապես նշվում է, որ`

- այստեղ կիրառված բոլոր կատեգորիաները նախատեսված են` հասարակական գործչի ունեցած կարողությունների բնագավառները և տեսակները բնութագրելու համար, այսինքն ներքին նկարագրություններ, մեխանիզմներ և ընդունակություններ, որոնց իմացական գոյությունը կարող է համարվել ուշագրավ վարքի և ներկայացման բացատրման միջոց. բայց միևնույն ժամանակ ուսումնական ցանկացած գործընթաց կօգնի զարգացնելու կամ ձևափոխելու այդ նույն ներքին նկարագրությունները, մեխանիզմները և ընդունակությունները,
- հնարավոր կլինի հաղորդակցական ունակությունների մեջ ընդգրկել մի ռազմավարական բաղադրիչ, որն ակտիվացնում, համակարգում և կշռադատում է մնացած բաղադրիչները /հատկապես փոխհատուցման նպատակներով/. այստեղ գերադասվող ընտրությունը այս ռազմավարության չափանիշի ավելի ընդարձակ մեկնաբանումն է և նրան գլխավոր դեր վերագրելն է, այն պատճառով, որ դա մի կողմից կապակցում է անձնավորությանը հատուկ բոլոր կարողությունները /և ոչ միայն հաղորդակցական կարողությունը/ և մյուս կողմից` այն առաջադրանքները, որոնց հետ կապված` կիրառվում են այս ստրատեգիաները /տե՛ս գծագիր առաջին և ներքևում 3.2.5./:

### 3.2.3.Լեզվական գործունեություններ

Լեզուն սովորողի/կիրառողի հաղորդակցական լեզվական ունակությունները ակտիվացնում է լեզվական տարբեր գործողությունների միջոցով, որոնք կապված են ընկալման, արտաբերման, միջնորդության հետ /մասնավորապես թարգմանելու կամ բացատրելու հետ/, ընդ որում այս տեսակներից յուրաքանչյուրը հնարավոր է բանավոր կամ գրավոր խոսքում, կամ՝ երկուսում էլ:

Գծագիր 1.3. Լեզվական գործունեություններ



Այստեղ կա մեկնաբանության անհրաժեշտություն.

- *փոխազդեցության /interaction/* գործողության գլխավոր դերն ու գրաֆիկական նշանակությունը (բոլոր դեպքերում բանավոր կամ գրավոր փոխանակման այս փոխազդեցությանը մասնակցում են երկու անձնավորություն, իսկ փոխանակման ժամանակ արտաբերումը և ընկալումը հաջորդում են միմյանց) ցուցաբերում է սովորաբար նրան վերագրվող կարևորությունը լեզվի կիրառման և ուսման մեջ:
- Այնուամենայնիվ, փոխազդեցությունը, *ընկալումը և արտաբերումը* /բանավոր և/կամ գրավոր/ առաջնային են, ինչպես և նրանց կատարած դերը` հիմնական:

Առաջինը /ընկալական գործունեությունը/ այդպիսին է իր կարևորության պատճառով՝ կարդալիս, մամուլին հետևելիս, ուսման շատ ձևերում /դասընթացի բովանդակությունը հասկանալ, դասագրքերից և փաստաթղթերից տեղեկանալը/ և վերջինը /արտաբերական գործունեություն/ շատ գիտական և մասնագիտական բնագավառներում իր գործունեության պատճառով /բանավոր զրույցներ, գրավոր դասեր, զեկուցումներ/ և այն հասարակական յուրահատուկ արժեքի պատճառով, որը նրան վերագրվում է /գրավոր կամ բանավոր խոսքի սահունության վերաբերյալ կատարված դատողություններ/:

- Ե՛վ ընկալական, և՛ արտաբերական եղանակներում գրավոր կամ բանավոր գործունեությունները *միջնորդության* հնարավորություն են տալիս թարգմանության կամ մեկնաբանման, կոնսպեկտի կամ արձանագրության միջոցով երրորդ կողմի համար աղբյուրային տեքստ կազմել, քանի որ վերջնական տեսքով, այն ուղղակիորեն մատչելի չէ երրորդ կողմի համար: Տեքստեր վերամշակող, միջնորդող լեզվական գործունեությունները մեր հասարակության լեզվաբանական ոլորտում կարևոր տեղ են գրավում:

### 3.2.4. Բնագավառներ

Լեզվական այս գործունեությունները կոնտեքստացվում են ըստ *բնագավառների*, որոնք կարող են շատ բազմազան լինել, սակայն լեզվի ուսման հետ կապված նրանց կարելի է դասել չորս բնագավառների՝ *հասարակական, անձնական, կրթական և մասնագիտական*:


*Հասարակական բնագավառը* վերաբերում է այն ամենին, ինչ կապված է կանոնավոր հասարակական փոխազդեցության հետ /արհեստներ կամ ղեկավար մարմիններ, հասարակական ծառայություններ, հասարակական բնույթի մշակութային և ազատ ժամանցի հետ կապված գործունեություններ, մամուլի հետ կապեր և այլն/:

*Անձնական բնագավառն* ընդգրկում է ընտանեկան հարաբերությունները և անձնական հասարակական գործունեությունները /հաճույքի համար կարդալը, անձնական օրագիր պահելը, որևէ նպատակի ծառայելը կամ սիրած գործով զբաղվելը/:

*Մասնագիտական բնագավառը* ընդգրկում է այն ամենը, ինչ կապված է գործակալի՝ իր մասնագիտությանն առնչվող գործունեությունների հետ:

*Կրթական բնագավառը* զբաղվում է ուսումնական/ուսուցողական կոնտեքստով /որը պայմանավորված է հաստատության բնույթով/, որտեղ նպատակը հատուկ գիտելիքներ կամ կարողություններ ձեռք բերելն է:

Գծագիր 1.4. Բնագավառներ




Այստեղ ընդունված դասակարգումը պարզ ենթադրում է,

- որ հասարակական բնագավառը կապված է այն ամենի հետ, ինչ շփման մեջ է հասարակական և ադմինիստրատիվ փոխազդեցությունների, գործարքների ու մանուլի հետ. բաց է այլ բնագավառների համար և հաճախ սահմանում է անհրաժեշտ ելակետային մի տեսակ. և՛ կրթական, և՛ մասնագիտական բնագավառներում բազմաթիվ փոխազդեցություններ, ավելի ստույգ, մեկ խմբի պարզ հասարակական գործունեություն են, քան մասնագիտական կամ ուսումնական առաջադրանքների հետ կապի արտացոլում: Անձնական բնագավառը նույնպես ոչ մի դեպքում չպետք է համարվի մի առանձին ոլորտ /մանուլի թափանցում ընտանիքի և անձնական կյանքի մեջ, զանազան «հասարակական» փաստաթղթերի տարածում «անձնական» փոստարկղերով, գովազդ, ամենօրյա անձնական կյանքում օգտագործվող ապրանքի փաթեթավորմանը վերաբերող հասարակական տեքստեր և այլն/.
- որ անձնական բնագավառը՝ առաջարկված գծագրի «ելակետը», անհատականացնում է գործակալի գործունեությունները մյուս բնագավառներում և այն ոճը, որով նա դրսևորում է իրեն որպես անհատականություն, չդադարելով հասարակական գործակալ լինելուց. բարեբախտաբար, տեխնիկական զեկուցումը, դասակարգային ներկայացումը, առևտուրը անհատականությանը կարող են հնարավորություն տալ իրեն ներկայացնել մասնագիտական, կրթական կամ հասարակական բնագավառներում:

### 3.2.5. Առաջադրանքներ, ստրատեգիաներ և տեքստեր

Հաղորդակցությունը և ուսումը պահանջում են այնպիսի *առաջադրանքների* կատարում, որոնք միայն լեզվական առաջադրանքներ չեն՝ թեև ընդգրկում են լեզվական գործունեություններ և անձից պահանջում են հաղորդակցական ունակություններ: Քանի որ այս առաջադրանքները միօրինակ չեն, և ոչ էլ՝ ինքնակա, հաղորդակցման և ուսման ընթացքում նրանք պահանջում են *ռազմավարության* կիրառում: Քանի որ այս առաջադրանքների կատարումն ընդգրկում է լեզվական գործունեություններ, անհրաժեշտ է դառնում գրավոր կամ բանավոր *տեքստերի* մշակումը /ընկալման, արտաբերման փոխազդեցության կամ միջնորդման օգնությամբ/:

#### Գծագիր 1.5. Ստրատեգիաներ, տեքստեր և առաջադրանքներ



Վերը ներկայացված ընդհանուր մոտեցումը բացահայտ գործունեության կողմնորոշում ունի: Այն կենտրոնացված է մի կողմից՝ գործակալի ռազմավարության կիրառման /այդ ռազմավարությունները կապված են նրա ընդունակությունների և իրադարձության ընկալման կամ պատկերացման հետ/, մյուս կողմից՝ որոշակի պայմաններում, առանձնահատուկ խոսքաշարում պահանջվող

առաջադրանքի կամ առաջադրանքների փոխհարաբերության վրա: Այսպիսով՝ մի անձ, որը զգեստապահարան է տեղափոխում /առաջադրանք/, կարող է շարժել այն հրելով, կարող է քանդել, որպեսզի այն ավելի հեշտ լինի տանել, ապա կրկին հավաքել այն, ուրիշ աշխատողների կանչել, կամ ուղղակի կթողնի այդ զբաղմունքը՝ ինքն իրեն համոզելով, որ դա կարելի է մինչև վաղը հետաձգել և այլ ռազմավարություններ: Ընդունված ռազմավարություններից կախված՝ առաջադրանքի կատարումը /կամ նրանից խուսափումը, նրա հետաձգումը կամ վերասահմանումը/ կարող է ներառել կամ չներառել լեզվական գործունեություն կամ տեքստային մշակում /քանդելու հրահանգավորումը կարդալը, հեռախոսով զանգահարելը և այլն/: Դպրոցականը, որը պետք է որևէ օտար լեզվից մի տեքստ թարգմանի /առաջադրանք/, նույնպես կարող է փնտրել, եթե կա արդեն այդ տեքստի որևէ թարգմանություն, խնդրել մեկ այլ աշակերտի ցույց տալ, թե ինքն ինչ է արել, օգտվել բառարանից, իրեն հայտնի մի քանի բառերի կամ կառույցների հիման վրա փորձել որևէ իմաստ կազմել, որևէ հարմար պատրվակ հնարել՝ այդ վարժությունը չհանձնելու համար և այլն /այս բոլորը հնարավոր ռազմավարություններ են/: Այստեղ քննված բոլոր դեպքերում անհրաժեշտ են լեզվական գործունեություններ և տեքստային մշակում /թարգմանություն կամ միջնորդում, դասընկերոջ հետ բանավոր հաղորդակցում, դասատուին ուղղված նամակ կամ բանավոր արդարացումներ և այլն/:

Ռազմավարությունների, առաջադրանքի և նյութի հարաբերությունը կախված է առաջադրանքի բնույթից: Սա նախապես կարող է վերաբերել լեզվին, այսինքն՝ կարող է պահանջել շատ լեզվական գործունեություններ, և այստեղ կիրառվող ռազմավարությունը գլխավորապես կապված է այդ լեզվական գործունեությունների հետ /օր.՝ տեքստի ընթերցանություն և մեկնաբանություն, «բաց թողնված տեղերի լրացում» տիպի վարժություն, դասախոսություն կարդալը, ներկայացման ընթացքում գրառումներ կատարելը/: Այն կարող է ընդգրկել նաև մեկ լեզվական բաղադրիչ այն դեպքում, եթե լեզվական գործունեությունները պահանջի միայն մի մասն են կազմում և կիրառվող ռազմավարությունը կապված է նաև /կամ գերազանցապես/ այլ գործունեությունների հետ /օր.՝ բաղադրատոմսին հետևելով որևէ բան եփելը/:

Չնարավոր է առաջադրանքը կատարել՝ լեզվական որևէ գործունեության օգնությամբ դիմելով կամ չդիմելով, այսինքն՝ այստեղ կիրառվող ռազմավարությունը գործունեության այլ տեսակի հետ է կապված և ընդգրկված գործունեությունները բոլորովին էլ լեզվի հետ կապ չունեն /օր.՝ վրանի կանգնեցնելը կարող է լռությամբ կատարվել մի քանի մարդկանց կողմից, որոնք գիտեն, թե ինչ են անում: Չնարավոր է, որ նրանք տեխնիկային վերաբերող մի քանի բառ փոխանակեն, կամ նույն ժամանակ վարեն իրենց առաջադրանքի հետ բոլորովին կապ չունեցող մի զրույց, կամ կատարեն այդ աշխատանքը, երբ նրանցից մեկը որևէ մեղեդի է կիսաձայն երգում/:

Այս տեսակի վերլուծության մեջ հաղորդակցական և ուսումնական ռազմավարությունը միայն ուրիշ ստրատեգիաների թվում են ներկայացված, ինչպես և ուրիշ առաջադրանքների թվում են ներկայացված հաղորդակցական և ուսումնական առաջադրանքները: Նմանապես «վավերական» կամ հատուկ ուսուցման նպատակներով գրված տեքստերը, դասագրքերի կամ սովորողների արտաբերած տեքստերը միայն այլ տեքստերի թվում են հանդես գալիս: Չետագա գլուխներում «ռազմավարություն», «առաջադրանք», և «տեքստ» հասկացությունները ավելի մանրամասնորեն կքննարկվեն, մասնավորապես կապված լեզվի կիրառման և ուսման տարբեր ձևերի հետ /4-րդ գլուխ, պարագրաֆներ 4.2 /առաջադրանքներ/, 4.6 /տեքստեր/, 4.8 /ստրատեգիաներ/, 5-րդ գլուխ, պա-



րագրաֆներ 5.1. /առաջադրանքներ/, 5.2.3. /ստրատեգիաներ/, 5.4. /տեքստեր/, 6-րդ գլուխ, պարագրաֆներ 6.7.2.1. (տեքստեր), 6.7.2.2. (առաջադրանքներ)):

#### **4.6. Տեքստեր,**

##### **4.6.1. Միջոցներ,**

##### **4.6.2. Ոճեր և տեքստի տեսակներ,**

##### **4.6.2.1. Բանավոր տեքստեր,**

##### **4.6.2.2. Գրավոր տեքստեր:**

«Տեքստը» ներառում է լեզվի յուրաքանչյուր մաս թե՛ բանավոր, և թե՛ գրավոր արտահայտության մեջ, որը կիրառողները/սովորողները ընկալում, արտահայտում կամ փոխանակում են: Այսպիսով՝ լեզվի միջոցով հաղորդակցություն չի կարող տեղի ունենալ առանց տեքստի. լեզվական բոլոր գործողություններն ու գործընթացները վերլուծվել և դասակարգվել են՝ ելնելով տեքստի հանդեպ կիրառողի/սովորողի և որևէ զրուցակցի հարաբերությունից: Այդ տեքստերը կարող են հանդես գալ թե՛ որպես ավարտուն արտահայտություն, թե՛ որպես զարգացման գործընթացում խնդիր կամ արդյունք: Տեքստերն ունեն շատ տարբեր ֆունկցիաներ: Տարբեր միջոցներ գործածվում են տարբեր նպատակներով: Միջոցների, նպատակների և գործունեությունների բազմազանությունը հանգեցնում է համապատասխան տարբերությունների ոչ միայն հաղորդագրությունների կոնտեքստում, այլև նրանց ձևավորման ու ներկայացման դեպքում: Յետևաբար, տեքստը կարող է դասակարգվել ըստ տեսակների, որոնք պատկանում են տարբեր ոճերի: Տե՛ս նաև 4.7.2.3.2. /մակրոֆունկցիաներ/:

##### **4.6.1. Միջոցներն են՝**

- ձայն,
- հեռախոս, վիդեոֆոն, հեռուստակամուրջ,
- հասցեագրքեր,
- ռադիոհեռարձակում,
- հեռուստացույց,
- կինոնկարներ /կինոթատրոնում/,
- համակարգիչ /e-mail, CD-ROM և այլն/,
- տեսաժապավեն, տեսաերիզ, տեսասկավառակ,
- լսաժապավեն /audiotape/, լսաերիզ /cassette/, լսասկավառակ /audiodisk/,
- տպագրություն,
- ձեռագիր և այլն:
- 

##### **4.6.2. Տեքստերի տեսակներն են՝**

##### **4.6.2.1. Բանավոր՝**

- հրապարակային հայտարարություններ և ցուցանակներ,
- հրապարակային ճառ, դասախոսություն, ներկայացում, քարոզ,
- արարողություններ /հանդիսություններ/, կրոնական, պաշտոնական ծեսեր,
- երեկույթներ /դրամա, շոու, ընթերցումներ, երգեցողություն/,
- սպորտային մեկնաբանություններ /ֆուտբոլ, բոքս, ձիարշավ և այլն/,
- նորությունների հեռարձակում,
- հրապարակային քննարկումներ,
- երկխոսություններ մարդկանց միջև,
- հեռախոսային խոսակցություններ,
- աշխատանքային հարցազրույցներ և այլն:

#### 4.6.2.2. Գրավոր տեքստեր.

- գրքեր, կազմված և բնօրինակ տեքստեր, այդ թվում՝ գեղարվեստական ամսագրերում,
- ամսագրեր,
- թերթեր,
- ուղեցույցներ և ձեռնարկներ,
- դասագրքեր,
- կոմիկ սյուժեներ,
- գրքույկներ,
- հրահանգ պարունակող թերթիկներ /leaflet/,
- գովազդային նյութեր,
- մամուլ, հայտարարություններ,
- անկետաներ և հարցաթերթիկներ,
- բառարաններ,
- գործնական նամակներ, ֆաքսեր,
- անձնական նամակներ,
- էսեններ և վարժություններ,
- հուշագրեր, զեկուցագրեր և հանձնարարականներ,
- նշումներ և ծանոթագրություններ,
- տվյալների բանկ /նորություններ, գրականություն, հիմնական տեղեկատվություն և այլն/:

#### 4.7. Կիրառողների (Users) / սովորողների իրազեկությունը

Հաղորդակցական իրադրությունների հետ կապված խնդիրներ իրականացնելու համար կիրառողներն ու սովորողները ցուցաբերում են իրազեկությունների մի շարք, որոնք ձեռք են բերվել նրանց նախապես կուտակած փորձի հիման վրա: Հաղորդակցական իրադրություններին (այդ թվում՝ լեզուն սովորելու նպատակով հատուկ կազմակերպված առիթներին) մասնակցելը հանգեցնում է սովորողների իրազեկության զարգացմանը: Հաղորդակցական իրադրության մեջ մարդու իրազեկությունը այս կամ այն կերպ նպաստում է նրա հաղորդակցվելու կարողությանը: Ամեն դեպքում պետք է տարբերել իրազեկության այնպիսի տեսակներ, որոնք լեզվի հետ շատ սերտ կապ չունեն :

##### 4.7.1. Ընդհանուր /հիմնական/ իրազեկություն

- 4.7.1.1. Դեկլարատիվ գիտելիքներ/savoir/,
- 4.7.1.2. Կարողություն և նոու-հաու /savoir-faire/,
- 4.7.1.3. Առկա ընդունակություններ /savoir-etre/,
- 4.7.1.4. Սովորելու ունակություն /savoir-apprendre/:

##### 4.7.2. Հաղորդակցման լեզվական հմտություններ

- 4.7.2.1. Լեզվական հմտություններ,
- 4.7.2.2. Հանրալեզվաբանական հմտություններ,
- 4.7.2.3. Գործաբանական հմտություններ:

#### 4.7.1.1. Դեկլարատիվ գիտելիք /savoir/,

- 4.7.1.1.1. Գիտելիքներ աշխարհի մասին,
- 4.7.1.1.2. Հասարակական-մշակութային գիտելիքներ,
- 4.7.1.1.3. Միջմշակութային իրազեկություն:

##### 4.7.1.1.1. Գիտելիքներ աշխարհի մասին

Դա գիտելիք է՝

- բնակելի վայրերի, հաստատությունների և կազմակերպությունների, մարդկանց, առարկաների, նպատակների, իրադարձությունների, տարբեր ոլորտներում տեղի ունեցող գործընթացների մասին,
- դասակարգային էությունների /կոնկրետ/աբստրակտ, կենդանի/անկենդան և այլն/ և դրանց հատկությունների ու հարաբերությունների /ժամանակատարածական, զուգորդական, վերլուծական, տրամաբանական, դրդապատճառ /արդյունք և այլն/ մասին:

##### 4.7.1.1.2. Հասարակական-մշակութային գիտելիքներ

Հասարակության սոցիալական և մշակութային գիտելիքը, որտեղ օգտագործվում է լեզուն, աշխարհի մասին գիտելիքների բնագավառներից մեկն է: Սովորողների համար կարևոր է այն հանգամանքը, որ այս բնագավառը, բարեբախտաբար, սովորողների նախնական փորձարկումներին չի ենթարկվել, քանի որ կարող էր աղավաղվել ստերեոտիպներից:

Եվրոպական հասարակության և նրա մշակույթի յուրատիպությունը բնորոշող գծերը կարող են վերաբերել, օրինակ

###### 1. *ամենօրյա ապրելակերպին.*

- ուտելիք և խմիչք, ճաշի ժամեր, վարվելաձև սեղանի շուրջ,
- ժողովրդական տոներ,
- աշխատանքային ժամեր և պրակտիկա,
- ժամանց /հոբբի, սպորտ, ընթերցանության սովորույթ, լրատվական միջոցներ/:

###### 2. *Կենսապայմաններին.*

- կենսամակարդակ /տարածաշրջանային, դասակարգային և էթնիկական փոփոխություններով/,
- բարեկեցության կարգավորում:

###### 3. *Մարդկային փոխհարաբերություններին /վերաբերում է ուժեղ և միասնական հարաբերություններին/.*

- հասարակության դասակարգային կառուցվածք և դասակարգերի միջև եղած հարաբերություններ,
- տարբեր սեռերի միջև եղած հարաբերություններ /մտերմություն, ընկերություն/,
- ընտանեկան կառուցվածք և հարաբերություններ,
- սերունդների միջև հարաբերություններ,
- աշխատանքային հարաբերություններ,
- ծառայողների խավի և ոստիկանության միջև եղած հարաբերություններ և այլն,
- ռասսայական և համայնքային հարաբերություններ,
- քաղաքական և կրոնական խմբավորումների միջև եղած հարաբերություններ:

###### 4. *Գլխավոր արժեքներին, համոզմունքներին և դիրքորոշումներին, որոնք վերաբերում են այնպիսի գործոնների, ինչպիսիք են՝*

- սոցիալական խավեր,

- մասնագիտական խմբեր /գիտական/ակադեմիական, մենեջմենթ, հասարակական ծառայություններ, որակյալ աշխատուժ/,
  - բարեկեցություն /տարեկան եկամտի/ աշխատավարձի և ժառանգության տեսքով/,
  - տարածաշրջանային մշակույթ,
  - անվտանգություն,
  - հաստատություններ,
  - ավանդույթներ և սոցիալական փոփոխություններ,
  - պատմություն,
  - փոքրամասնություններ /էթնիկական, կրոնական/,
  - ազգային առանձնահատկություններ,
  - օտար երկրներ, պետություններ, ժողովուրդներ,
  - քաղաքականություն,
  - արվեստ /երաժշտություն, տեսողական արվեստի տեսակներ, գրականություն, դրամա, ժողովրդական երգ և երաժշտություն/,
  - կրոն,
  - հումոր:
5. *ժեստիկուլյացիային* /կոչվում է մարմնի լեզու, տես 4.5.5/: Սա գիտելիք է այն պայմանականությունների, սովորությունների մասին, որոնք ազդում են կիրառողների հասարակական-մշակութային իրազեկության և պահվածքի որոշ ձևերի վրա:
6. *Այցելություններին*. սովորույթներ, որոնք վերաբերում են օր.
- ճշտապահության,
  - նվերների,
  - հագուստի,
  - սննդի, խմիչքների, ճաշերի,
  - վարվելաձևի և խոսակցական սովորությունների ու արգելքների /տարուի/,
  - այցի տևողության,
  - հրաժեշտի հետ:
7. *Ծիսական սովորություններին* հետևյալ ոլորտներում`
- կրոնական արարողություններ և ծեսեր,
  - ժողովրդական արարողություններն ունկնդրողների և դիտողների վարքագիծ,
  - պարեր, դիսկոտեկներ և այլն:

#### 4.7.1.1.3. Միջմշակութային իրազեկություն

«Իրական աշխարհի» և «նպատակային ընդհանրության աշխարհի» միջև եղած հարաբերությունների իմացությունը և ըմբռնումը ստեղծում են միջմշակութային իրազեկություն: Կարևոր է նշել նաև, որ միջմշակութային իրազեկությունը ներառում է երկու աշխարհների ռեգիոնալ և սոցիալական տարբերությունների իրազեկությունը: Այն նաև համալրվում է բազմազան մշակույթների մասին տեղեկություններով, քանի որ դրանք կիրառվում են L1 և L2 (Learner) սովորողների կողմից: Այս լայն տեղեկությունները օգնում են երկուսին տեղ գտնելու կոնտեքստում:

#### 4.7.1.2. Կարողություն և նոու- հաու.

##### 4.7.1.2.1. գործնական հմտություններ և նոու-հաու,

##### 4.7.1.2.2. միջմշակութային հմտություններ և նոու-հաու:

#### 4.7.1.2.1. Գործնական հմտությունները և նուս-հաուն ներառում են հետևյալ ոլորտները.

- *Սոցիալական.* դա 4.7.1.1.2-ում թվարկվածին համապատասխան գործելու և հաստատված կարգն իրականացնելու ունակությունն է:
- *Կենցաղային.* առօրյա գործողությունների արդյունավետ իրականացման ունակությունը (ուտելը, հագնվելը, զբոսնելը, եփելը, լոգանք ընդունելը և այլն), կենցաղային սարքավորումների պահպանումն ու վերանորոգումը և այլն:
- *Մասնագիտական.* ծառայողական պարտականությունները կատարելու համար պահանջվող մասնագիտացված գործողությունների (մտավոր և ֆիզիկական) իրականացման ունակությունը:
- *Ժամանց.* ժամանցի համար պահանջվող գործողությունների արդյունավետ կատարման ունակությունը, օրինակ՝
  - \* արվեստ /նկարչություն, քանդակագործություն, երաժշտություն և այլն/,
  - \* արհեստ /ասեղնագործություն, ձևավորում, հյուսք, գորգագործություն և այլն/,
  - \* սպորտ /թիմային խաղեր, աթլետիկա, յոգա, լող, բարձրության հաղթահարում և այլն/,
  - \* հոբբի /լուսանկարչություն, այգեգործություն և այլն/:

#### 4.7.1.2.2. Միջնակությանին հմտություններն ու նուս-հաուն ներառում են.

- բնիկ և օտար մշակույթների միջև փոխհարաբերության ստեղծման ունակությունը,
- մշակությանին զգացողությունը և այլ մշակույթների հետ շփման ստրատեգիաների բազմազանությունը ճանաչելու և օգտագործելու ունակությունը,
- հարազատ և օտար մշակույթների միջև /մշակությանին/ միջնորդ կանոնները կատարելու և միջնակությանին անհասկանալի ու կոնֆլիկտային իրավիճակներն արդյունավետ լուծելու ընդունակությունը:

#### 4.7.1.3. Առկա ընդունակություններ /savoir-etre/

Լեզուն օգտագործողների/սովորողների հաղորդակցական գործունեության վրա ազդում են ոչ միայն նրանց գիտելիքները, հասկացողությունն ու հմտությունները, այլև անհատին բնորոշ առանձնահատկությունները, այսինքն՝ նրա դիրքորոշումը, արժեքները, համոզվածությունը, շարժառիթները, ճանաչողական ձևերը և անհատի տիպը, որոնք նպաստում են անձի անհատականացմանը: Թվարկված գործոնները ներառում են.

1. *դիրքորոշում,* այսինքն՝ լեզուն օգտագործողների/սովորողների այնպիսի աստիճաններ, ինչպես օրինակ՝
  - պատրաստականություն: Սա վերաբերում է որևէ մեկի՝ սեփական մշակույթի մասին ունեցած տեսակետին և մշակույթի արժեքային համակարգին,
2. *շարժառիթներ.*
  - ներքին/արտաքին,
  - մասնակի/ամբողջական,
  - հաղորդակցման շարժառիթ, հաղորդակցման անհրաժեշտություն,
3. *արժեքներ,* օր.՝ բարոյագիտական/ethical/ և բարոյական/moral/,
4. *հավատ/համոզվածություն,* օր.՝ կրոնական, գաղափարախոսական, փիլիսոփայական,
5. *ճանաչողական ձևեր,* օր. համամետ/տարամետ, վերլուծական, համադրական

## 6. անհատական գործոններ

- շատախոսություն/լռակյացություն,
- համարձակություն/ամաչկոտություն,
- լավատեսություն/հոռետեսություն,
- ներքուստ / արտաքուստ,
- փոխազդեցություն/հակազդեցություն,
- ինքնաքննադատ/անպատժելի անձ,
- երկյուղի/շփոթության բացակայություն,
- համառություն/զիջողականություն,
- անկեղծություն/կեղծավորություն,
- ինքնաբերականություն(spontaneity)/ինքնադաստիարակում,
- կարողություն(intelligence),
- բժախնդրություն/անփութություն,
- հիշելու ընդունակություն,
- աշխատասիրություն/ծուլություն,
- փառասիրություն/անփառասեր,
- ինքնագիտակցումից զուրկ,
- համոզվածության բացակայություն,
- ինքնավստահության բացակայություն և այլն:

Վերոհիշյալ դիրքորոշումները և անհատական գործոնները մեծապես ազդում են լեզուն գործածողների/սովորողների պահվածքի վրա հաղորդակցման ժամանակ, ինչպես նաև նրանց սովորելու ունակության վրա: Որոշակի դիրքորոշում և գիտակցություն ունեցող «Միջմշակութային անհատի» զարգացումը կրթական շատ կարևոր նպատակներից է: Բարոյագիտական և մանկավարժական վիճելի կարևոր հարցեր են բարձրացվել.

- կարո՞ղ է հատուկ կրթական նպատակ լինել այն աստիճանը, որին պիտի հասնի անհատի զարգացումը,
- ինչպե՞ս է մշակութային կապը/relativism/ համաձայնեցվում բարոյագիտական /ethical/ և բարոյական/moral/ միասնության /integrity/ հետ,
- անհատական ո՞ր գործոններն են ա/խթանում, բ/խտչընդոտում օտար կամ երկրորդ լեզու սովորելուն և դրան տիրապետելուն,
- ինչպե՞ս կարելի է օգնել սովորողներին, որպեսզի նրանք օգտագործեն ուժերը և հաղթահարեն թուլությունները,
- ինչպե՞ս կարելի է յուրաքանչյուր անհատի բնավորության տարբեր գծերը համատեղել կրթական համակարգերի կողմից պարտադրվող չափանիշների հետ:

### 4.7.1.4. Սովորելու ունակություն /savoir-apprendre/

Սա հնարավորություն է տալիս սովորողներին նոր լեզու սովորելիս ավելի ազատ ընտրություն կատարելու և իր հնարավորություններն ավելի լավ օգտագործելու: Այն ունի մի քանի բաղադրիչներ.

- 4.7.1.4.1. լեզվական և հաղորդակցման կարողություն,
- 4.7.1.4.2. գլխավոր հնչյունաբանական հմտություններ,
- 4.7.1.4.3. սովորելու ունակություն,
- 4.7.1.4.4. էվրիստիկ/heuristic/ հմտություն:

#### 4.7.1.4.1. Լեզվական և հաղորդակցման կարողություն

Լեզվի իմացությունը և նրա կիրառումը հիմնվում են որոշակի սկզբունքների վրա: Այդ սկզբունքները հասկանալու ու դրանց տիրապետելու համար պետք է ունենալ լեզվական հատուկ զգացողություն: Վերջինս սովորողների մոտ արդեն ձևավորած լեզվաբանական համակարգի հետ միասին օգնում է ավելի հեշտությամբ սովորել և կիրառել լեզուն:

#### 4.7.1.4.2. Գլխավոր հնչյունաբանական ունակություն և հմտություն

Շատերը, հատկապես հասուն ուսանողները, սովորելու ընթացքում կհայտնաբերեն նոր լեզվով խոսելու իրենց ունակությունները, որոնց հիմքում ընկած են՝

- արտասովոր հնչյունները և վանկաչափական/առոգանության/ ձևերը տարբերակելու և դրանք մշակելու ունակությունը,
- հնչյունների արտասովոր հաջորդականությունն ընկալելու և կապակցելու ունակությունը,
- ունկնդրելիս ձայների շարունակական հոսքը միավորելու, հնչակարգային տարրերի բազմիմաստ կառուցվածք ունեցող շարան դարձնելու ունակությունը,
- նոր լեզվին համապատասխանող հնչյուններն ընկալելու և մշակման գործընթացին լիակատար տիրապետելու ունակությունը:

Այս գլխավոր հնչյունաբանական հմտությունները տարբերվում են որևէ լեզվով արտահայտվելու ունակությունից:

#### 4.7.1.4.3. Սովորելու ունակություն

- Սովորելու հնարավորություններն ուսման ընթացքում արդյունավետ օգտագործելու ունակություն.
  - տրված տեղեկատվությանը ուշադրություն դարձնելը,
  - վարժությունների համակարգի /դասարանային աշխատանք/ նպատակի ըմբռնումը,
  - զույգերով և խմբային աշխատանքին արդյունավետ մասնակցելը,
  - լեզվի արագ ուսուցումը և հաճախակի գործածելի դարձնելը,
- անհատական ուսուցման համար մատչելի նյութեր օգտագործելու ունակություն,
- ինքնուսուցման համար նյութեր կազմելու և օգտագործելու ունակություն,
- ընկալելու, վերլուծելու և էվրիստիկ հմտությունների մշակում, ընթացքում ուղղակիորեն հետևելով և մասնակցելով հաղորդակցական իրավիճակներին. արդյունավետ սովորելու ունակություն (և՛ լեզվաբանորեն, և՛ հասարակական-մշակութային),
- յուրաքանչյուր սովորողի առավելություններն ու թուլություններն իմանալով՝ նրանց կարիքներն ու նպատակները անհատականացնելու, առանձին համապատասխան ռազմավարություններ և գործողություններ մշակելու ունակություն:

#### 4.7.1.4.4. Էվրիստիկ/heuristic/ հմտություններ

Վերնագիրը ներառում է հետևյալ ունակությունները.

- նոր երևույթին /նոր լեզու, նոր մարդիկ, վարվեցողություն, նոր ուղիներ և այլն/ սովորողի հարմարվելու և հատուկ ուսուցման ընթացքում այլ կարողություններ գործածելու ունակությունը /օր. այն դեպքի նշանակությունն ընթացելիս, որն ուսումնասիրվում, վերլուծվում է, և որից հետևություն է արվում ու պահվում հիշողության մեջ և այլն/,
- սովորողի՝ նպատակային լեզուն օգտագործելու, այսինքն՝ նոր ինֆորմացիան գտնելու, հասկանալու և, եթե անհրաժեշտ է, հաղորդելու ունակությունը /հատկապես ինտերնետի և համակարգչային այլ «տվյալների բանկերի» օգտագործման ժամանակ, ինչպես նաև հատուկ ոլորտներում),
- նոր տեխնոլոգիաների /օր. «տվյալների բանկում» տեղեկատվության, տեքստերի և այլնի որոնում/ օգտագործման ունակություն:

#### 4.7.2. Լեզվական հաղորդակցական հմտությունները

Հաղորդակցման նպատակներն իրականացնելու համար կիրառողները/սովորողները գործածում են վերոհիշյալ հիմնական ունակությունները՝ զուգակցված յուրահատուկ հաղորդակցական հմտությունների հետ: Հաղորդակցական կարողությունները բաղկացած են հետևյալ մասերից.

- լեզվաբանական հմտություն,
- հանրալեզվաբանական հմտություն,
- պրագմատիկ /կիրառական/ հմտություն:

##### 4.7.2.1. Լեզվաբանական հմտություն

Սա օրինաչափ միջոցների իմացությունն է և դրանց օգտագործման ունակությունը, որոնցով հնարավոր է կազմել ու ձևակերպել իմաստալից հաղորդագրություններ: Ներկայումս լեզվաբանական հմտությունների վերաբերյալ չկա մի հիմնական տեսություն, որը կարգավորի ընդհանուր միասնությունը: Ստորև տրված սխեման, իբրև տեսություն ծառայելու նպատակ չունի: Այն ներկայացնում է միայն դասակարգված գործոններ, առաջարկում է մի քանի չափանիշներ ու կարգեր, որոնք օգտակար կլինեն լեզվաբանական իմաստի նկարագրման համար: Այստեղ մենք տարբերում ենք՝

- 4.7.2.1.1. բառապաշարային հմտություն,
- 4.7.2.1.2. քերականական հմտություն,
- 4.7.2.1.3. շարահյուսական հմտություն,
- 4.7.2.1.4. հնչյունաբանական հմտություն:

##### 4.7.2.1.1. Բառապաշարային հմտություն

- Լեզվի բառապաշարի իմացությունն է և դրա օգտագործման ունակությունը: Այն բաղկացած է ա/ բառային տարրերից  
բ/ քերականական տարրերից:

ա/ բառային տարրերն են.

ա.1/ տարբեր բառերից կազմված կայուն արտահայտությունները, որոնք օգտագործվում և ուսուցանվում են որպես ամբողջություններ,



ա.2/ առանձին բառային ձևեր, որոնց յուրահատուկ կառուցվածքը կարող է ունենալ մի քանի հստակ իմաստներ, օրինակ՝  
tank բառը նշանակում է 1. բաք, ցիստեռն,  
2. տանկ:

ա.1/ կայուն արտահայտությունները ներառում են՝

- իմաստալից արտահայտություններ և կառուցվածքներ, որոնք հաճախ օգտագործվում են որպես՝
  - \* լեզվի գործուն նմուշներ /exponent/ /տես 4.7.2.3.2/, ինչպես, օրինակ, ողջույնը - How do you do? Good morning! և այլն,
  - \* ասացվածքներ և այլն (տես 4.7.2.2.3)
  - \* պահպանված/reluct/ հնարանություններ, օր. Be off with you!
- դարձվածքները, որոնք
  - \* իմաստաբանորեն աղոտ, ակտիվ գործածությունից դուրս մղված փոխաբերություններ են, օր. He kicked the bucket. /=Նա ձգել է ոտքերը: Այսինքն՝ Նա մահացել է/:  
It's a long shot (=unlikely to succeed) (=անհաջողակ լինել)  
He drove hell for leather ( i.e. very fast )(այսինքն՝ շատ արագ)
  - \* սաստկացնող արտահայտություններ են, օրինակ «ձյան նման սպիտակ/սավան»: Դրանց գործածությունը հաճախ խոսքաշարային և ոճական սահմանափակումներ ունի:
- կայուն արտահայտություններ, որոնք ուսուցանվում և գործածվում են որպես չվերլուծվող ամբողջություններ: Սրա մեջ բառերը կամ դարձվածքները ստացել են իմաստալից նախադասության տեսք, օրինակ՝ 'Please, may I have .....':
- այլ կայուն արտահայտություններ.
  - \* բառակապակցական բայեր, օրինակ to put up with, to make do(with),
  - \* բաղադրյալ նախդիրներ, օրինակ՝ in front of
- կայուն բառակապակցություններ. բաղկացած են կանոնավորապես միասին օգտագործվող բառերից, օրինակ՝ 'to make a speech/mistake'.

ա.2/ առանձին բառային ձևերի մեջ մտնում են խոսքի մասերը՝ գոյական, բայ, ածական, մակբայ, սակայն այս կատեգորիայի մեջ կարող են մտնել բառային խմբեր, ինչպես օրինակ՝ շաբաթվա օրերը, տարվա ամիսները, քաջի և չափի միավորները և այլն: Այլ բառային խմբերը կարող են նաև ստեղծվել քերականական և իմաստաբանական նպատակներով /տես ստորև/:

բ/ Քերականական տարրերն են closed word classes, օրինակ՝ (անգլերենում)

հոդեր (a, the),

չափ ու քանակի մակբայներ (some, all, many և այլն),

ցուցական դերանուններ (this, that, these, those),

անձնական դերանուններ (I, we, he, it, me, you և այլն),

հարցական և հարաբերական դերանուններ (who, what, which, where, how և այլն),

ստացական դերանուններ (my, your, his, her, its և այլն),

նախդիրներ (in, at, by, with, of և այլն),

օժանդակ բայեր (be, do, have, modal),

կապեր (and, but, if, although),

անփոփոխ մասնիկներ (օր.գերմ-ում՝ ja, wohl, aber, doch և այլն):

## **Բառերի ընտրություն**

Տեքստերի ձեռնարկ և ստուգողական նյութեր կազմողները պետք է ներառվող բառերի հատուկ ընտրություն կատարեն: Ինստիտուտի ուսումնական ծրագիր կազմողները հարկադրված չեն նույն կերպ վարվելու, բայց հնարավոր է՝ պարզ և իրար հաջորդող ուղեցույցներ/guidelines/ պատրաստելու ցանկություն ունենան: Կան ընտրության մի շարք հնարավորություններ.

- ընտրել թեմատիկ ոլորտներում գլխավոր /key/ բառերը, որոնք անհրաժեշտ են սովորողի պահանջներին համապատասխանող հաղորդակցական խնդիրներ իրականացնելու համար,
- հետևել վիճակագրական սկզբունքներին՝ բազմաթիվ գլխավոր բառերից ընտրելով առավել հաճախ գործածվողները,
- ընտրել տեքստեր գրավոր և բանավոր խոսքի համար և սովորեցնել անկախ այն բանից, թե ինչ բառեր են դրանք պարունակում,
- նախապես չծրագրել բառապաշարի զարգացումը, բայց թույլ տալ, որ այն զարգանա բնականոն, ըստ սովորողի պահանջի, երբ նա ներգրավվում է խոսակցությունների մեջ:

### **4.7.2.1.2. Քերականական հմտություն**

Սա լեզվի քերականական ռեսուրսների իմացությունն է և դրանց գործածության ունակությունը: Լեզվի քերականությունը մի համակարգ է, որի մեջ խմբավորվում են իմաստով նույն կարգին պատկանող տարրերը: Քերականական հմտությունը ունակություն է, որը, վերոհիշյալ սկզբունքների համաձայն, օգնում է ճիշտ կազմված բառակապակցություններն ու նախադասությունները ներկայացնելու և ճանաչելու ժամանակ հասկանալ և արտահայտել իմաստը:

Ըստ այս դատողության՝ ցանկացած լեզվի քերականություն բավականին բարդ է և հեռու վերջնականապես ու լիովին մշակված լինելուց: Նախադասության մեջ բառերի շարադասության բազմաթիվ այլ/մրցակից տեսություններ և մոդելներ կան:

Քերականական կառուցվածքի տեսակները կապված են ստորև թվարկված միավորների ու երևույթների հետ.

- տարրեր - հնչույթներ
  - ձևույթներ-արմատներ և ածանցներ.
  - բառեր.
- կարգեր - թիվ, պատճառ, սեռ.
  - կոնկրետ/վերացական, հաշվելի/անհաշվելի.
    - (ան) անցողական բայեր, ներգործական/կրավորական սեռ.
  - անցյալ / ներկա / ապառնի ժամանակներ.
    - սաստկացնող, /անցյալ անկատար/, վաղակատար ձևեր.
- կարգեր - խոնարհում.
  - հոլովում.
  - խոսքի մասեր՝ գոյական, բայ, ածական, մակբայ
  - խոսքի մասեր /քերականական տարրեր. տես 4.7.2.1.1./p//
- կառույցներ - բարդ և բաղադրյալ բառեր
  - բառակապակցություններ (գոյականից, բայից և այլն)
    - նախադասություններ /գլխավոր, երկրորդական, համադասական/

- նախադասություն (պարզ, բաղադրյալ, բարդ)

• գործընթացներ /նկարագրական/

- գոյականացում.

- ածանցում.

- տարարմատություն/suppletion/.

- ձայնավորների հերթագայություն(աբլատու).

- բառերի շարադասության փոփոխում.

- փոխակերպում.

• հարաբերություններ, - խնդրառություն.

- համաձայնություն.

- արժեքայնություն/վալենտականություն/ և այլն:

Ձևաբանության և շարահյուսության միջև ավանդաբար տարբերություն կա: Ձևաբանությունը գործ ունի բառերի ներքին կառուցվածքի հետ: Բառերը կարող են տարրալուծվել ձևույթների և դասակարգվել որպես՝

• արմատներ կամ բառահիմքեր,

• ածանցներ /նախաածանցներ, վերջածանցներ, միջնածանցներ/, որոնց մեջ մտնում են - բառ կազմող ածանցներ (օր. re-, un-, -ly, -ness),

- թեքման ածանցներ (օր. s, -ed, -ing)

### Բառակազմություն

Բառերը բաժանվում են հետևյալ տեսակների.

- պարզ բառեր (միայն արմատ, օր. six, tree, break),

- ածանցավոր բառեր (արմատ+ածանց, օր. sixes, unbrokenly),

- բարդ բառեր (մեկից ավելի արմատ ունեցող, օր. sixpence, breakdown, oak-tree, evening dress):

Ձևաբանությունը գործ ունի նաև բառերի ձևերի փոփոխության հետ.

• ձայնավորի փոփոխություն (sing/sang/sung, mouse/mice)

• բաղաձայնի փոփոխություն (lend/lent)

• անկանոն ձևեր (bring/brought, catch/caught)

• տարարմատություն (go/went)

• զրո ձևեր (sheep/sheep, cut/cut/cut):

Ձևահնչյունաբանությունը /morphophonology/ ուսումնասիրում է ձևույթների փոփոխությունները՝ հնչյունաբանական պայմաններից ելնելով (օր. անգլերենում՝ s/z/iz - walks, lies, rises; t/d/id - laughed, cried, shouted բառերում) և մյուս դեպքում՝ հնչյունական փոփոխությունները՝ ձևաբանական պայմաններից ելնելով (օր. i:/e - creep/crept, mean/meant, weep/wept բառերում):

Շարահյուսությունը բառերի կապակցությունն է նախադասության մեջ ըստ կատեգորիաների, տարրերի, կարգերի, կառուցվածքների, գործողությունների և հարաբերությունների: Երբ հասուն մարդը խոսում է մայրենի լեզվով, նրա շարահյուսությունը բավականին բարդ է և չգիտակցված: Միտքն արտահայտելիս նախադասություններ կազմելու ունակությունը հաղորդակցական հմտության/կարողության/ հիմնական բաղադրիչն է:

#### **4.7.2.1.3. Շարահյուսական հմտություններ**

Այս գլխում խոսքն այն մասին է, թե սովորողն ինչպես է վարվում խոսք կառուցելիս:

Բառապաշարային շարահյուսությունը ներառում է բառիմաստին վերաբերող հարցեր.

- բառի համապատասխանեցումը հիմնական խոսքաշարին,
  - ծանոթագրություն.
  - հավելյալ իմաստ.
  - հիմնական առանձնահատուկ իմաստի մեկնաբանություն.
- միջբառային հարաբերություններ,
  - հոմանիշ/հականիշ.
  - բառակապակցություն/collocation/.
  - մասնակի-ամբողջական փոխհարաբերություններ.
  - վերլուծություն ըստ բաղադրիչների.
  - թարգմանության համարժեքություն:

Քերականական շարահյուսությունը կապվում է քերականական տարրերի, կարգերի, կառուցվածքների և գործընթացների(տես 4.7.2.1.2) նշանակությունների հետ:

Պրագմատիկ շարահյուսությունը կապվում է տրամաբանական հարաբերությունների /կապերի/ հետ, ինչպես օրինակ եզրահանգումներ, կանխատեսումներ, ենթադրություններ և այլն:

Իմաստին վերաբերող հարցերը կենտրոնացել են հաղորդակցության մեջ և շատ անգամ քննարկվել այս աշխատությունում:

#### **4.7.2.1.4. Հնչյունաբանական հմտություն**

Սա ստորև թվարկվածները ճանաչելու և արտահայտելու հմտություն է:

- լեզվի ձայնային միավոր /հնչույթներ/ և նրանց իրացումը որոշակի խոսքաշարերում /allophones-հնչյուններ/,
- հնչույթները բնութագրող հնչյունաբանական առանձնահատկություններ /արտասանություն, ձայնավորի կլորացում, ռնգայնացում, պայթյուն/,
- բառերի հնչյունաբանական բաղադրություն /վանկային կառուցվածք, հնչույթների հերթականություն, բառի շեշտ, բառի հնչերանգ/,
- նախադասության հնչյունական համակարգ /վանկաչափություն/,
  - նախադասության շեշտն ու ռիթմը,
  - հնչերանգ,
- հնչյունաբանական փոխարկում /ձևի կամ վիճակի փոփոխություն/,
  - ձայնավորի փոփոխություն,
  - ուժեղ ու թույլ ձևեր,
  - հնչյունների առնմանում,
  - ձայնավորի հապավում /երբ հաջորդ բառը սկսվում է նույն ձայնավորով/:

#### **4.7.2.2. Հանրալեզվաբանական հմտություն**

Հանրալեզվաբանական հմտությունը հաղորդակցական հմտության բաղադրիչ մասն է և առնչվում է հասարակական-մշակութային հմտության լեզվական ոլորտի հետ, որի մասին խոսվել է վերևում(բաժին՝ 4.7.1.1/4.7.1.2): Քանի որ լեզուն հասարակական երևույթ է, նրա մասին կարելի է խոսել այս բաժնում /օր.՝ գաղափարական կարգերի բառապաշարը, որն աշխարհի մասին գիտելիքների բաղադրիչ մասն է, լեզվական գործառույթների իրացումը/: Այստեղ քննարկված ոլորտներն են.

- 4.7.2.2.1. հասարակական հարաբերությունների նշաններ.
- 4.7.2.2.2. քաղաքավարության, բարեկրթության սովորույթներ.
- 4.7.2.2.3. ժողովրդական իմաստուն արտահայտություններ.
- 4.7.2.2.4. ռեզիստրի տարբերություններ.
- 4.7.2.2.5. բարբառ և առոգանություն.

#### 4.7.2.2.1. Հասարակական հարաբերությունների նշաններ

Դրանք, իհարկե, տարբեր լեզուներում և մշակույթներում տարբեր են: Դա կապված է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են օրինակ՝

ա/ հարաբերական կարգավիճակը,

բ/ կապերի սահմանափակությունը,

գ/ խոսակցության/դատողությունների ռեզիստրը և այլն:

Ստորև բերված անգլերեն օրինակները բոլոր լեզուների համար կիրառելի չեն, և

հնարավոր է՝ ունենան կամ չունենան իրենց համարժեքներն այլ լեզուներում.

- ողջույնի ձևերի օգտագործումն ու ընտրությունը

- հանդիպելիս, օր.՝ Hello! Good morning!
- ծանոթանալիս, օր.՝ How do you do!
- հրաժեշտ տալիս, օր.՝ Good-bye.....See you later.

- դիմելաձևերի օգտագործումն ու ընտրությունը

հնացած, օր.՝ My Lord, Your Grace

պաշտոնական օր.՝ Sir, Madam, Miss

- Mr., Mrs., Miss. Ms. + անուն, ազգանունը

Dr., Professor ( + անուն, ազգանունը )

խոսակցական օր.՝ միայն անունը - John!, Susan!

առանց դիմելաձևի

մտերմիկ օր.՝ dear, darling, ժողովրդական- mate, love

հրամայական օր.՝ միայն անունը - Smith! You (there)!

վիրավորական, օր. you stupid idiot (հաճախ քնքուշ)

- սովորույթների turntaking

- լրացուցիչ (եղանակավորող) բառերի օգտագործումն ու ընտրությունը, օրինակ՝ Dear, dear!, My God!, Bloody Hell և այլն:

#### 4.7.2.2.2. Քաղաքավարական սովորույթներ

Քաղաքավարական սովորույթները «համատեղ սկզբունքի» (տես 4.7.2.3.1) ուղղակի կիրառումից հրաժարվելու համար անհրաժեշտ ամենակարևոր բացատրություններից են: Նրանք տարբեր են և միջէթնիկական տարածայնությունների մշտական աղբյուր:

1. Դրական քաղաքավարություն են՝

- անձի վիճակի նկատմամբ հետաքրքրության ցուցաբերելը և այլն,
- փորձի փոխանակումը, ‘troubles talk’, այսինքն՝ հոգսերի, անհանգստությունների, մտահոգությունների մասին խոսակցությունը և այլն,
- հիացմունք, քնքշություն, երախտագիտություն արտահայտելը և այլն:

2. Բացասական քաղաքավարություն են՝

- դեմքի սպառնացող արտահայտությունից խուսափելը (դրզմատիզմ, ուղղակի կարգադրություններ և այլն),
- սպառնացող դիմագծերի համար ափսոսանք արտահայտելը, ներողության խնդրելը(ուղղում, հերքում, արգելում և այլն),
- արգելքներ օգտագործելը և այլն:

3. „ please”, „ thank you” բառերի տեղին օգտագործում:
4. Անքաղաքավարություն (քաղաքավարության սովորույթների միտումնավոր արհամարում) են՝
  - կոպտությունը,
  - արհամարհանք, ատելություն արտահայտելը,
  - խիստ դժգոհությունը և հանդիմանությունը /նկատողություն/,
  - զայրույթ, անհամբերություն արտահայտելը,
  - առավելությունը /գերազանցությունը/ ցույց տալը:

#### 4.7.2.2.3. Ժողովրդական իմաստուն արտահայտություններ

Այս կայուն ձևակերպումները, որոնք և՛ միավորում, և՛ անբացնում են հասարակական դիրքերը, կարևոր ներդրում են ժողովրդի մշակույթի մեջ.

- ասացվածքներ, օր. ‘A stitch in time saves nine.’  
«Այսօրվա գործը վաղվան մի թող:»,
- դարձվածքներ, օր. ‘A sprat to catch a mackerel.’  
«Փոքր բան զոհաբերելով մեծ շահ կստանաս:»,
- արտահայտում՝ հանդվածության, օր. - շուտասելուկներ  
‘Fine before seven, rain by eleven.’  
մտքերի, օր. - շաբլոն դարձվածքներ  
‘It takes all sorts to make a world.’  
«Աշխարհում ամեն տեսակ մարդ կա:»,  
բառիմաստների, օր. ‘It’s not cricket.’

«Կանոնի համաձայն չէ:»

Այժմ հաճախ նույն գործառույթներն ունեն ժայռերի վրա արված քանդակները /Graffiti/, կարգախոսները, հեռուստացույցով լսած դարձվածքները, աշխատավայրի հայտարարությունները, ազդագրերը:

#### 4.7.2.2.4. Ռեգիստրի տարբերություններ

- հնացած, օր. ‘Pray silence for His Worship the Mayor!’ «Լռություն ի հարգանս քաղաքագլխի»,
- պաշտոնական, օր. ‘May we now come to order, please!’ «Կարգ պաշտպանեք խնդրում են:»,
- չեզոք, օր. ‘Shall we begin?’ «Սկսե՞նք»,
- խոսակցական, օր. ‘Right. What about making a start?’ «Լավ, ինչ եք ասում, չսկսե՞նք:»,
- մտերմական, օր. ‘O.K. Let’s get going!’ «Շատ լավ, գնացինք»,
- ընկերական, օր. ‘Ready dear?’ «Պատրա՞ստ ես սիրելիս:»:

#### 4.7.2.2.5. Բարբառ և առոգանություն

Հանրալեզվաբանական հնտությունն ընդգրկում է նաև լեզվաբանական նշանները ճանաչելու ունակությունը: Դրանք են՝

- սոցիալական խավ,
  - ռեգիոնալ ծագում,
  - ազգային ծագում,
  - մասնագիտական խմբեր:
- Այդ նշաններն ընդգրկում են՝

բառապաշարը օր. շոտլանդերեն ‘wee’ որպես ‘small’  
 քերականությունը օր. Կոկնիի/բնիկ լոնդոնցի/ ‘I ain’t seen nothing’  
 որպես ‘I haven’t seen anything’,  
 հնչակարգությունը օր. Նյու-Յորքյան ‘boid’ որպես ‘bird’,  
 ձայնային առանձնահատկություններ (ռիթմ, ձայնի բարձրություն և այլն)  
 համեմատական լեզվաբանություն, ժեստերի լեզու:

#### 4.7.2.3. Գործաբանական /պրագմատիկ/ հմտություններ

- 4.7.2.3.1. Բանավոր կամ գրավոր խոսքի հմտություն,
- 4.7.2.3.2. Գործառնական հմտություն,
- 4.7.2.3.3. Սխեմատիկ կառուցվածքի կարողություն:

Գործաբանական հմտություններն առնչություն ունեն լեզու գործածողի/սովորողի գիտելիքների հետ, որոնց համաձայն հաղորդում է խոսքը՝  
 ա/ կազմակերպում, կառուցում և մշակում է (բանավոր/գրավոր խոսքի հմտություն),  
 բ/ օգտագործում են հաղորդակցական գործառույթները կատարելու համար (գործառնական հմտություն),  
 գ/ հերթականորեն դասավորվում են ըստ փոխներգործման և կատարման սխեմաների (կառուցվածքային հմտություն):

##### 4.7.2.3.1. Բանավոր կամ գրավոր խոսքի հմտություն

Սա գիտելիք է և ունակություն նախադասությունների ու նախադասության բաղկացուցիչ մասերի կանոնավորման, ստուգման վերաբերյալ, նկատի ունենալով՝

- թեման / ուղղվածությունը
- տրվածը / նորը
- ‘սովորական’ հերթականությամբ դասավորումը, օրինակ ժամանակային առումով. - He fell over (and) I hit him.  
 - I hit him (and) he fell over.
- պատճառը/արդյունքը (տեղերը փոփոխելի) - prices are rising  
 - people want higher wages.
- բանավոր/գրավոր խոսք կառուցելու և տիրապետելու ունակությունը,  
 - թեմատիկ կառուցվածքը,  
 - հաջորդականությունն ու կապակցումը,  
 - տրամաբանական հաջորդականությունը,  
 - ոճն ու ռեգիստրը,  
 - ճարտասանական գործունեությունը (ազդեցություն, արդյունավետություն),
- «համատեղ սկզբունքներ» (Grice) - “երբ խոսքը ծագում է, կազմեցեք այն այնպես, ինչպես պահանջվում է, զրույցի նպատակը և ուղղությունը փոփոխեցեք ըստ այն թեմայի, որի մեջ դուք ներգրավվել եք, հետևյալ սկզբունքների ուսումնասիրման ժամանակ.  
 - որակ (փորձիր դարձնել խոսքը ճիշտ),  
 - քանակ (դարձրու խոսքդ ինչպես բովանդակալից, այնպես էլ անհրաժեշտ, բայց ոչ ավելի),  
 - պատշաճություն (մի ասա այն, ինչը տեղին չէ)  
 - վարվելակերպ (եղիր հակիրճ և կարգապահ, խուսափիր անծանոթությունից /անիմացությունից/ և անորոշությունից) ” :

Պարզ և ազդեցիկ հաղորդակցության համար չափանիշից շեղումը կատարվում է հատուկ նպատակով, որոշ չափով դրան ծանոթանալու անհնարինությունից:

- Տեքստի կառուցումը հասարակության մեջ պայմանականությունների ձևավորման գիտելիք է, որը վերաբերում է, օրինակ, թե ինչպես է տեղեկատվությունը ձևավորվել տարբեր մակրոֆունկցիաների իրացման ժամանակ(նկարագրություն, պատմություն, մեկնաբանություն և այլն),
- ինչպես են պատմվել պատմվածքները, անեկդոտները, կատակները և այլն,
- ինչպես է փաստը արձանագրվել (օրենքով, քննարկումով և այլն),
- ինչպես են գրավոր տեքստերը (ակնարկ, պաշտոնական նամակներ և այլն) շարադրված, նշված և հերթականացված:

#### 4.7.2.3.2. Գործառնական հմտություններ

Այս բաղկացուցիչ մասն առնչվում է հաղորդակցության մեջ որոշակի գործառնական նպատակների համար բանավոր խոսքի և գրավոր տեքստերի օգտագործման հետ (տես 4.2):

1. Մակրոֆունկցիաները բանավոր խոսքի և գրավոր տեքստի օգտագործման այն կատեգորիաներն են, որոնք վերաբերում են նախադասությունների հերթականությանը, օրինակ՝
  - պատկերում,
  - պատմություն,
  - մեկնաբանություն,
  - նկարագրություն,
  - դատողություններ,
  - բացատրություն,
  - ցուցադրում,
  - հրահանգներ,
  - վիճաբանություն/փաստարկում/,
  - համոզում:
2. Միկրոֆունկցիաները կատեգորիաներ են առանձին հայտարարությունների (սովորաբար կարճ) գործառնական օգտագործման համար, որոնք սովորաբար հանդես են գալիս որպես turn փոխգործողության մեջ: Միկրոֆունկցիաները ‘Threshold Level 1990, գլուխ 5-ում տրված են որոշ դասակարգմամբ(բայց ոչ սպառիչ).
  1. փաստացի ինֆորմացիայի հաղորդում և որոնում՝
    - ճանաչում
    - տեղեկացում/ծանուցում/
    - ուղղում, ճշտում
    - հարցում
    - պատասխան
  2. դիրքորոշումների արտահայտում և հայտնաբերում՝
    - փաստացի (համաձայնություն/անհամաձայնություն).
    - գիտելիք (իմացություն/անտեղյակություն, մտաբերում, մոռացում հավանականություն, վստահություն).
    - եղանակավորում /modality/ (պարտավորություններ, անհրաժեշտություն, իրավագործություն, թույլտվություն).



- ցանկություն (կարիք, պահանջ, մտադրություն, արտոնություն).
  - զգացմունքներ (բավականություն/տհաճություն, համակրություն/ հակակրություն, գոհացում, հետաքրքրություն, զարմանք, հույս, հիասթափություն, երկյուղ, անհանգստություն, երախտագիտություն).
  - բարքեր (ներողության հայցում, հավանություն տալ, ավստասանք, համակրանք).
3. համոզմունք`
    - ենթադրություններ, պահանջներ, զգուշացումներ, խորհուրդ, աջակցություն, օգնության հայցում, հրավերքներ, առաջարկություն:
  4. հանրայնացում /socialising/`
    - ուշադրության գրավում, դիմում, ողջույն, ծանոթացում, հրաժեշտ, կենացի առաջարկում /toasting/:
  5. դատողությունների կառուցում /զրույցի ձևավորում/`
    - (28 միկրոֆունկցիաները, բացում, անդրադարձում, փակում և այլն):
  6. Հաղորդակցության վերականգնում`
    - (16 միկրոֆունկցիաները):

#### 4.7.2.3.3. Սխեմատիկ կառուցվածքի /պլանի/ կարողություն

Այն գիտելիք է և սխեմաների (սոցիալական փոխազդեցության ձևեր) օգտագործման ունակություն, որոնք վերլուծում են հաղորդակցությունը, ինչպես օրինակ բառային/խոսքային ձևերը: Փոխազդող հաղորդակցական գործունեությունները, որոնք շարադրվել են 4.4.3-ում, ներառում են գործողությունների նախագծված հերթականություններն ըստ հաջորդական մասերի: Չնայած նրանց պարզությանը նրանք կազմում են զույգեր, ինչպես օրինակ`

- հարց - պատասխան
- պնդում, կարծիք- համաձայնություն/անհամաձայնություն
- պահանջ/առաջարկ - հավանություն տալ/չտալ
- ողջունում/կենացի առաջարկում - պատասխան/արձագանք

Եռյակները, որտեղ առաջին խոսողը ընդունում և արձագանքում է զրուցակցի պատասխանին, ընդհանուր են: Զույգերն ու եռյակները սովորաբար զետեղված են երկար գործարքների և փոխադարձ ներգործությունների մեջ: Օրինակ առավել բարդ նպատակային ուղղվածություն ունեցող համատեղ գործարքներում լեզուն օգտագործվում է որպես անհրաժեշտություն.

- աշխատանքային խումբ կազմելու և մասնակիցների միջև հարաբերությունների ստեղծման համար,
- ընթացիկ իրավիճակների համապատասխան առանձնահատկությունների ընդհանուր գիտելիքների ստեղծման և ընդհանուր ցուցմունքի հասնելու համար,
- համամիտ լինել, թե ինչը կարող է և պետք է փոխվի,
- ընդհանուր համաձայնության գալ այն նպատակների և գործողությունների ստեղծման համար, որոնց պետք է նրանք հանդիպեն,
- գործողությունը ավարտին հասցնելու /իրականացնելու/ պարտավորությունների համաձայնեցման համար,
- պրակտիկ գործողությունների կարգավորման համար, որոնք են`
  - ճանաչել և զբաղվել առաջացած խնդիրներով,
  - օգնությունների հաջորդականացում և կոորդինացում,
  - փոխադարձ/երկկողմանի/ օգնություն,
  - ենթանպատակների նվաճման/կատարման/ ընդունումը:

Համակարգչային շարվածքը՝ ԵՊԼՀ-ի համակարգչային կենտրոն  
/ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան/

Համակարգչային էջավորումը՝ Բ.Ս. Էլչակյան  
Ս.Վ. Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 19.04.2001թ.  
Հանձնված է տպագրության՝ 21.04.2001թ.

Տպաքանակ՝ 250